ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

2 (100). 2019



«ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ռուսաստանի Դաշնության Կառավարության Նախագահ Դմիտրի Մեդվեդևի հանդիպումը Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակներում

Չոլպոն-Ատա, 2019 թ. օգոստոսի 9

Եվրոպական խորհրդի Նախագահ Դոնալդ Տուսկի և Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը

Երևան, 2019 թ. հուլիսի 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

2 (100). **2019**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տավարածյան Գ. Վ.
(նախագահ)
Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)
Ալեքսանյան Ա. Ջ.
Ալթունյան Գ. Ռ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապերյան Վ. Վ.
Բալայան Գ. Կ.
Գասպարյան Օ. Վ.
Դավթյան Ա. Մ.
Խաչատրյան Տ. Վ.
Ղամբարյան Մ. Ա.
Մակարյան Ա. Ա.
Մարգարյան Ռ. Պ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիկյան Ա. Մ.
Մարտիրոսով Լ. Ա.
Շահնազարյան Թ. Ն.
Սիմոնյան Ս. Վ.
Սմբատյան Ն. Վ.
Վարդանյան Ա. Գ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Օհանյան Ս. Ռ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԶՈՒ-Ի ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ. Շահվերդյան, ԱՄՆ-ի Բանակի օպերատիվ կառավարման հայեցակարգի «Հաղթել բարդ աշխարհում» հիմնարար գաղափարի վերաբերյալ 7

ԿԱՊԻ ԶՈՐՔԵՐՈՒՄ

Գ. Ս. Ալեքսանյան, Կապի համակարգերի զարգացման միտումները պատերազմների բնույթի փոփոխությունների պայմաններում 18

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ա. Կ. Բաղալյան, Ադրբեջան–Իսրայել հարաբերությունների վերլուծությունը ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից 29

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գ. Է. Հարությունյան, Ռազմաարդյունաբերության ոլորտում տարածաշրջանային կլաստերների ձևավորման հիմնախնդիրները (ԵԱՏՄ տնտեսական տարածքի օրինակով) . . . 41

Ա. Գ. Դավթյան, Ռազմաարդյունաբերության ոլորտի պետական կարգավորման բարելավման ուղղությունները 54

Վ. Ռ. Պողոսյան, ՀՀ կլաստերացման ներուժի գնահատումը Շմիդտ-Բաննիկովի մոտեցմամբ 61

ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ս. Ս. Մելիքյան, ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդության դերն ու նշանակությունը հոգևոր անվտանգության ապահովման համատեքստում 74

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զ. Դ. Ասատրյան, Պարտադիր զինվորական ծառայության զինծառայողների ներանձնային գժտությունների ծագման հոգեբանական պատճառները 84

Ն. Յ. Մկրտչյան, Կարգազանցության հակում ունեցող զինծառայողների հետ տարվող աշխատանքներում առկա հիմնախնդիրները և լուծման ուղիները 91

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Կ. Ռ. Շաբոյան, Ա. Ս. Գալստյան, Վնասվածքային ցնցակաթվածի դեպքում ռազմադաշտային վիրաբուժության արդիական մոտեցումների մասին 103

Գ. Կ. Աղամյան, ՀՀ Ոստիկանության բուժվարչության պոլիկլինիկայի գործունեության որոշ հարցեր 111

Կապի որոշ ժամանակակից միջոցների մարտավարատեխնիկական բնութագրեր 119

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Ս. Չիլինգարյան, Մոլորությո՞ւն, թե՞ մոլորեցում. արձագանք Լեզվի կոմիտեի որոշմանը 120

Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան 122

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Լ. Ս. Արզումանյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, *Գ. Ե. Բաղդասարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ս. Ա. Գալստյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան,* կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր, *Բ. Ն. Հարությունյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Մ. Հարությունյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Ա. Հ. Մանթաշյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Մ. Մ. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Մ. Միրիջանյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Հ. Սիմոնյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Ս. Սիսակյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քոթանջյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գ. Վ. Տավարաձյան, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ, *Վ. Հ. Մարգարյան,* հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի կրթության և գիտության գծով տեղակալ–ԱՌՀԻ-ի պետ, *Ս. Ա. Սուջյան,* աշխարհագրական գիտությունների թեկնածու, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի պետ, *Դ. Մ. Մանասյան,* պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի պետ, *Հ. Հ. Հովհաննիսյան,* ռազմական գիտությունների թեկնածու, գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 2 (100)**. 2019**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Таварацян Г. В. (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Айвазян Л. Г., Айдинян Р. А., Алексанян А. Дж., Алтунян Г. Р., Аперян В. В.,
Балаян Г. К., Варданян А. Г., Гамбарян М. А., Гаспарян О. В., Давтян А. М.,
Макарян А. А., Маргарян Р. П., Мартикян А. М., Мартиросов Л. А.,
Оганян С. Р., Симонян С. В., Смбатян Н. В., Тер-Григорьянц Н. Г.,
Хачатрян Т. В., Шахназарян Т. Н.

СОДЕРЖАНИЕ

СТРОИТЕЛЬСТВО ВС

А. М. Шахвердян. О стержневой идее концепции оперативного управления Армии США «Победить в сложном мире» . . . . . 7 (16)*

В ВОЙСКАХ СВЯЗИ

Г. С. Алексанян. Тенденции развития систем связи в условиях изменения характера войн 18 (28)

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

А. К. Бадалян. Анализ азербайджано-израильских отношений с точки зрения национальной безопасности РА 29 (39)

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

Г. Э. Арутюнян. Проблемы формирования региональных кластеров в военно-промышленной сфере (на примере экономической территории ЕАЭС) 41 (71)

А. Г. Давтян. Направления улучшения государственного регулирования военно-промышленной сферы 54 (71)

В. Р. Погосян. Оценка кластерного потенциала РА методом Шмидта-Банникова 61 (72)

ДУХОВНАЯ БЕЗОПАСНОСТЬ

С. С. Меликян. Роль и значение Духовного предводительства ВС РА в контексте обеспечения духовной безопасности 74 (82)

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

З. Д. Асатрян. Психологические причины возникновения внутриличностных конфликтов у военнослужащих срочной службы 84 (100)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

Н. Я. Мкртчян. Проблемы в работах с военнослужащими, имеющими склонность к правонарушениям, и пути их решения 91 (101)

ВОЕННАЯ МЕДИЦИНА

К. Р. Шабоян, А. С. Галстян. О современных возможных подходах к лечению травматического шока с позиций военно-полевой хирургии 103 (116)

Г. К. Адамян. Некоторые вопросы деятельности поликлиники медицинского управления Полиции Республики Армения 111 (117)

Тактико-технические характеристики некоторых современных средств связи 119

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Д. С. Чилингарян. Заблуждение или введение в заблуждение? Отзыв на решение Комитета по языку 120

Д. С. Чилингарян и др. Словарь номера 122 (125)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

А. Г. Авакян, доктор исторических наук, профессор; *Н. У. Аракелян,* академик НАН РА; *Л. С. Арзуманян,* доктор филологических наук; *Б. Н. Арутюнян,* доктор медицинских наук, профессор; *В. М. Арутюнян,* академик НАН РА; *Г. Е. Багдасарян,* академик НАН РА; *С. А. Галстян,* доктор филологических наук, профессор; *С. Г. Галстян,* доктор медицинских наук, профессор; *Г. А. Геворкян,* академик НАН РА; *К. С. Даниелян,* доктор географических наук, кандидат биологических наук; *Г. С. Котанджян,* доктор политических наук, профессор; *А. А. Манташян,* академик НАН РА; *М. М. Маргарян,* доктор политических наук, профессор; *М. В. Маркосян,* доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян,* член-корреспондент НАН РА; *Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор; *М. М. Мириджанян,* доктор медицинских наук, профессор; *Р. А. Сафрастян,* академик НАН РА; *О. Я. Саядян,* доктор географических наук, профессор; *А. Г. Симонян,* член-корреспондент НАН РА; *А. С. Сисакян,* доктор медицинских наук, профессор; *Ю. М. Суварян,* академик НАН РА

ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:

Г. В. Таварацян, генерал-майор, начальник НИУО МО РА;

В. Г. Маргарян, доктор психологических наук, доцент, полковник, заместитель начальника НИУО МО РА по образованию и науке–начальник ИНСИ;

С. А. Суджян, кандидат географических наук, полковник запаса, начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА;

Д. М. Манасян, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований, *Г. О. Оганисян,* кандидат военных наук, полковник, старший преподаватель Центра исследований стратегического руководства и управления НИУО МО РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 2 (100)**. 2019**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Tavaratsyan G. V. (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J., Altunyan G. R., Aperyan V. V., Ayvazyan L. G., Balayan G. K., Davtyan A. M., Gasparyan O. V., Ghambaryan M. A., Idinyan R. A., Khachatryan T. V., Makaryan A. A., Margaryan R. P., Margaryan V. H., Martikyan A. M., Martirossov L. A., Ohanyan S. R., Shahnazaryan T. N., Simonyan S. V., Smbatyan N. V., Ter-Grigoryants N. G., Vardanyan A. G.*

CONTENTS

DEVELOPMENT OF THE ARMED FORCES

A. M. Shahverdyan. On the capstone idea of the US Army Operating Concept: Win in a Complex World, 2020–2040 . . . . . 7 (17)*

IN THE SIGNAL CORPS

G. S. Alexanyan. Communication systems development trends in the context of the change of warfare nature 18 (28)

REGIONAL SECURITY

A. K. Badalyan. Analysis of Azerbaijani-Israeli relations in terms of the RA national security 29 (40)

ECONOMIC SECURITY

G. E. Harutyunyan. Problems of formation of regional clusters in the military-industrial sphere (on the example of the EAEU) 41 (72)

A. G. Davtyan. Directions for improving state regulation of the military-industrial sphere 54 (73)

V. R. Poghosyan. The assessment of the RA cluster potential by Schmidt-Bannikov method 61 (73)

SPIRITUAL SECURITY

S. S. Melikyan. The role and significance of the Spiritual Leadership in the RA Armed Forces in the context of ensuring spiriual security 74 (83)

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

Z. D. Asatryan. Psychological causes of the eruption of intrapersonal conflicts among conscripts 84 (101)

* Numbers in brackets mean the page of the text in English.

N. Ya. Mkrtchyan. Problems in the works with the servicemen inclined to delinquencies, and the ways to overcome them 91 (102)

MILITARY MEDICINE

K. R. Shaboyan, A. S. Galstyan. On contemporary possible approaches to the treatment of traumatic shock from the perspective of field surgery 103 (117)

G. K. Adamyan. Some issues of the outpatient clinic activity of the Republic of Armenia's Police Medical Department 111 (118)

Performance of some up-to-date communications equipment . . . 119

MILITARY TERMINOLOGY

D. S. Chilingaryan. Misconception or misleading? Feedback to the decision of the Language Committee 120

D. S. Chilingaryan and others. Volume Dictionary 122 (127)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

A. G. Avagyan, Doctor of History, Professor; *N. H. Arakelian,* Full Member, NAS, RA; *L. S. Arzumanyan,* Doctor of Philology; *G. Y. Baghdassarian,* Full Member, NAS, RA; *K. S. Danielyan,* Doctor of Geography, PhD in Biology; *S. A. Galstyan,* Doctor of Philology, Professor; *S. G. Galstyan,* Doctor of Medical Sciences, Professor; *H. A. Gevorkian,* Full Member, NAS, RA; *B. N. Harutyunyan,* Doctor of Medical Sciences, Professor; *V. M. Haroutyounian,* Full Member, NAS, RA; *H. S. Kotanjian,* Doctor of Political Sciences, Professor; *A. H. Mantashian,* Full Member, NAS, RA; *M. M. Margaryan,* Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan,* Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan,* Corresponding Member, NAS, RA; *E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor; *R. A. Safrastyan,* Full Member, NAS, RA; *H. Y. Sayadyan,* Doctor in Geography, Professor; *A. H. Simonyan,* Corresponding Member, NAS, RA; *H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor; *Yu. M. Suvaryan,* Full Member, NAS, RA

DEFENSE-ACADEMIC COUNCIL:

G. V. Tavaratsyan, MG, Head, NDRU, MOD, RA; V. H. Margaryan, Doctor of Psychology, Associate Professor, Col, Deputy Head in Education and Research – Head, INSS, NDRU, MOD, RA; S. A. Sujyan, PhD in Geography, Col (Ret.), Head, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA; D. M. Manasyan, PhD in History, Head, Center for Regional Strategic Analyses, NDRU, MOD, RA; H. H. Hovhannisyan, PhD in Military Science, Col, Senior Lecturer, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA

ԱՄՆ-Ի ԲԱՆԱԿԻ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ «ՀԱՂԹԵԼ ԲԱՐԴ ԱՇԽԱՐՀՈՒՄ» ՀԻՄՆԱՐԱՐ ԳԱՂԱՓԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

Աշխարհն այսօր զարգանում է աննախադեպ արագ տեմպերով: Տեղեկատվական տեխնոլոգիաները, սոցիալական մեդիան էապես արագացնում են տեղեկատվության հոսքերի տարածումը: Դրան գումարվում են նաև բնակչության և, հատկապես՝ փախստականների մեծաքանակ միգրացիոն հոսքերը դեպի բարդ, ուրբանիզացված միջավայրներ: Այս ամենի հետ մեկտեղ նոր տիպի ու որակի հավանական հակառակորդները գործում են նոր մեխանիզմներով ու մեթոդներով, ավելի արդյունավետ կերպով, քան նախկինում:

Գիտության և տեխնիկայի արագացող զարգացումը հանգեցրել է ԶՈՒ-ի շինարարության որակապես նոր մակարդակի, սպառազինության ու ռազմական տեխնիկայի թռիչքային զարգացման: Տիեզերական զենքերի, հետախուզական համակարգերի, հեռահար հրթիռների կատարելագործումը, ռեակտիվ ավիացիայի և ռազմածովային ուժերի զարգացումը, խոցման գերճշգրիտ միջոցների, հետախուզական և խոցիչ անօդաչու թռչող ապարատների արագընթաց տեմպերով տարածումը, զորքերի և ուժերի կառավարման տարբեր ռադիոէլեկտրոնային միջոցների ու ավտոմատացված համակարգերի զանգվածային ներդրումը որակապես փոխել են արդի պատերազմի բնույթը, տևողությունը և բովանդակությունը, զինված պայքարի վարման եղանակները: Մասնավորապես՝ բավական է հրթիռներով կամ անօդաչու թռչող ապարատներով մի քանի գերճշգրիտ հարված հասցնել հակառակորդի կենսականորեն կարևոր օբյեկտներին, օրինակ՝ կառավարման կետերին, սննդամթերքի պահեստներին կամ ռազմամթերքի բազաներին, և պատերազմի ելքը մեծ հաշվով վճռված կլինի:

Գիտատեխնիկական զարգացումը նպաստել է պայքարի տարածմանը նաև այլ ոլորտներում՝ տեղեկութային-հոգեբանական, սոցիալ-քաղաքական, տնտեսական, տիեզերական, կիբեռտարածությունում և այլն:

Այս ամենի հետ մեկտեղ ի հայտ են եկել նոր սպառնալիքներ: Այսօր աշխարհն անհամեմատ ավելի բարդ է, և հզոր զինված ուժեր ունենալն արդեն անվտանգության միակ երաշխիքը չէ: Այնպիսի սպառնալիքներ, ինչպիսիք են, օրինակ, ահաբեկչությունը, տեղեկատվական ընդդիմամարտությունը,

կիբեռհարձակումները, կրոնական կամ գաղափարախոսական ծայրահեղականությունը, կազմակերպված հանցագործությունը, վերազգային կազմակերպությունների տնտեսական ու քաղաքական մրցավազքը էապես բարդացրել են դրանց դիմակայությունը, հանգեցրել են ծախսերի մեծացման, հսկայական ռեսուրսների վատնման:

Քանի որ խաղաղ ժամանակ ԶՈՒ-ն պետք է պատրաստվի և վարպետանա այն գործողությունների կատարման մեջ, որոնք նրանցից պահանջվելու են պատերազմի ժամանակ, աճել է ռազմական, այդ թվում՝ ԶՈՒ-ի շինարարության ճիշտ տրամաբանության ու խելամիտ պլանավորման դերը, մեծացել է ռեսուրսների ու բյուջեի արդյունավետ գնահատման և օգտագործման նշանակությունը:

Միևնույն ժամանակ, պարզ է, որ ցանկացած պետությանը, անգամ գերտերությանը դժվար կլինի միայնակ դիմակայել այս տարաբնույթ սպառնալիքներին, ուստի ԶՈՒ-ի շինարարությունը կազմակերպելիս անհրաժեշտ է ապահովել դաշնակիցների ԶՈՒ-երի հետ բարձր աստիճանի փոխգործության ու ներդաշնակության հնարավորությունը:

Ահա այս մոտեցման լավագույն օրինակն է ԱՄՆ-ի Բանակը, որի ներկայիս ռազմավարությունը կառուցված է «Հաղթել բարդ աշխարհում» հիմնարար գաղափարի շուրջ:

ԱՄՆ-ի Ցամաքային ուժերի (Բանակի) «Հաղթել բարդ աշխարհում» *(“Win in a Complex World 2020 – 2040”)* օպերատիվ հայեցակարգը (ԲՕՀ) բխեցված է նախորդ ամերիկյան հայեցակարգերից ու դոկտրիններից: Դրանք են, օրինակ, ցանցակենտրոն պատերազմների ռազմավարության շրջանակներում մշակված «էֆեկտի նպատակաուղղված օպերացիաների» *(“Effect Based Operations”)*, «Ռազմավարական միախառնման» *(“The Strategic Blending”)*, «Պարտադրող հզորության» *(“Coercive Power”)*, «Ցանցային պարսավորման» *(“Networked Swarming”)* հայեցակարգերը: ԲՕՀ-ը նաև առաջ է քաշում միացյալ ուժերով խնդիրների լուծման նկատմամբ որակապես նոր մոտեցում: Այն մշակվել է Ուկրաինայում Ռուսաստանի ձեռնարկած գործողություններին ի պատասխան և Ռուսաստանին ու Չինաստանին հռչակում է մրցակից պետություններ[1]: ԲՕՀ-ն ուրվագծում է, թե ինչպես ապագա Ցամաքային ուժերը պետք է «կանխեն հակամարտությունը, ձևավորեն անվտանգային միջավայրներ և հաղթեն պատերազմներում՝ գործելով որպես Միացյալ ուժի մաս և հանդես գալով բազմաթիվ գործընկերների հետ»[2]: Տվյալ համատեքստում կարևորվում են ներկայիս հակամարտություններում և ահաբեկչական գործողություններում թվային տեխնոլոգիաների կիրառման ծավալները, ինչն ստիպում է մշտապես արդիականացնել յուրային Զինված ուժերը՝ դրանց զինելով բարձր տեխնոլոգիաներով:

[1] Տես *Julian E. Barnes.* U.S. Army Shifts Strategy to Face New Threats. “Wall Street Journal”, 12 October 2014:

[2] Տես “The U.S. Army Operating Concept: Win in a Complex World 2020-2040” (TRADOC Pamphlet 525-3-1), 7 October 2014, P. I:

ԱՄՆ-ի ապագայի Բանակը պետք է պատրաստ լինի գործելու այնպիսի իրավիճակներում, երբ նույնիսկ սահմանափակ է ռազմական բյուջեն, իսկ ուժային կառույցները՝ կրճատված: Բանակը պետք է ունակ լինի գործելու մեծ քաղաքներում ու բնակավայրերում այնպես, որ հաջողությամբ դիմակայի հնարավոր թշնամիներին, որոնք այդտեղ կկիրառեն ինչպես պայքարի ավանդական, այնպես էլ ոչ ավանդական միջոցներ՝ քաղաքացիական բնակչությանը զանգվածայնորեն խոցելու սպառնալիքով:

Գեներալ Դևիդ Փերկինսը, որը գլխավորում էր «Հաղթել բարդ աշխարհում» հայեցակարգը մշակած Բանակի Ուսումնավարժական և հայեցակարգային մշակումների հրամանատարությունը (ԲՈՒՀԱՄշահ՝ *TRADOC*), Հայեցակարգի նախաբանում գրում է. «Բարդ աշխարհում հաղթելու համար Բանակը պետք է ի շահ Միացյալ ուժի կատարի բազմաթիվ գործառույթներ, միավորի բազմաթիվ գործընկերների ջանքերը, գործի բազմաթիվ տիրույթներում և մեր թշնամիների ու հակառակորդների առջև հարուցի բազմաթիվ երկընտրանքներ»[3]:

Բազմաթիվ գործառույթներ հասկացությունը լրացնում է «ՌԳԹ նախապատրաստում» և «անվտանգային միջավայրների ձևավորում» հասկացությունները, որոնք հանդես են գալիս որպես հիմնական գործառույթներ, որպեսզի շեշտեն Միացյալ ուժի հրամանատարների գործառույթների ապահովման ասպարեզում Բանակի խաղացած դերը օպերացիաների ամբողջ գունապնակով, ներառյալ՝ մեծամասշտաբ մարտական գործողությունները, արագընթաց տեղային հակամարտությունները, անվտանգության ուժերին ցուցաբերվող աջակցությունը, մարդասիրական օգնությունը և արձագանքումը աղետներին:

Բազմաթիվ գործընկերներ ասելով՝ գեներալ Փերկինսը նկատի ունի այն հանգամանքը, որ ամերիկյան ռազմական հզորությունը միավորական բնույթի է, քանի որ ռազմիկները և միացյալ ուժերի հրամանատարները միավորում են ցամաքային, օդային, ծովային, տիեզերական և կիբեռկարողությունները, ինչը ԱՄՆ-ի ուժերին տալիս է թշնամիների ու հակառակորդների նկատմամբ մրցակցային առավելություններ:

Բազմաթիվ տիրույթների մասին կարելի է խոսել, քանի որ ԱՄՆ-ի Բանակի օպերացիաներն ի սկզբանե իրենց բնույթով արտատիրույթային էին, այսինքն՝ դրանք իրագործվում էին նաև ցամաքային ՌԳԹ-ից դուրս:

Ռազմավարական հաղթանակի բանալին հակառակորդի առջև **բազմաթիվ երկընտրանքների** հարուցումն է, այն է՝ նրան ստիպել գործել այնպես, որ ռիսկի ենթարկի իր համար կարևոր արժեքները[4]:

ԲՈՒՀԱՄշահ-ի լրացուցիչ հրապարակած «Բանակային օպերացիաների հայեցակարգ» *(“Army Operating Concept”)* համառոտ փաստաթղթում նշվում է, թե ինչպես ապագայում ԱՄՆ-ի Ցամաքային ուժերը պետք է գործեն ռազմարշավի նպատակներն իրագործելու և ԱՄՆ-ի ազգային շահերը պաշտ-

[3] Տես նույն տեղում, էջ III:

[4] Տես նույն տեղում, էջ III-IV:

պանելու համար: Տվյալ պրակը «նկարագրում է Բանակի ներդրումը համընդհանուր միավորված օպերացիաներում *(“Global Integrated Operations”)*, որոնք «Համատեղ օպերացիաների հիմնաքարային հայեցակարգ՝ Միացյալ ուժ 2020»-ի կենտրոնական գաղափարն են»[5]:

Ըստ էության, ԲՕՀ-ը որոշարկում է Ցամաքային ուժերի այն պահանջմունքները, որոնց բավարարումն անհրաժեշտ է, որպեսզի նրանք «կարողանան ապահովել Միացյալ ուժերի պահանջած հիմնարար կարողությունները և հզորությունը տարածել ցամաքում ու ցամաքից օդային, ծովային, տիեզերական ու կիբեռ- տիրույթներում: ԲՕՀ-ը հիմնված է ապագա զինված հակամարտությունների տեսլականի վրա, որում ներառված են պաշտպանության ազգային ռազմավարությունը, առաքելությունները, ձևավորվող օպերացիոն միջավայրները, տեխնոլոգիական առաջընթացը, սպասվելիք թշնամին, սպառնալիքը և հակառակորդի հնարավորությունները»[6]: Այդպիսով՝ ԲՕՀ-ն ուղղորդում է Ցամաքային ուժերի զարգացումը՝ այն առաջնակարգ առավելությունների ու կարողությունների իրացմամբ, որոնց Բանակը պետք է տիրապետի, որպեսզի կարողանա հաջողությամբ կատարել իր առաջադրանքները՝ ուղղված քաղաքական նպատակների ու մտադրությունների իրագործմանը[7]:

Ինչպես ԲՈՒՀԱՄշԱՀ-ի հրապարակումներում նշվում է որպես ԲՕՀ-ի առանձնահատկություն, այն՝

- կարևորում է զինված հակամարտությունների մարդկային, մշակութային ու քաղաքական հետևանքները, քանի դեռ պատերազմը մնում է որպես կամքերի մրցակցություն,
- դիտարկում է պատերազմի մարտավարական, օպերատիվ և ռազմավարական մակարդակները, որովհետև հակամարտությունը չի կարող տրոհված լինել իրարից անջատ մակարդակների,
- ամերիկյան ռազմական ուժը դիտում է որպես Միացյալ ուժ, սակայն շեշտում է ռազմական օպերացիաներում Բանակի եզակի ներդրումը,
- հաղթանակի նվաճման համար Բանակի կատարած ներդրումը դիտում է որպես ԱՄՆ-ի կենսական շահերից բխող կայուն քաղաքական արդյունքների ձեռքբերում,
- շեշտում է ցամաքային զորքերի վճռորոշ դերը անվտանգային միջավայրի ձևավորման, հակամարտությունների սաստման և հաջողությունների ամրապնդման գործում,
- համարում է, որ բարդ միջավայրներում իրագործվող ապակենտրոնացված գործողությունները պահանջում են ունենալ ճկուն, արագորեն կողմնորոշվող ու հարմարվող առաջավարներ, համախմբված թիմեր և

[5] Տես “The U.S. Army Operating Concept: Win in a Complex World” (https://usacac.army.mil/sites/default/files/documents/cact/ArmyOperatingConceptSummary.pdf):

[6] Տես նույն տեղում:

[7] Տես «Оперативная концепция Армии США “Победа в сложном мире 2020-2040”». Избранные фрагменты, 31 октября 2014 г. (https://public.wikireading.ru/123625):

տոկուն զինվորներ, որոնք հավատարիմ են Բանակի պրոֆեսիոնալ վարքականոնին և ունակ են անորոշության պայմաններում հասնելու հաջողության,

- շեշտում է թշնամու նկատմամբ գերազանցության հասնելու համար առաջավոր տեխնոլոգիաների և լավ պատրաստականությամբ զինվորների ու լավ ուսումնավարժեցված թիմերի համատեղման նշանակությունը,
- սահմանում է «Ուժ 2025 և հետագայում» *(“Force 2025 and Beyond”)* ծրագրով ուժերի զարգացման հիմնարար սկզբունքները,
- «Բանակի ռազմական գործողությունների պրոբլեմներ» փաստաթուղթը գործարկում է որպես վերլուծական հիմք առանցքային շահառուների հետ համագործակցությամբ ուժի արդիականացմանն ուղղված ջանքերը միավորելու համար,
- սահմանում է Բանակի կառուցվածքը և առաջնահերթ տեխնոլոգիական սկզբունքները՝ ջանքերի գերակայությունները և ուժերի ապագա զարգացմանն աջակցությունը որոշելու համար,
- որոշարկում է ուժերի համար Բանակում սույն հայեցակարգի ներդրման հետ կապված ռիսկերը և առաջարկում է այդ ռիսկերը նվազեցնելու ուղիներ,
- գերակա է համարում բարդ միջավայրում և արագորեն հարմարվող թշնամու դեմ ձեռնարկվող օպերացիները պատկերացնելու, բնութագրելու, ուղղորդելու, ղեկավարելու և գնահատելու առաջավարների ունակության զարգացումը[8]:

ԲՕՀ-ը ներառում է յոթ հիմնական հասկացություն՝ 1) առաջադրանքային կառավարում, 2) շարժում և տարաշարժ, 3) հետախուզություն, 4) կրակային շփում, 5) ինքնապահովում, ապահովում, 6) մարտական ստորաբաժանումներին աջակցման օպերացիաներ, 7) պաշտպանողական գործողություններ[9]:

Տվյալ հայեցակարգի մասին գեներալ Ռեյմոնդ Օդիեռնոն, որը 2011 թ. սեպտեմբերի 7-ից մինչև 2015 թ. օգոստոսի 14-ը եղել է ԱՄՆ-ի Ցամաքային զորքերի շտաբի պետ, գրում է. «Բանակի օպերատիվ հայեցակարգի սպասելի արդյունքներից մեկը մի այնպիսի միջավայրի ձևավորումն է, որտեղ մենք կարող ենք թշնամու համար ստեղծել միանգամից մի քանի խնդիրներ, մի միջավայր, որտեղ մենք կարող ենք գործել հարմարավետորեն»[10]:

Պետք է նշել, որ *հարմարավետ միջավայրի* ստեղծմանը և, հատկապես, հակառակորդի համար խնդիրների հարուցմանը նպատակաուղղված՝ ամերիկյան ռազմաքաղաքական ղեկավարության գործողությունները ձեռնարկ-

[8] Տես “The U.S. Army Operating Concept: Win in a Complex World” (https://usacac.army.mil/sites/default/files/documents/cact/ArmyOperatingConceptSummary.pdf):

[9] Տես «Оперативная концепция Армии США…»:

[10] Տես *Raymond T. Odierno.* The Army Operating Concept 2020–2040: Winning in a Complex World. Defense Report from AUSA’s Institute of Land Warfare, 2 March 2015 (https://www.ausa.org/sites/default/files/DR-15-1-The-Army-Operating-Concept-2020-2040-Winning-in-a-Complex-World.pdf):

վում են ոչ միայն ռազմական, այլև տնտեսական, տեղեկատվական-քարոզչական բնագավառներում: Այս առումով մեծապես կարևորվում է տեղեկատվական ընդդիմամարտությունը, որը ներառում է, օրինակ, հակառակորդ պետության տարածքում հասարակության հակաիշխանական տրամադրությունների ձևավորումը, հնարավոր իշխանափոխության կամ հեղափոխության հրահրումը: Այսինքն՝ նախքան ռազմական գործողությունների ձեռնարկումը ամերիկյան ղեկավարությունը ձգտում է տեղեկատվական-քարոզչական և հոգեբանական օպերացիաների *("Moral Warfare")* միջոցով ազդելու թիրախ պետության հասարակական կարծիքի վրա, ձևավորելու իրեն ձեռնտու և նպաստավոր հասարակական տրամադրություններ ու միջավայր, վերափոխելու հասարակական գիտակցությունը՝ այն դարձնելով իրեն համակիր: ԱՄՆ-ի ԶՈՒ-ում տեղեկատվական օպերացիաները համակարգող ենթակառուցվածքը Տեղեկատվական օպերացիաների համատեղ ռազմական կենտրոնն է *("Joint Information Operations Warfare Center", JIOWC)*:

Տվյալ հայեցակարգով նախատեսվում է պատրաստել և առաջիկա տասնամյակներում ունենալ աշխարհի բարդ մարտահրավերներին դիմակայելու ունակ, բարձր մակարդակի պատրաստականությամբ անձնակազմով, առաջավարական հատկություններով օժտված հրամանատարներով աչքի ընկնող այնպիսի բանակ, որն իր հզորության, ռազմաքաղաքական կշռի, բարձր աստիճանի մասնագիտական ու բազմակողմանի պատրաստականության և մարտունակության, կառավարման արդյունավետության և նորամուծական տեխնոլոգիաներով զինվածության շնորհիվ մշտապես կլինի հավանական հակառակորդի նկատմամբ գերակա դիրքում և ունակ՝ նրան հակազդեցություն գործելու բարդ միջավայրներում:

Հատկապես կարևորվում են Զինված ուժերը նոր տեխնոլոգիաներով զինումը և դրանց շնորհիվ զորքերի պաշտպանվածության մակարդակի բարձրացումը, հետախուզության խորացմամբ իրավիճակի ու հակառակորդի վերաբերյալ բազմապիսի տվյալների հավաքումը, վերլուծությունն ու գնահատումը: Նորագույն տեխնիկայով ու սարքավորանքով զինված զինծառայողը ավելի է ապահովված անկանխատեսելի իրավիճակների անբարենպաստ ազդեցությունից և օրինակ՝ արբանյակներից ստացված հետախուզական տվյալների շնորհիվ կարող է տեղանքում ավելի արագ ու արդյունավետ կողմնորոշվել, հայտնաբերել հակառակորդի հենակետերն ու թաքստոցները և վնասազերծել դրանք, քան նախկինում էր: Այս տեսակետից էական նշանակություն ունեն հակառակորդին համակողմանիորեն ու խորքայնորեն հետախուզելու հնարավորությունների զարգացումը, ինչպես նաև հակառակորդի հետախուզության անցկացման դժվարացումը կամ կանխումը ՌԷՊ-ի մեթոդներով, կառավարման կետերի արդյունավետության մեծացմամբ, ոչ թռիչքային տարածքի ստեղծմամբ և այլ միջոցներով:

Հայեցակարգի ամբողջ տրամաբանությունը փաստում է, որ ԱՄՆ-ի Բանակն ավելի է զարգացնելու «Առաջադրանքային կառավարումը» *("Mission Command"*, որը ՀՀ ԶՈՒ-ում երբեմն ձևակերպվում է որպես «Հրամանատ-

րում՝ առաջադրանքի միջոցով»), քանի որ գերժամանակակից միջոցներով զինված ու համակողմանիորեն պատրաստված զինծառայողին տրվում է ստեղծված իրավիճակում ինքնուրույն որոշումներ կայացնելու և նախաձեռնություն ցուցաբերելու ազատություն:

Հարկ է նշել, որ տվյալ հայեցակարգը, շեշտելով Միացյալ ուժերի կարևորությունը, միևնույն ժամանակ, առաջնային պլան է մղում ԱՄՆ-ի Զինված ուժերի հզորության և գերիշխանության ցուցադրման անհրաժեշտությունները:

«Հաղթել բարդ աշխարհում» հայեցակարգում առաջին անգամ պաշտոնական մակարդակով հրապարակվում է ԱՄՆ-ի՝ պատերազմի վարման նոր բնույթը, համաձայն որի՝ ապագայի ընդդիմամարտությունները ծավալվելու են հիմնականում անծանոթ միջավայրներում, որտեղ ԱՄՆ-ի Բանակին հակազդեցություն են գործելու անծանոթ թշնամիներ՝ միավորված հնարավոր անծանոթ դաշինքներում: Նման պայմաններում անհնար կլինի որոշել պատերազմի ստույգ մեկնարկը, տևողությունը և ավարտը:

«Հաղթել բարդ աշխարհում» հայեցակարգի մշակողներից մեկը՝ Աֆղանստանում ԱՄՆ-ի և դաշնակիցների զորքերի նախկին հրամանատար գեներալ Դևիդ Բառնոն գրել է. «Մենք ստիպված կլինենք գործել այնպիսի պայմաններում, երբ անհնար է որոշել ո՛չ պատերազմի սկսման, ո՛չ ավարտման ճշգրիտ ժամը»: Բառնոն ապագա զինված հակամարտությունները կոչում է «ստվերային պատերազմ»[11]:

«Ստվերային պատերազմներում» հաղթելու համար փոխվել է նաև հակազդեցության ոլորտը, առաջին անգամ պաշտոնապես պատերազմի ոլորտներ են նշվել ոչ միայն ավանդական զինված գործողությունները, այլև հակազդեցությունները դիվանագիտական, ներքաղաքական ոլորտներում, տեղեկատվական և ֆինանսատնտեսական պատերազմները, արդյունաբերական լրտեսությունը, տեխնոլոգիական հակազդեցությունը, վարքային պատերազմը, «թիրախ պետության» ներսում քաղաքացիական բախումների ու պատերազմների հրահրումը՝ տեղի քաղաքական ընդդիմությանը կամ հակաիշխանական ուժերին ուղղակի կամ անուղղակի սատարման ճանապարհով, «թիրախ պետության» դեմ ֆինանսական պատժամիջոցների ու ժամանակի ռեալ մասշտաբում իրագործվող հարձակողական օպերացիաների համալիրի կիրառումը և այլն:

Այս իմաստով հայեցակարգը նպատակ ունի նպաստելու բանակի վերլուծական հնարավորությունների զարգացմանը, մասնավորապես՝ հակառակորդ պետության տնտեսական, ներքին և արտաքին քաղաքական ռեսուրսների ճիշտ գնահատման մեխանիզմների կատարելագործմանը:

Հայեցակարգում շեշտվում է ԱՄՆ-ի Բանակի հետևյալ 7 հիմնական կարողությունների զարգացման անհրաժեշտությունը՝ 1) անվտանգային միջա-

[11] Տես *Владимир Прохватилов.* «Упреждающая война» и ее конечный смысл. От Лиддел Гарта до механизма интернет-разведки, 26.08.2019 (https://www.fondsk.ru/news/2019/08/26/uprezhdajuschaja-vojna-i-ee-konechnyj-smysl-48870.html):

վայրի ձևավորում և հստակեցում *(“Shaping the security environment”)*՝ ապահովելով այդ միջավայրում բանակի գործողությունների ուրույն հնարավորություններ, 2) գործողությունների թատերաբեմի սահմանում *(“Setting the theater”)*՝ անհրաժեշտության դեպքում համատեղ ուժերի ինքնուրույն գործողություններ վարելու ազատությամբ, 3) պետական հզորության պլանավորում *(“Projecting national power”)*՝ առկա ուժերի արագ ծավալման ու կիրառման հստակ համակարգով, 4) միացյալ ուժերի տարաշարժերի կատարում ցամաքային, օդային, ծովային, տիեզերական և կիբեռ- տարածությունում *(“Conducting combined-arms maneuver in the air, land, maritime, space and cyberspace domains”)*, 5) լայն տիրույթով անվտանգության ապահովում *(“Conducting wide-area security”)*՝ ձգտելով պաշտպանելու բնակչությանը, ենթակառուցվածքները և սահմանափակելով թշնամու դիրքային առավելությունները, 6) կիբեռտարածության օպերացիաների իրականացում՝ ցամաքային տարածքի գերակայությամբ *(“Conducting cyberspace operations in the land domain”)*, որպեսզի բանակը, գործելով Միացյալ ուժերի կազմում, շարունակի իր ներբերումը կիբեռանվտանգության ապահովման գործում, 7) հատուկ օպերացիների ուժերի օգտագործում *(“Employing special operations forces”)*՝ հատուկ պատրաստված զինվորականների միջոցով[12]:

Ինչպես նշվեց, հայեցակարգում մեծ տեղ է հատկացված համատեղ գործողություններին: Բանակի ուժերն իրականացնում են արշավային-հետախուզական գործողություններ՝ համաձայն Բանակային գործողությունների համատեղ, ինչպես նաև Հարձակողական գործողությունների միացյալ հայեցակարգների:

Ըստ ԲՕՀ-ի՝ ԱՄՆ-ում մշտապես տեղակայվող բանակային ուժերը պետք է առաջանցիկության սկզբունքով նպաստեն ճգնաժամային լուծումներին, հաղթեն հնարավոր թշնամիներին, ապահովեն անվտանգությունն ու ամրապնդեն ձեռք բերված հաջողությունները, ունենան հաստատակամություն, տոկունություն՝ կայուն արդյունքների հասնելու համար[13]: Որպես արդյունք՝ ապահովվում են զորքերի հասանելիությունն ու բարձր շարժունությունը, ինչն զգալի առավելություն է տալիս հնարավոր հակառակորդի նկատմամբ:

Հայեցակարգում նաև արծարծվում է այն միտքը, որ ԱՄՆ-ի բանակը մշտապես ողջունելու է նրանց, ովքեր ցանկանում են ինտեգրվել ընդհանուր նպատակների իրականացման գործընթացին, միանալ այդ նպատակների իրականացմանն ուղղված ջանքերին: Ընդ որում, այս հորդորն ուղղված է նաև ոչ կառավարական ու հասարակական կազմակերպություններին[14]:

---

[12] Տես *Ռայմոնդ Տ. Օդիերնո,* Նշ. աշխ.:

[13] Տես “The U.S. Army Operating Concept: Win in a Complex World” (https://usacac.army.mil/sites/default/files/documents/cact/ArmyOperatingConceptSummary.pdf):

[14] Տես *David Perkins.* How Will We Train to Fight and Win in a Complex World? (https://fromthegreennotebook.com/2017/03/13/daweek-how-will-we-train-to-fight-and-win-in-a-complex-world/):

Բանակի օպերատիվ կառավարման նոր հայեցակարգը ենթադրում է նաև, որ՝

- ԱՄՆ-ի Բանակը մնալու է վարձու պրոֆեսիոնալ բանակ, որն ունի անհրաժեշտ ռեսուրսներ և բաղադրիչներ՝ ապագայում իր պարտականությունները հաջողությամբ կատարելու համար,
- Բանակը բյուջետային սահմանափակումների շրջանակներում պետք է բավարար միջոցներ ունենա Զինված ուժերի մարտունակության պահպանման համար,
- Բանակի որոշ ուժեր տեղակայվելու և գործարկվելու են արտասահմանում՝ ԱՄՆ-ի անվտանգության տեսակետից կարևոր շրջաններում, թեև գերակշռող մասը շարունակելու է մնալ ԱՄՆ-ի մայրցամաքային հատվածում,
- ցամաքում, օդում, ծովում, տիեզերական տարածությունում և կիբեռտարածությունում Բանակի գերազանցության ապահովումը պետք է առաջիկա տասնամյակներում մնա գերակա խնդիր,
- Բանակը անմիջապես կարձագանքի պետությունում ծագող արտակարգ իրավիճակներին,
- Բանակը անընդհատ կմշտազննի զարգացումների միտումները և իրավիճակների փոփոխությունները, օպերատիվ կերպով հաշվի կառնի այդ փոփոխությունները՝ Զինված ուժերի զարգացմանն ուղղված կրթական ու մասնագիտական ծրագրերի ճշգրտմամբ:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ նշենք, որ ամերիկյան պատերազմավարության սկզբունքները նոր հայեցակարգում էական փոփոխություններ չեն կրել: Օրինակ՝ պահպանվել է պաշտպանությանը կամ պատերազմին պետության պատրաստման ժամանակ հայեցակարգային կամ ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերի մշակման, այսպես ասած՝ «պատմականության պահպանման» սկզբունքը, այն է՝ ոչ թե լրիվ փոխել եղած ռազմավարությունները և առաջ քաշել էությամբ միանգամայն նոր տեսություն, այլ նորը զարգացնել եղածի հիմքի վրա՝ պահպանելով նախկին մշակումների հիմնական գաղափարներն ու մոտեցումները: Զինված ուժերում այս սկզբունքը պարունակում է ավանդույթների նկատմամբ հարգանքի տարր:

Վերլուծելով պատերազմավարության նախկին և ներկայիս հայեցակարգների հիմնարար սկզբունքները՝ կարող ենք պնդել, որ նոր հայեցակարգում զորքերի տարաշարժը, ինքնուրույն որոշումների կայացման գործում ազատության տրամադրումը, հիմնական ուղղություններով ուժերի կենտրոնացումը վերցված են նախկին ռազմավարություններից: Օրինակ՝ 2000 թվականին որպես «օպերատիվ-մարտավարական հայեցակարգ» մշակված «Համատեղ տեսլական 2010» *("Joint Vision-2020")* փաստաթղթում ամրագրված է «Հիմնական, կամ տիրապետող, տարաշարժը» *("Dominant Maneuver"),* ինչը հստակ կերպով ամրագրված է նաև ԲՕՀ-ում՝ որպես զորքերի շարժունության հիմնական ու կարևոր հատկանիշ[15]:

[15] Տես "Joint Vision 2020" (http://pentagonus.ru/doc/JV2020.pdf); նաև՝ "Joint Vision 2020" (https://web.archive.org/web/20011130011718/http://www.dtic.mil/jv2020/jvpub2.htm):

Այսպիսով՝ վերը շարադրվածի հիման վրա կարող ենք հանգել հետևյալ եզրակացություններին.

- «Հաղթել բարդ աշխարհում» գաղափարի վրա խարսխվող ամերիկյան նոր «Բանակային օպերատիվ հայեցակարգը» ոչ թե հերքում կամ մերժում է նախորդ հայեցակարգները, այլ դրանց տրամաբանական շարունակությունն է՝ մշակված աշխարհում տեղի ունեցող տարաբնույթ փոփոխությունների հաշվառմամբ,
- այդ հայեցակարգը նպատակաուղղված է մոտակա 20 տարիներին աշխարհում ԱՄՆ-ի պաշտպանական գերազանցության պահպանմանը՝ նրա Բանակի առջև նոր խնդիրներ դնելու և դրանց հեռանկարային լուծումներն ուղենշելու ձևով,
- հայեցակարգը նախատեսում է ԱՄՆ-ի Բանակի կազմակերպվածքի, կառավարման համակարգի, սպառազինության ու ռազմական տեխնիկայի, անձնակազմի պատրաստման սկզբունքային բարեփոխումներ, որոնց հանգամանալից ուսումնասիրությունը թվում է անհրաժեշտ ոչ միայն առաջավոր ռազմագիտական մտքի զարգացման միտումները լավ ընբռնելու, այլև հնարավոր գործնական օգուտներ քաղելու տեսակետից:

СТРОИТЕЛЬСТВО ВС

О СТЕРЖНЕВОЙ ИДЕЕ КОНЦЕПЦИИ ОПЕРАТИВНОГО УПРАВЛЕНИЯ АРМИИ США «ПОБЕДИТЬ В СЛОЖНОМ МИРЕ»

А. М. ШАХВЕРДЯН, подполковник, старший преподаватель Центра Военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

В современном мире даже сверхдержавам трудно в одиночку парировать разнородные угрозы своей национальной безопасности, поэтому при строительстве ВС необходимо обеспечить возможность высокой степени взаимосотрудничества и интероперабельности с силами союзников. Лучшим примером данного подхода являются ВС США, современная стратегия Сухопутных сил (Армии) которых зиждется на идее «Победить в сложном мире».

Оперативная концепция (ОКА) Армии США (“Win in a Complex World 2020–2040”) вытекает из предыдущих концепций и доктрин и концептуализирует качественно новые подходы к решению задач объединенными силами.

ОКА включает семь основных понятий: 1) принцип предоставления командиру самостоятельности при выполнении задачи; 2) движение и маневр; 3) разведка; 4) боевое соприкосновение; 5) самообеспечение и обеспечение; 6) операции по поддержке боевых подразделений; 7) оборонительные действия.

Данная концепция нацелена на подготовку Армии, способной в течение ближайших 20 лет сохранять свое превосходство в мире. Она должна отличаться высоким уровнем выучки личного состава, высокой степенью оснащенности инновационными технологиями и высокоэффективной системой управления, способностью вести боевые действия не только на суше, но и на море, в воздушно-космической сфере и киберпространстве, благодаря чему сможет играть ведущую роль в составе Объединенных сил США.

DEVELOPMENT OF THE ARMED FORCES

ON THE CAPSTONE IDEA OF THE US ARMY OPERATING CONCEPT: WIN IN A COMPLEX WORLD, 2020–2040

A. M. SHAHVERDYAN, Lieutenant Colonel, Senior Lecturer, Center for Military Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

In contemporary world, even for superpowers it is difficult to parry diverse threats to their national security by their own efforts, therefore, it is necessary to ensure the possibility of a high-degree mutual cooperation and interoperability with the ally forces during the development of the Armed Forces. The best example of this approach is the US Armed Forces, whose up-to-date strategy of the Army (Ground Forces) is based on the idea of “Win in a complex world”.

The US Army Opering Concept (AOC) (*Win in a Complex World, 2020–2040*) follows from previous concepts and doctrines and conceptualizes qualitatively new approaches to solving problems by Joint Forces.

The AOC includes seven basic concepts: mission command, movement and maneuver, intelligence, fires, sustainment, engagement, maneuver support and protection.

This concept is targeted at preparing the Army capable of maintaining its superiority in the world over the next 20 years. It should be distinguished by a high level of personnel skills, a high extent of equipment with innovative technologies and a high-performance control system, ability to wage combat operations not only on land but also at sea, in the aerospace sphere and cyberspace, due to which it will be able to play a leading role in the US Joint Forces.

ԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գ. Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի գիտական-վերլուծաբան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հնուց ի վեր մարդկությունը որոնել է մեծ հեռավորությունների վրա տեղեկույթի փոխանակման միջոցներ և կատարելագործել դրանք: Զարգացման ընթացքում առաջացել են տեղեկույթի փոխանակման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են ռադիոն, հեռախոսը, հեռագրասարքը և այլն: Այդ կերպ ձևավորվել է կապի հասկացությունը:

Շնորհիվ կապի համակարգի՝ զորքերում տեղի է ունենում բոլոր տեսակների տեղեկույթի փոխանակում. այն զենքի և զորքերի կառավարման հիմնական տեխնիկական միջոցն է[1]:

Ինչպես հայտնի է, զորքերի կառավարումն ապահովելու համար կիրառվում է հետևյալ տեսակների կապ՝ ռադիո-, ռադիոռելեային, ներքնոլորտային, արբանյակային, հաղորդալարային և շարժական (սուրհանդակափոստային):

Ռադիոկապը տեղեկույթի երկկողմ հաղորդման առավել տարածված տեսակի կապ է, որն իրագործվում է տարածության մեջ որոշակի երկարությամբ էլեկտրամագնիսական ալիքների (ռադիոալիքներ) միջոցով: Հաղորդման համար կիրառվում են ալեցիրով օժտված հաղորդիչներ, ընդունման համար՝ ալեհավաք ունեցող ընդունիչներ: Ռադիոկապը լինում է գերերկարալիք (10 կմ-ից երկար ալիքներ, որոնք հեշտությամբ շրջանցում են Երկրագունդը, թափանցում են ծովաջրերի խորքերը, վատ կլանվում երկրային մակերևույթով, լավ անդրադարձվում իոնոլորտից), երկարալիք (1–10 կմ երկարությամբ ալիքներ, որոնք ի հաշիվ Երկրագնդի կորությունից դիֆրակցիայի տարածվում են շուրջ 1–2 հազ. կմ տարածությունների վրա), միջինալիք (100–1000 մ երկարությամբ ալիքներ, որոնք, շնորհիվ Երկրագունդը շրջանցելու, իսկ գիշերները՝ իոնոլորտից անդրադառնալու հատկությունների սփռվում են հազարավոր կիլոմետրերով), կարճալիք (10–100 մ երկարությամբ ռադիոալիքներ, որոնք փոքր կորուստներով անդրադառնում են իոնոլորտից), գերկարճալիք (մետրանոց, դեցիմետրանոց, սանտիմետրա-

[1] Տես, օրինակ, *Մ. Կ. Մարկոսյան, Ֆ. Պ. Սոլոմոնյան,* Զինված ուժերում կապի կազմակերպման հնարավոր տարբերակ: «ՀԲ», 2011, հմ. 3 (էլեկտրոնային տարբերակը՝ (https://razmavaraget.files.wordpress.com/2012/01/n3_2011-final.pdf)):

նոց և միլիմետրանոց ռադիոալիքներ, որոնք տարածվում են ուղիղ տեսանելիության սահմաններում):

Ռադիոռելեային կապը տեղեկույթի հաղորդման տեսակ է, որում կիրառվում է ռադիոազդանշանների բազմակի վերահաղորդման եղանակը, ընդսմին կապն իրագործվում է նեղ ուղղորդվածությամբ ալեցիրների և դեցիմետրանոց, սանտիմետրանոց կամ միլիմետրանոց ալիքների օգտագործմամբ, իսկ վերահաղորդիչները լինում են ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ:

Ներքնոլորտային կապի համար կիրառվում է մթնոլորտի ստորին շերտերում՝ ներքնոլորտում, գոյություն ունեցող մրրկային (տուրբուլենտ) ու շերտավոր անհամասեռություններից դեցիմետրանոց ու սանտիմետրանոց ալիքների անդրադարձման երևույթը: ԳԿԱ տիրույթի ռադիոալիքների հեռավոր ներքնոլորտային տարածման էֆեկտի կիրառումը հնարավորություն է տալիս կապ ստեղծելու մինչև 300 կմ հեռավորություններով՝ առանց ուղիղ տեսանելիության:

Արբանյակային կապը տիեզերական կապի մի տեսակ է, որի գործողությունը հիմնված է Երկրի արհեստական արբանյակների՝ որպես վերահաղորդիչների օգտագործման սկզբունքի վրա: Այս կապը ռադիոռելեային կապի տարատեսակ է, ընդսմին վերահաղորդիչը շատ մեծ բարձրություններում տեղադրելու շնորհիվ դրանց շղթայի ստեղծման անհրաժեշտությունը վերանում է, և, որպես կանոն, գործարկվում է միայն մեկ վերահաղորդիչ:

Ռազմական բնագավառի կապի համակարգը կարելի է դիտել որպես մի բազմակողմ ու բարդ օրգանիզմ, որը մշտապես զարգացել և կատարելագործվել է տարբեր դարաշրջանների պատերազմներում՝ համապատասխանեցվելով դրանց բնույթին ու պահանջներին: Այսպես. եթե առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներում կապի միջոցները եղել են նմանակային (անալոգային), չեն ունեցել գաղտնագրման հուսալի միջոցներ, ռադիոկայանները աշխատել են ֆիքսված հաճախականություններով, ապա հետագայում ստեղծվել են *կապի թվային միջոցներ*, ռադիոկապի ոլորտում ի հայտ են եկել հարմարվողական բանելակարգի* և աշխատանքային հաճախականության թռիչքաձև վերալարքի (ԱՀԹՎ)** հասկացությունները, կապի միավորական (թրանքինգային) համակարգը***, կապի հուսալի գաղտնագրման ապարատուրան, ներքնոլորտային և արբանյակային կապը, տեսահեռախոսային կապը և այլն:

---

* Այդպես են կոչվում այն ավտոմատացված ռադիոգծերը, որոնք կապի որակի բարձրացման կամ պահանջվող որակի ապահովման նպատակով իրենց պարամետրերի կամ կառուցվածքի փոփոխման միջոցով հարմարվում են կապի գործարկման պայմաններին:

** Աշխատանքային հաճախականության թռիչքաձև վերալարքը (ռուս.՝ *псевдослучайная перестройка рабочей частоты (ППРЧ)*, անգլ.՝ *frequency-hopping spread spectrum)* ռադիոկապով տեղեկույթի հաղորդման մի մեթոդ է, որի էությունը կրող հաճախականության հաճախակի փոփոխությունն է: Այս մեթոդը մեծացնում է կապուղու խանգարումապաշտպանվածությունը:

*** Միավորական (թրանքինգային) համակարգերը կապի շառավղային-գոտիական համակարգեր են, որոնք կատարում են բաժանորդների միջև կապուղիների ավտոմատ բաշխում: Այսինքն՝ մի մեթոդ է, որի դեպքում կապի սեանսի ժամանակամիջոցի համար բաժանորդին հատկացվում է ազատ կապուղի:

Ժամանակակից մարտական գործողություններում կապի համակարգը պատերազմի բնույթի փոփոխության և զորքերի կառավարման միջոցների ոչնչացման կամ ճնշման տարբեր միջոցների կիրառման հետևանքով կարող է գործարկվել փուլայնորեն՝ կապի տարբեր միջոցների և տարբեր բանելակարգերի գործածմամբ:

Այսպես. խաղաղ ժամանակ և պաշտպանողական օպերացիայում նպատակահարմար է օգտագործել կապի ստացիոնար հանգույցներ, լարային գծեր, կապի ստացիոնար ցանց, այդ թվում՝ քաղաքացիական կապ, նվազագույնի հասցնել ռադիո-, ռադիոռելեային, ներքնոլորտային և արբանյակային կապերի օգտագործումը: Պաշտպանողական օպերացիայում անհրաժեշտ է առաջին հերթին կապուղիների թիվը մեծացնելով հասցնել այն արժեքին, որը բավարար է ինչպես զորքերի կառավարման, այնպես էլ բոլոր կառավարման կետերի հետ կապի ապահովման համար: Հարձակողական և հակահարձակողական օպերացիաների ժամանակ զորքերն սկսում են լիարժեք կերպով օգտագործել ռադիոկապը, ավելացվում են կապի ռադիոռելեային և ներքնոլորտային գծերը, հնարավորին չափով օգտագործվում է արբանյակային կապը:

Կապի զորքերը հիմնականում զարգացում են ապրել երկրորդ աշխարհամարտի, մասնավորապես՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին: Կապի զորքերը բավարարվել են ռադիոկապի այն միջոցներով, որոնք աշխատում էին ֆիքսված հաճախականություններով, իսկ ներկայումս դա կհարուցի զգալի դժվարություններ հակառակորդի ՌԷՊ-ի հնարավոր ներգործության պատճառով: Սակայն այն ժամանակ էլ կապի միջոցներին ներկայացվել են խիստ պահանջներ: Օրինակ՝ ռադիոկապի համար կիրառվել է Մորզեի այբուբենը, որը հնարավորություն է տալիս անգամ բազմաթիվ տարաբնույթ աղմուկների ու խանգարումների պայմաններում որսալու օգտակար (որոնելի) ազդանշանը: Քանի որ Հայրենական մեծ պատերազմի սկզբում չեն եղել գաղտնագրման հուսալի տեխնիկական միջոցներ, դա հիմնականում տարվել է կոդային աղյուսակների, պայմանական նշանների և տառային ու թվային համակցությունների միջոցով:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ հենց այդ տարիներին սկսել են ի հայտ գալ կապի ավելի կատարելագործված միջոցներ, որոնց տարատեսակներն այսօր էլ կարելի է օգտագործել: Օրինակ՝ «ՏԱ-57» դաշտային հեռախոսը, որի նախատիպն էր Հայրենականի տարիներին ստեղծված «ՏԱ-43»-ը: Նույն ժամանակ մշակվել է «ՌԲ-Մ» կրովի կարճալիք ռադիոկայանը, որն աշխատում էր 1,5-5,0 ՄՀց հաճախականությունների տիրույթում: Մշակվել է նաև Ա-7 գերկարճալիք ռադիոկայանը, որը հնարավորություն էր տալիս հեռախոսն օգտագործելու մինչև 2 կմ հեռավորությունների վրա, այսինքն՝ ռադիոկայանը գտնվում էր հրամանատարական կետից 2 կմ հեռավորությամբ: Սկսեցին արտադրվել «ՍՏ-35» և «Բոդո» հեռագրային ապարատները:

20-րդ դարի երկրորդ կեսի և 21-րդ դարի սկզբի տեղային պատերազմներում և զինված հակամարտություններում կապի ապահովման փորձի վերլուծությունը հնարավորություն է տալիս կանխատեսելու դրա կատարելագործման հիմնական ուղղությունները: Ընդ որում, կարելի է պնդել, որ առանցքային ուղղություն է ՌԳԹ-ում կապի միասնական ինտեգրված ցանցի

ստեղծումը: Օրինակ, Վիետնամում ստեղծվել է հինգ ինքնուրույն ենթահամակարգերից բաղկացած համակարգ: Ընդ որում, յուրաքանչյուր ենթահամակարգի ապարատուրան համակցվել է մյուսների ապարատուրայի հետ: Այդ սկզբունքի զարգացումն է ներկայումս ՆԱՏՕ-ի զորքերում կիրառվող կապի ու տվյալների հաղորդման համակարգչային համակարգը, որը հնարավորություն է տալիս արագ կերպով արձագանքելու մարտական իրադրության ցանկացած փոփոխության, անգամ՝ յուրաքանչյուր մարտական միավորի (տանկ, ինքնաթիռ և այլն) մակարդակով:

Արագ փոփոխվող իրավիճակի պայմաններում կառավարման և կապի համակարգերի կառուցվածքի բարդացումը ամերիկյան հրամանատարությանն ստիպել է Հարավային Վիետնամի տարածքում ծավալել կապի համակարգերի կառավարման միասնական կենտրոն: Կենտրոնի օպերատիվ հաշվարկը ժամանակի ցանկացած պահի տիրապետել է ՌԳԹ-ում կապի բոլոր գծերին ու հանգույցներին վերաբերող տեղեկույթի: Դրա շնորհիվ պատեհաժամորեն ընդունվել են կապի գծերի վերականգնման մասին որոշումներ:

Ինչպես հայտնի է, տեղային պատերազմները այն հրապարակն են, որտեղ մարտական իրադրությունում փորձարկվում են սպառազինության և ռազմական տեխնիկայի նորագույն նմուշները: Նույնը կարելի է ասել նաև կապի առնչությամբ: Այսպես. Կորեական պատերազմում օգտագործվել են ռադիոռելեային կայաններ, որոնք ունեին ժամանակի խտացմամբ մինչև 4, 12 և 24 կապուղի: 50-ականների կեսերին տեղի է ունեցել վերակողմնորոշում դեպի հաճախականային խտացմամբ ապարատուրայի ստեղծում: Այդ ժամանակ էլ ստեղծվել են կապուղիների հաճախականային բաժանմամբ ներքնոլորտային կայաններ: Սակայն տարբեր սկզբունքներով աշխատող խտացման ապարատուրայի առավելությունների և թերությունների հաշվառմամբ 1962 թ. ընդունվել է կապի մի այնպիսի համակարգի ստեղծման նախագիծ, որում համառանցք-մալուխային, ռադիոռելեային և ներքնոլորտային գծերի խտացումը կատարվեր կապուղիների ժամանակային բաժանմամբ աշխատող 3-6-12-24 կապուղիանոց ապարատուրայով: Արդեն 1967 թ. նշված ապարատուրան փորձարկվել է Վիետնամական պատերազմում և ընդունվել սպառազինության մեջ:

Վիետնամում ամերիկացիները բախվել են ջունգլիներում գերկարճալիք տիրույթի ռադիոկապի կազմակերպման բարդության հետ (50 Վտ հզորությամբ կայանը գործել է առավելագույնը 500 մ հեռավորության վրա): Սակայն մեկուկես տարում նրանք մշակել և սպառազինության մեջ ընդունել են կարճալիք տիրույթի ռադիոկայաններ: Տեղային պատերազմներում փորձարկված նոր տեսակի կապ էին ներքնոլորտային և արբանյակային կապի գծերը: Տիեզերական միջոցները դարձել են ԱՄՆ–Հարավային Վիետնամ ռազմավարական ուղղությունում գլխավոր միջոցը: Դրանք եղել են նաև Ֆոլկլենդյան կղզիների շրջանում գտնվող բրիտանական ռազմածովային ուժերի խմբավորման կապի կարևորագույն միջոցները: 1990-ական թվականների տեղային պատերազմներում զգալիորեն աճել են կառավարման տարբեր օղակներում արբանյակային կապուղիների խաղացած դերն ու նշանակությունը:

Տեղային պատերազմներում կապի զորքերի լուծած կարևոր խնդիրներից է եղել զինված ուժերի տեսակների ու զորատեսակների միջև գործակցային կապի ապահովումը: Այս խնդիրն առաջին հերթին լուծվել է ռազմական գործողությունների թատերաբեմում կապի միասնական ինտեգրված համակարգի ստեղծմամբ, ինչպես նաև օպերատիվ խմբերի ու ներկայացուցիչների փոխանակման միջոցով:

Գործակցային կապի ապահովման մեկ այլ ուղղություն է եղել փոխգործող զորամասերի միջև ռադիոցանցերի կազմակերպումը: Ըստ այդմ Վիետնամում տեղակայվել են ցամաքային տիրույթում աշխատող ռադիոկայաններ, մինչդեռ հետևակային զորամասերի ու ստորաբաժանումների լրակազմերում ներառվել են ավիացիոն տիրույթի ռադիոկայաններ[2]:

Ռազմական կապի համակարգերի զարգացման ուղղություններից մեկը, որն առաջ է եկել տեղային պատերազմներում, դրանց կենսունակության և թողունակության մեծացումն է: Կենսունակությունը մեծացվում էր կապի ավելի ճյուղավորված համակարգերի ստեղծմամբ ու նորագույն միջոցների համալիր օգտագործմամբ, համակարգերի կառավարման կենտրոնացմամբ (համակարգի հատվածների ապակենտրոնացված կառավարման հնարավորության պահպանմամբ), կիրառվող ուժերի և միջոցների թվաքանակի մեծացմամբ, վերահաղորդիչների կիրառմամբ, շրջանցիկ ուղղությունների ստեղծմամբ: Կապի համակարգն արդեն կառուցվել է այնպես, որ ցանկացած տարրի շարքից դուրս գալը նվազագույն չափով անդրադառնա ամբողջ համակարգի կայունության վրա:

Թողունակության մեծացումը կատարվել է, առաջին հերթին, բազմակապուղի միջոցների և կապուղիների ավտոմատ կոմուտացման ներդրման ճանապարհով: Օրինակ՝ Վիետնամում ամերիկյան բանակային խմբավորման հրամանատարի շտաբից մինչև բանակային կորպուսների շտաբները առանձին ռադիոուղղություններում գործել է մինչև 600 կապուղի: Իսկ ավտոմատ կապի միջոցների կիրառումը հնարավորություն է տվել կապուղիների օգտագործման գործակիցը հասցնելու 75 %-ի:

Տեղային պատերազմների փորձը ցույց է տալիս կապի համակարգերում թռչող ապարատների օգտագործման կարևորությունը: Կորեական պատերազմում ինքնաթիռները և ուղղաթիռները կիրառվել են հաղորդագծերի անցկացման, թղթակցության առբերման, կապի միջոցների և կապի զորքերի անձնակազմի տեղափոխման համար: Վիետնամական պատերազմում հատուկ էսկադրիլյաներ կազմող ուղղաթիռները և ինքնաթիռները, բացի վերը նշված խնդիրներից, մշտապես օդաարգելափակել են մարտական գործողությունների շրջանը և կատարել գերկարճ ալիքների վերահաղորդում: Յուրաքանչյուր ինքնաթիռ և ուղղաթիռ սարքավորված է եղել ռադիոկայանի այնպիսի լրակազմով, որն ապահովել է վեց ռադիոցանցերում վերահաղորդելու հնարավորություն: Ընդ որում, կապի հեռագործությունը հասցվել է 250 կմ-ի:

[2] Տես *В. А. Куликов, В. А. Жилин.* Военное искусство в локальных войнах и вооруженных конфликтах: военно-исторический труд. М., 2009, сс. 78–91:

Մերձավոր Արևելքում տեղի ունեցող արաբա-իսրայելական պատերազմներում առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում կառավարման և կապի կազմակերպումը Իսրայելի Զինված ուժերում[3]:

Ռազմական կառավարման բոլոր մարմինները (օկրուգների և ավելի բարձր շտաբներ) խաղաղ ժամանակ ունեցել են կառավարման կետեր, որոնք սարքավորված են եղել կապի և ավտոմատացման անհրաժեշտ միջոցներով: Օպերատիվ-մարտավարական օղակում իսրայելացիները կիրառել են կառավարման շարժական կետեր, որոնք սարքավորվել են զրահափոխադրիչներում (հրամանատարաշտաբային մեքենաներում): Որպես օդային հրամանատարական կետեր օգտագործվել են ուղղաթիռներ:

Օպերատիվ խմբի հրամանատարն իրեն ենթակա զորքերը կառավարել է շտաբի միջոցով, որը ծավալել է հիմնական հրամանատարական կետը (ՀՀԿ) և կառավարման թիկունքային կետը (ԿԹԿ): Բացի այդ, ՀՀԿ կազմից առանձնացվել է առաջադիր հրամանատարական կետ (ԱՀԿ), ինչը օպերատիվ խմբի հրամանատարին հնարավորություն է տվել պարբերաբար անձնապես դիտելու մարտի դաշտը: Դրա հետ մեկտեղ բավական հաճախ ծավալվել են օժանդակ հրամանատարական կետեր (ՕՀԿ-եր):

Օպերատիվ խմբի կապի համակարգը կազմվել է կապի բազմուղի և միուղի համակարգերից:

Կապի բազմուղի համակարգը կառուցվել է ռադիոռելեային և ներքնոլորտային կայանների օգտագործմամբ՝ անմիջական կապերի սկզբունքով: Հաճախ որպես վերահաղորդիչներ օգտագործվել են ինքնաթիռներ: 1982 թ. պատերազմում կիրառվել են կապի՝ աշխատանքային հաճախականության թռիչքաձև վերալարքով աշխատող միջոցներ:

Մարտավարական օղակում կապի հիմնական միջոց եղել է կարճալիք (2–30 ՄՀց) և գերկարճալիք (30–88 ՄՀց) տիրույթի ապարատուրան: Ռադիոկապի միջոցներով ապահովվել են ստորաբաժանումների բոլոր հրամանատարները՝ սկսած ջոկի հրամանատարից:

Գերկարճալիք ռադիոկայանի հզորությունը չի գերազանցել 40 Վտ-ը: Ռադիոկապը, այդ թվում՝ հեռագրային, կազմակերպվել է ռադիոցանցերով, որոնցում հաղորդակցվող կողմերի թիվը հասել է 15-ի:

Հարձակման համար ելքային դիրքում և պաշտպանության ժամանակ դիվիզիայում կազմակերպվել է տարբեր ուղղություններում գործող բրիգադների ՀԿ-ների հետ հաղորդալարային կապ՝ թեթև դաշտային մալուխի օգտագործմամբ: Հաղորդալարային կապի արդյունավետության մեծացումն ապահովվել է մալուխային գծերում խտացման ապարատուրայի տեղադրմամբ: Մալուխային գծերի անցկացումն արագացնելու համար օգտագործվել են ավտոմեքենաներ և ինքնաթիռներ: Դիվիզիայում բրիգադների կապի վաշտերի և կապի գումարտակի ռադիոռելեային կայանների կազմով ստեղծվել է բազմակապուղի ցանց[4]:

[3] Տես նույն տեղում, էջ 80:

[4] Տես նույն տեղում, էջ 80–81:

Կապի զորքերի կիրառման շատ հետաքրքիր փորձ ՌԴ-ն ձեռք է բերել Սիրիայում տեղի ունեցող ռազմական հակամարտությանը մասնակցելու ժամանակ[5]: Ռուսաստանի սահմաններից մեծ հեռավորության վրա գտնվելու հաշվառմամբ որոշում է ընդունվել ռազմական համակարգերի հետ մեկտեղ գործի դնել արբանյակային կապի ռուսական քաղաքացիական օպերատորների ռեսուրսները՝ տան հետ զինծառայողների կապի ապահովման համար, վերականգնվել են «Տետրա» ստացիոնար բազային կայանները: Այժմ ակտիվ կերպով աշխատանքներ են կատարվում հաղորդակցության միջոցների մանրաչափացման, դրանց շարժունության մեծացման, զանգվածաեզրաչափքային բնութագրերի բարելավման ուղղությամբ:

Կապի զարգացման ևս մեկ կարևոր ուղղություն է հետախուզահարվածային և կրակային համալիրներում ժամանակակից միջոցների և կառավարման ավտոմատացված համակարգերի ներդրումը: Կիրառության մեջ են դրվել երևակայական (վիրտուալ) տեխնոլոգիաներ, որոնք ծրագրային ապահովման շնորհիվ գործում են ոչ թե «կապի հանգույցը մեկ բեռնամփոփում», այլ «կապի հանգույցը մեկ սկավառակի վրա» սկզբունքով: ՌԴ զինված ուժերում շարունակվում են աշխատանքները Երկրագունդը կարճալիք ռադիոկապի ցանցով և արբանյակային կապով պարփակելու ուղղությամբ: Ներկայումս Սիրիայում ՌԴ զորքը ռադիոէլեկտրոնային հետախուզության և ռադիոկապի ապահովման համար օգտագործում է 10 արբանյակից կազմված մի խմբավորում: Փորձարկվել են կապի գաղտնագրման ապարատուրայի (ԿԳԱ) արդիականացված միջոցների առաջին սերիական նմուշները: Դրանք կապուղային և բաժանորդային ռեսուրսների առումով օժտված են ավելի լայն հնարավորություններով, ինչպես նաև մատուցում են պաշտպանված «ԱյՓի» *(IP)* հեռախոսակապի ծառայություններ և գաղտնիացնում են արբանյակային կապուղիները: Զորքերում կիրառության մեջ են դրվել 6-րդ սերնդի ռադիոկայաններ: Պարզվում է, որ Սիրիայի տարածքում հատկապես պահանջված են արբանյակային կապի կրովի և շարժական կայանները, որոնք կիրառվում են ինչպես կառավարման կետերի միջև, այնպես էլ շարժունակ խմբերի հետ ուղղակի կապուղիների կազմակերպման համար:

Սիրիայում կապի համակարգի հիմք են դարձել պաշտպանված տեսակոնֆերենց-կապի շարժուն համալիրները, ավտոմոբիլային բազավորմամբ բազմագործառույթ հեռահաղորդակցային համալիրները և զրահատեխնիկայում տեղակայված միջին հզորությամբ ռադիոկայանները: Սիրիական զորքերի հետ կապի ապահովման համար մարտավարական օղակում շատ հաճախ օգտագործվել են սիրիական ստորաբաժանումներում ռադիոկապի իրենց միջոցներով գտնվող ռուսաստանցի զինվորական կապավորները:

Սիրիայի Արաբական Հանրապետությունում իրական մարտական օպերացիայի պայմաններում փորձարկվել է կապի ռուսաստանյան նոր վրա-

[5] Տես *Алексей Рамм.* Сирийский опыт определил развитие войск связи. Генерал-лейтенант Халил Арсланов – о состоянии войск связи, формате 4К и работах в области радиофотоники. «Известия», 20 октября 2017 (https://iz.ru/660204/aleksei-ramm/siriiskii-opyt-opredelil-razvitie-voisk-sviazi):

գետնյա տեխնիկայի աշխատանքը: Մասնավորապես՝ կիրառվել են Ռ-169 և Պ-380կ մարտավարական համալիրները: Դրանք կապի վերջին սերնդի տեխնոլոգիաներով աշխատող թվային միջոցներ են: «Բուկ-Մ2» ՁՀՀ-ների համար նախատեսված տվյալ ռադիոկայանները արտադրվում են Ռյազանի «Սոզվեզդիե» կոնցեռնում:

Կապի զորքերը պետք է կիրառվեն ՌԷՊ-ի զորքերի հետ համատեղ: Ի դեպ, մի հետաքրքրական փաստ. ռուս զինվորականները Սիրիայում երկու ռազմաբազաների տարածքում ճնշել են բջջային կապի (2 G և 3 G) ազդանշանները: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ԱԹԱ-ները (կվադրոկոպտերներ) կարող են կոնկրետ ազդանշանի ուղղությամբ թռչել ըստ հեռախոսահամարի:

Քանի որ ժամանակակից ռազմական հակամարտություններում պահանջվում է վերադաս և ստորադաս շտաբներին տեղեկույթի իրապես կայծակնային հաղորդում, անհրաժեշտ է հասնել մեծ թողունակությամբ բոլոր տեսակների կապով ապահովմանը, ինչպես նաև բոլոր տեսակների կապի համալիր կիրառմանը: Սրա հաշվառմամբ ռազմական կապի ոլորտում շինարարության առաջնահերթ խնդիրներից մեկը կապի ավտոմատացված թվային համակարգի ստեղծումն ու ծավալումն է: Խոսքը զորքերի կառավարման այնպիսի ավտոմատացված համակարգերի ստեղծման ու ներդրման մասին է, որոնցում ներառված լինեն Զինված ուժերի բոլոր տարրերը՝ սկսած ամեն մի մարտիկից մինչև հետախուզության կոնկրետ միջոցը, այդ թվում՝ տիեզերական: Նմանատիպ համակարգերի ստեղծման համար ներդրումներ են կատարում բոլորը, այդ թվում՝ անգամ ոչ մեծ պետությունները: Այս մոտեցումը առաջին հերթին ազդում է ստորաբաժանումների արձագանքման արագության և ճշգրտության վրա: Նման ուժի նկատմամբ 20-րդ դարի ավանդական բանակը, մինչև անգամ ակնհայտ թվային առավելության դեպքում, չի կարող հասնել հաղթանակի:

Ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդդիմամարտող կողմերը լայնորեն կիրառում են սպառազինության ոլորտում կատարված հեռանկարային մշակումները: Դա խստացնում է զորքերի կառավարմանը, հետևաբար՝ կապի համակարգին, ներկայացվող պահանջները: Առաջատար մասնագետների գնահատումներով՝ զորքերի և զենքի կիրառման արդյունավետության մեծացման գործում կապի համակարգի դերը համեմատելի է մարտական միջոցների թվաքանակի կամ մարտական հնարավորությունների նշանակալի մեծացման հետ:

Ինչպես նշվեց, կապի կարևոր և վերջին շրջանում առավել սրընթաց զարգացող տեսակներից է արբանյակային կապը, որը հնարավորություն է տալիս հուսալի կապով ապահովելու տարբեր կարգի բաժանորդների: Միևնույն ժամանակ, մարտի դաշտում ստորաբաժանումների կառավարման ապահովման հարցում, հատկապես՝ լեռնային տեղանքում, առանցքային դեր ունեն ռադիոկապի միջոցները: Խոսքն առաջին հերթին վեցերորդ սերնդի ռադիոկայանների մասին է: Դրանք հնարավորություն են տալիս կառուցելու

ընդլայնված թողունակությամբ ճանաչողական ռադիոկապի ցանցեր, որոնք արդյունավետորեն գործում են և՛ կազմակերպված, և՛ ոչ կանխամտածված խանգարումների պայմաններում:

Տվյալ սարքավորանքը հնարավորություն է տալիս բոլոր ձևերի և եղանակների մարտական գործողությունների վարման դեպքերում կազմակերպել ավտոմատ և ավտոմատացված բանելակարգերով «յուրաքանչյուրի կապը բոլորի հետ»: Բացի այդ, դրանք ունեն բազմակայանամեջ ավտոմատ վերահաղորդման բանելակարգ, ինչը հնարավորություն է տալիս լեռնային և միջին կտրտվածությամբ տեղանքում ստորաբաժանումների վարած գործողությունների ժամանակ առանց լրացուցիչ սարքավորանքի օգտագործման ռադիոկապ կազմակերպելու մեծ հեռավորությունների վրա: Նմանատիպ ռադիոկայանների շարքն են դասվում «Արգոն-է», «Ազարտ», «Անգենոն» և այլ ԳԿԱ ռադիոկայաններ:

Դրանք օժտված են շահագործման և խանգարումապաշտպանվածության տեսակետից մեծ հուսալիությամբ, նախատեսված են հետիոտն և շարժունակ բաժանորդների միջև գաղտնի թվային ԳԿԱ ռադիոկապի կազմակերպման համար՝ ընդհանուր օգտագործման ցանցերին միանալու հնարավորությամբ:

Նման կայանների տեխնիկական միջոցների մեծ արդյունավետությունը ապահովվում է աշխատանքի բանելակարգերի ու ձևերի մեծ հավաքածուով.

– բոլոր ռադիոկայանները կարող են աշխատել ինչպես նմանակային (անալոգային), այնպես էլ թվային բանելակարգերով,
– *խանգարումների հարմարվողական համակշռիչով* (ադապտիվ կոմպենսատոր) օժտված շարժուն ռադիոկայանները հնարավորություն են տալիս աշխատելու այնպիսի կանխամտածված և արտադրական խանգարումների պայմաններում, որոնք օգտակար ազդանշանը գերազանցում են 1000 անգամ, ինչի շնորհիվ հակառակորդի ՌԷՊ-ը փաստորեն չի կարողանում ճնշել դրանց աշխատանքը,
– ապահովվում է միևնույն հաճախականությամբ երկու ցանցերի՝ միմյանցից անկախ աշխատանքը. գերակա կապը, այն է՝ կա զբաղեցված կապուղին ավելի կարևոր կապի համար հատկացնելու հնարավորություն,
– ապահովվում է երկու կապուղիների միաժամանակյա ավտոմատ վերահսկումը:

Բացի այդ, ներկայումս տվյալ տեխնիկական միջոցները գոյություն ունեն ինչպես կրովի, այնպես էլ շարժուն տարբերակներով: Դրանք ի զորու են աշխատելու նաև ջրի տակ մինչև 1 մ սուզվելու դեպքում:

Արդեն այսօր մեզ անհրաժեշտ է ԶՈՒ-ն վերազինել դաշտային կապի հանգույցների և կառավարման շարժական կետերի արդիական համալիրներով, որոնք ի վիճակի լինեն կառավարման կետերին մատուցելու պահանջվող որակի կապի տարատեսակ ծառայություններ: Այդ ծառայություններից նշենք, օրինակ, տեսակոնֆերենց-կապը, տվյալների փոխանցումը,

էլեկտրոնային նամակագրության և ֆայլերի փոխանակումը, գրաֆիկական տեղեկույթի հետ կոլեկտիվ աշխատանքը, բաց և պաշտպանված հեռախոսակապը, տեղեկատու ծառայությունները և այլն:

ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի մասնակցությամբ տեղային պատերազմների և հակամարտությունների փորձը ցույց է տալիս, որ առաջիկա 20 տարիների համար որպես առաջնահերթություն դրվում է «սինթետիկ պատերազմի» հայեցակարգի շրջանակներում հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերազանցության հասնելու խնդիրը: Այդպիսով՝ Իրաքում, Հարավսլավիայում, Աֆղանստանում և Լիբիայում ձեռնարկված օպերացիաների ընթացքում դաշնադրային զորքերը հիմնական ջանքերը կենտրոնացրել են ոչ թե թշնամու կենդանի ուժի ոչնչացման, այլ պետությունների առավել կարևոր ռազմատնտեսական օբյեկտների և ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական նշանակությամբ կապի ենթակառուցվածքի ոչնչացման ուղղությամբ:

Կապի զորքերը հանդես են գալիս որպես մարտնչող զորքեր: Անգամ խաղաղ ժամանակ հավանական հակառակորդը մանրազնին կերպով ուսումնասիրում է, թե ինչպես են աշխատում մյուս կողմի համակարգերը, քանի որ մարտական գործողությունների դեպքում առաջին հարվածները միշտ հասցվում են կառավարման և կապի համակարգերին:

Վերջին շրջանի տեղային պատերազմների միջազգային փորձը և մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց են տալիս, որ կապի զորքերի զարգացման ու զորքերի օպերատիվ կառավարման համակարգի արդիականացումը կատարվում է հետևյալ ուղղություններով.

- անհրաժեշտ թողունակությամբ, օպտիկամանրաթելային մալուխներով և խտացման թվային ապարատուրայով օժտված ճյուղավորված ստացիոնար հաղորդալարային ցանցի ստեղծում,
- ունենալ արդիական պահուստային թվային ռադիոռելեային կապի գիծ, որը միավորի բոլոր դիվիզիաների ու գնդերի շտաբները և ցանկացած պահի կարողանա փոխարինել ստացիոնար հաղորդալարային ցանցը,
- ամբողջ տարածքը վերածածկող վերահաղորդմամբ հուսալի ճյուղավորված զերկարճալիք ռադիոկապի ապահովում: Ընդ որում, այդ կապը բարձրաստիճան պաշտոնատար անձանց հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում ստանձնելու կառավարումը և հրաման տալու անգամ իրենցից մի քանի աստիճան ցածր օղակների ցանկացած պաշտոնատար անձի,
- ժամանակակից պատերազմում կենսական կարևորություն ներկայացնող արբանյակային կապի զարգացում, հատկապես՝ կորպուսային շտաբների, ինչպես նաև հատուկ նախանշանակման առանձին զորամասերի հետ կենտրոնական շտաբի կապի ապահովմամբ,
- ծածկագրային տեխնիկայի զարգացում,
- կապի համակարգի զարգացման նպատակով հարկավոր է նաև կապի հին և նոր միջոցների համատեղելիության ապահովում՝ գործածությունից աստիճանաբար հանելով կապի հին միջոցները,

- կապի բոլոր համակարգերի պարտադիր զուգամիտում ԳՇ միասնական ավտոմատացված հրամանատարական կետում:

Այսպիսով՝ կապի համակարգը պետք է լինի շատ հուսալի, կապի միջոցները ձեռք են բերվում կա՛մ հայրենական արտադրողներից, կա՛մ վստահելի ռազմավարական դաշնակիցներից: Ռեստի արտադրանքի շատ մեծ շուկայի պայմաններում պետք է բծախնդրորեն ընտրել արտադրող գործընկերոջը և արտադրանքը:

В ВОЙСКАХ СВЯЗИ

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ СИСТЕМ СВЯЗИ В УСЛОВИЯХ ИЗМЕНЕНИЯ ХАРАКТЕРА ВОЙН

Г. С. АЛЕКСАНЯН, полковник запаса, ученый-аналитик Центра исследований оперативного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

На основе анализа специальной литературы отслеживаются основные изменения произошедшие в системах связи и в ее организации, на примерах локальных войн II половины XX и начала XXI вв.

Обобщение изложенного позволяет сформулировать приоритетные задачи, стоящие перед войсками связи РА по реорганизации и модернизации систем связи и управления в ВС РА.

IN THE SIGNAL CORPS

COMMUNICATION SYSTEMS DEVELOPMENT TRENDS IN THE CONTEXT OF THE CHANGE OF WARFARE NATURE

G. S. ALEXANYAN, Colonel (Ret.), Research Fellow, Center for Operational Art Studies, NDRU, MOD, RA

SUMMARY

Based on the analysis of special literature, the main changes that have occurred in communication systems and in its organization are tracked on the examples of local wars as of the second half of the 20th and the beginning of the 21th centuries.

Generalizing the foregoing, it is possible to formulate the priority tasks on the reorganization and modernization of communication and control systems in the RA Armed Forces facing the signal corps of the Republic of Armenia.

ԱԴՐԲԵՋԱՆ–ԻՍՐԱՅԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ա. Կ. ԲԱԴԱԼՅԱՆ, քաղաքագիտության մագիստրոս,
ՊԱՀՀ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան

Հարավկովկասյան տարածաշրջանում տիրում է բարդ աշխարհաքաղաքական իրավիճակ, որը պայմանավորված է այստեղ ներկայացված համաշխարհային ու տարածաշրջանային ուժային կենտրոնների ռազմաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի մրցակցությամբ և համընկնմամբ: Վերջին տարիներին այստեղ ավանդաբար գործող արտաքին դերակատարներին ավելացել է նաև Իսրայելը, որի հարավկովկասյան քաղաքականությունում կարևոր տեղ է զբաղեցնում Ադրբեջանը:

Ադրբեջանի և Իսրայելի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր* նրանց առնչությունները զարգանում են գերազանցապես քաղաքական, տնտեսական ու ռազմական ոլորտներում և տարածաշրջանում նպատակաուղղված են նրանց դիրքերի ամրապնդմանը:

ՀՀ ազգային անվտանգության տեսանկյունից Ադրբեջան–Իսրայել հարաբերությունների վերլուծությունը կարևոր է, քանի որ արցախա-ադրբեջանական սահմանին օգտագործվող սպառազինության և ռազմամթերքի որոշ տեսակներ, մասնավորապես՝ ԱԹԱ-ներ, Ադրբեջանը ձեռք է բերում Իսրայելից: Կարևոր հանգամանք է նաև ԱՄՆ-ում Ադրբեջանի շահերը առաջ մղող հրեական լոբբինգը, որի ազդեցությամբ, օրինակ՝ ԱՄՆ-ի Կոնգրեսը կասեցրեց իր ընդունած «Ազատությանն աջակցության ակտի» 907-րդ ենթաբաժնի գործողությունը**:

---

* Ադրբեջանի և Իսրայելի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1992 թ. ապրիլի 6-ին:

** Այդ բանաձևով նախատեսվում էր ֆինանսական և տեխնիկական աջակցություն հետխորհրդային նորանկախ հանրապետություններին և միևնույն ժամանակ, արգելվում էր որևէ աջակցություն Ադրբեջանին, քանի դեռ նա քայլեր չի ձեռնարկում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության շրջափակումը դադարեցնելու և ուժի կիրառումից հրաժարվելու ուղղությամբ (այս մասին ավելի հանգամանորեն տես “Restriction on assistance to Azerbaijan”. Section 907 of the United States Freedom Support Act, 24 October 1992 (http://www.nkr.am/en/documents/section-907-of-us-freedom-support-act)):

Ադրբեջան–Իսրայել հարաբերությունների զարգացումը պայմանավորող հիմնական գործոնները բխում են այդ երկու պետությունների անվտանգային նկատառումներից:

Իսրայելի հետ հարաբերությունների սերտացումը, որը Ադրբեջանը փորձում է Իրանին ներկայացնել որպես հակակշիռ հայ-իրանական հարաբերությունների զարգացմանը[1], Ադրբեջանի համար շարժառիթավորվում է հիմնականում հետևյալ հանգամանքներով.

- ձգտելով Արցախյան հակամարտությունը լուծելու ռազմական ճանապարհով՝ Ադրբեջանը տարածաշրջանում հարուցել է սպառազինությունների մրցավազքը՝ զենք-զինամթերք գնելով տարբեր պետություններից, այդ թվում՝ Իսրայելից, որը սպառազինությունների միջազգային շուկայի ակտիվ դերակատարներից է,
- էներգետիկ ռեսուրսների արտահանման ուղղությունները բազմազանեցնելու ձգտումը:

Իսրայելի պարագայում տվյալ սերտացումը պայմանավորող գործոններն են.

- ռազմատեխնիկական համագործակցության խորացումը. Ադրբեջանն Իսրայելից զենք գնող երկրորդ երկիրն է Հնդկաստանից հետո,
- Ադրբեջանի էներգառեսուրսները, որոնք երկու պետությունների առևտրատնտեսական հարաբերությունների գլխավոր բաղադրիչն են (Իսրայելը գնում է ադրբեջանական նավթի շուրջ 40 %-ը),
- Ադրբեջանի սահմանակցումը Իրանին. Իսրայելը Իրանին դիտում է ոչ միայն որպես իր հիմնական աշխարհաքաղաքական, այլև, առաջին հերթին, իր գոյությանն սպառնացող, ռազմավարական հակառակորդ, իսկ Ադրբեջանին՝ որպես Իրանի դեմ հետախուզական գործունեություն վարելու համար հենադաշտ,
- Ադրբեջանի հյուսիսում ապրող լեռնային հրեաները՝ որպես հրեաների և մահմեդականների խաղաղ գոյակցության հնարավորությունն ապացուցող հանգամանք:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքական ոլորտ

Ադրբեջան–Իսրայել քաղաքական հարաբերությունների հաստատումը հնարավոր դարձավ Խորհրդային Միության փլուզման և միութենական հանրապետությունների անկախացման հետևանքով:

Սակայն 1990-ական թթ. Ադրբեջան–Իսրայել հարաբերությունները բավականաչափ ցածր մակարդակի էին, դրանք ավելի շատ միջնորդավորված էին, քանի որ պայմանավորված էին Ադրբեջանի անկախացումից հետո նրա

[1] Տես *A. Galstyan.* What Azerbaijan wants from Israel? “The Hill”, 27 December 2016 (https://thehill.com/blogs/congress-blog/foreign-policy/311869-what-azerbaijan-wants-from-israel):

ռազմավարական դաշնակիցը դարձած Թուրքիայի հետ Իսրայելի հարաբերություններով[2]:

Դեռ 1990-ական թվականների սկզբներին նշմարվում էր ԱՄՆ-ի հովանու ներքո հնարավոր Իսրայել–Ադրբեջան–Թուրքիա դաշինքի ձևավորումը, որի հիմքում էներգետիկ համագործակցությունն էր: Թուրքիայի համար նման համագործակցությունը կարևոր էր, քանի որ նա ածխաջրածնային պաշարների տեսանկյունից աղքատ երկիր է: Իսրայելի համար, այդ դաշինքի կարևորությունը բացատրվում է այն հանգամանքով, որ նա փորձում էր Թուրքիայի միջոցով պառակտել իր նկատմամբ թշնամաբար տրամադրված մահմեդական պետությունների դաշինքը, իսկ Ադրբեջանի միջոցով՝ ճեղքել արաբական պետությունների էներգետիկ շրջափակումը[3]:

Ադրբեջանը կարևորում էր Թուրքիայի և Իսրայելի հետ համագործակցությունը՝ որպես տարածաշրջանում անվտանգության և համագործակցության նոր՝ իր համար նպաստավոր հեռանկար[4]:

Ինչպես նշում է քաղաքագետ Ալեքսանդր Մուրինսոնը, եռակողմ հարաբերությունները չեն կարող բացատրվել «բացառապես իշխանության քաղաքականությամբ կամ տնտեսական շահերով»: Թուրքիան, Իսրայելը և Ադրբեջանը «համախոհներ» են, որոնք այս «միասնությունն» ստեղծել են, քանի որ ունեն ընդհանուր թշնամիներ»[5]:

Այնուամենայնիվ, եռակողմ գործակցությունը դաշինք չդարձավ, քանի որ երեք պետությունների ընդհանուր արտաքին քաղաքական շահերը բավական չէին, որպեսզի հաստատվեին երկարատև դաշնակցային հարաբերություններ, ինչը պայմանավորված էր ինչպես թուրք-իսրայելական հարաբերությունների վատթարացմամբ, այնպես էլ Ադրբեջանում Ռուսաստանի և Իրանի ազդեցությամբ:

Դա հատկապես վառ դրսևորվեց 2002 թ., երբ Թուրքիան իսլամիստական ԱԶԿ-ի («Արդարություն և զարգացում» կուսակցություն) իշխանության գալուց հետո գերակա դարձրեց իր իսլամական քաղաքականությունը:

Այս իրողությունների բերումով Ադրբեջան–Իսրայել հարաբերությունները շարունակեցին զարգանալ երկկողմ ձևաչափով: Դրա համար լուրջ խթան դարձավ 1997 թ. օգոստոսին Իսրայելի վարչապետ Բ. Նետանյահուի

---

[2] Տես *A. Bashirova, A. Sozen.* The Role of Azerbaijan in Israel's Alliance of Periphery. "Middle East Review of International Affairs", Spring 2017, Vol. 21, Issue 1 (http://www.rubincenter.org/wp-content/uploads/2017/11/Bashirova-YC-au2-PDF.pdf):

[3] Տես *A. Murinson.* Azerbaijan-Turkey-Israel Relations: The Energy Factor, 4 September 2008 (http://www.rubincenter.org/2008/09/murinson-2008-09-04/):

[4] Տես *A. Veliev.* The Israel-Turkey-Azerbaijan triangle: present and future (https://www.ca-c.org/journal/2000/journal_eng/eng02_2000/08.vel.shtml):

[5] Տես *A. Murinson.* Turkey's entente with Israel and Azerbaijan: state identity and security in the Middle East and Caucasus. "Southeast European and Black Sea Studies", 2017, Vol. 17, Issue 1 (https://www.tandfonline.com/doi/full/10.1080/14683857.2016.1260801?scroll=top&needAccess=true):

պաշտոնական այցը Ադրբեջան[6]: Իսկ 2006 թ. խորհրդարանական ընտրություններից հետո դրանք թևակոխեցին նոր փուլ, երբ ձայների մեծամասնությամբ խորհրդարան անցավ «Մեր տունն Իսրայելն է» (ՄՏԻ) կուսակցությունը, որի ցուցակով պատգամավոր ընտրվեց ծնունդով ադրբեջանցի Ի. Շագալը[7]: Նա 2006–2009 թթ. դարձավ Կնեսետում Ադրբեջանի շահերի ներկայացուցիչը: Շագալի վարած գործունեության շնորհիվ Ադրբեջան ժամանեցին ՄՏԻ-ի խմբակցության մի շարք անդամներ, իսկ Կնեսետում Շագալի գլխավորությամբ ձևավորվեց Իսրայել–Ադրբեջան պատգամավորական բարեկամական խումբ[8]:

Երբ 2008 թ. սկվեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը, Ադրբեջան–Թուրքիա հարաբերություններում մի պահ առաջ եկավ անվստահություն, փոխարենը ավելի սերտացան ադրբեջանա-իսրայելական հարաբերությունները՝ որպես Թուրքիային հակակշիռ գործոն:

Իսրայելի համար Ադրբեջանի հետ հարաբերությունների խորացումը էական նշանակություն ուներ Թուրքիայի հետ հարաբերությունների վատթարացման պայմաններում՝ «Մավի Մարմարա» նավի միջադեպի հետևանքով, Գազայում Իսրայելի օդային հարվածներից 300 անչափահաս պաղեստինցիների զոհվելու հանգամանքով և «զրո խնդիր հարևանների հետ» Թուրքիայի որդեգրած քաղաքականության շնորհիվ Իրանի հետ հարաբերությունների բարելավման պատճառով[9]:

Երբ սկսվեց Ադրբեջան–Իսրայել հարաբերությունների խորացումը, Թուրքիան ոչ միանշանակորեն վերաբերվեց դրան: Առաջին պաշտոնական «բողոքի դրսևորումը» տեղի ունեցավ 2011 թ. Բաքվում, երբ Թուրքիայի դեսպան Հուլուսի Քիլիչը հայտարարեց, որ Ադրբեջանի իշխանությունները պետք է վերանայեն իրենց հարաբերությունները Իսրայելի հետ և սպառնաց, որ կարող են առաջացնել խնդիրներ՝ կապված Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի հետ:

Հարկ է նշել, որ թեև թուրքական իշխանությունները մի անգամ չէ, որ արեցին նմանատիպ հայտարարություն, Ադրբեջանը, այնուամենայնիվ, տեղի չտվեց, այլ հակառակը՝ ձեռնամուխ եղավ Իսրայելի հետ ռազմաքաղաքական համագործակցության խորացմանը, բարձրաստիճան պաշտոնյաների փոխադարձ այցելությունների ակտիվացմանը:

---

[6] Տես “İsrailli ekspert: Azərbaycan Cənubi Qafqazda geosiyasi proseslərin şəksiz lideridir”. “Azertag”, 12.09.2016 (https://azertag.az/xeber/Israilli_ekspert_Azerbaycan_Cenubi_Qafqazda_geosiyasi_proseslerin_seksiz_lideridir-991893):

[7] Տես “Knesset Members” (https://www.knesset.gov.il/mk/eng/mk_eng.asp?mk_individual_id_t=801):

[8] Տես “Azərbaycan–İsrail münasibətləri” (http://mfa.gov.az/files/file/Azerbaycan_-_Israil_munasibetleri_18.09.2014.pdf):

[9] Տես «Турция: новая роль в современном мире». Центр ситуационного анализа РАН. М., 2012 (https://www.imemo.ru/files/File/ru/publ/2012/2012_001_turkish.pdf):

Ինչ վերաբերում է Ադրբեջանի և Իսրայելի միջև իրավապայմանագրային ոլորտին, ապա այն կարգավորվում է 16 պայմանագրերով ու համաձայնագրերով, որոնցից պաշտոնապես նշված են 6-ը[10]: Կարող ենք ենթադրել, որ դրանց թիվը իրականում զգալիորեն մեծ է, սակայն մնացածը գաղտնի են:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ երկկողմ քաղաքական հարաբերությունների զարգացման հիմքում փոխադարձ քաղաքական և աշխարհատնտեսական շահերն են:

Առևտրատնտեսական, էներգետիկական և ռազմատեխնիկական ոլորտներ

Երկու պետությունները հատկապես կարևորում են համագործակցությունը առևտրի, էներգետիկայի և ռազմական ոլորտներում: Ընդսմին Իսրայելը Ադրբեջանին դիտում է որպես էներգակիրների ներկրման հիմնական ուղի, իսկ Ադրբեջանը Իսրայելին՝ որպես սպառազինության ու ռազմամթերքի մատակարարման այլընտրանքային աղբյուր:

Ադրբեջան–Իսրայել տնտեսական հարաբերությունների կառուցվածքում ընդհանուր առմամբ գերակշռում են էներգետիկ և ռազմական ոլորտները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ադրբեջան–Իսրայել տնտեսական հարաբերությունների բնույթն ու կառուցվածքը մեծապես պայմանավորված են ռազմաքաղաքական հարաբերությունների զարգացմամբ:

Էներգակիրների արտահանման քաղաքականության առաջնայնությունը Ադրբեջանին թելադրում է այսպես կոչված «ածխաջրածնակենտրոն» մոտեցում, այսինքն՝ արտաքին քաղաքականության շահերի իրականացման գործում առաջնային տեղ է հատկացվում էներգակիրներին:

Իսրայելի հետ ապրանքաշրջանառության մեջ նույնպես նավթամթերքը կազմում է Ադրբեջանի արտահանման ծավալների առյուծի բաժինը, իսկ Իսրայելից Ադրբեջան ամբողջ արտահանումը բաղկացած է զենք-զինամթերքից, հեռահաղորդակցային սարքավորանքից: Իսրայելական ընկերությունները բավական ակտիվ աշխատանքներ են կատարում սպասարկման, հեռահաղորդակցության և շինարարության ոլորտներում: Օրինակ՝ Իսրայելի հեռահաղորդակցման հիմնական մատակարար «Բեզեկը» 1994 թ. կնքված առևտրային պայմանագրով գնել է Ադրբեջանի հեռախոսային օպերացիոն համակարգի մեծ մասը[11] և մատուցում է հեռախոսագծերի անցկացման ծառայություններ: Մեկ այլ ընկերություն՝ «Բեքսելը» *(«Bakcell»),* իր գործունեությունն սկսել է 1994 թ. սկզբին՝ որպես Ադրբեջանի կապի նախարարության և իսրայելական ՁիԹիԱյԲի-ի (GTIB) համատեղ ձեռնարկություն՝ դառնալով Ադրբեջանի առաջին բջջային օպերատորը: Հեռահաղորդակցության զարգացման համար նա մի քանի տարի շարունակ ներդրել է

[10] Տես “Azərbaycan-İsrail münasibətləri” (http://mfa.gov.az/files/file/Azerbaycan_-_Israil_munasibetleri_18.09.2014.pdf):

[11] Տես *M. Perry.* “Israel's Secret Staging Ground”. “Foreign Policy”, 28 March 2012 (https://foreignpolicy.com/2012/03/28/israels-secret-staging-ground/):

շուրջ 60 մլն դոլար[12], իսկ 2004 թ. հունվարին ՁիԹիԱյԲի-ն դարձել է համատեղ ձեռնարկության 100 տոկոսի սեփականատեր՝ ձեռք բերելով Ադրբեջանին պատկանող 51 տոկոս բաժնեմասը և դրա դիմաց Ադրբեջանին վճարելով 5,5 մլն դոլար[13]:

Ադրբեջանի էներգետիկ ոլորտում ակտիվորեն գործում են տասնյակ իսրայելական ընկերություններ: Օրինակ՝ նավթի և գազի մատակարարման ոլորտներում բարձր տեխնոլոգիաներ տրամադրող իսրայելական «Մոդկոն Սիստեմս» ՍՊԸ-ն *(Modcon Systems Ltd)* Ադրբեջանում բացել է մի մասնաճյուղ[14]:

Երկկողմ հարաբերություններում կարևոր դեր խաղաց նաև Բաքու–Թբիլիսի–Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի կառուցման մասին 1999 թ. ընդունված որոշումը, որը քննարկվել է դեռ 1997 թ. Ադրբեջան Նետանյահուի կատարած այցի ժամանակ: Իսրայելը շահագրգռված էր, որպեսզի կասպիական նավթը տեղափոխվի Թուրքիայի Ջեյհան նավահանգիստ, այնտեղից էլ նոր նավթամուղով հասնի Իսրայել:

ԲԹՋ նախագիծը ԱՄՆ-ում հավանության արժանացավ հիմնականում հրեական լոբբինգի շնորհիվ: Այդ ժամանակ Իսրայելն ուներ զգալի դժվարություններ՝ կապված իր էներգետիկ պահանջմունքների բավարարման հետ, իսկ երրորդ կողմի միջոցով նավթ գնելը բավական թանկ էր: Հետևաբար, ԲԹՋ նախագիծը բխում էր նաև Իսրայելի շահերից: Եվ այսպես. եթե ԲԹՋ նավթամուղը տեղափոխեր տարեկան 50 մլն տոննա նավթ, ապա դա բավարար կլիներ Թուրքիայի և Իսրայելի նավթավերամշակման գործարանները բեռնելու համար: Ներկայումս իսրայելական նավթի 40 %-ը գալիս է Ադրբեջանից[15]:

Միևնույն ժամանակ, ԲԹՋ նախագծի միջոցով Իսրայելը մասնակցում է Ադրբեջանի տնտեսական բազմազանեցմանը, ինչը նպաստում է Ադրբեջանի նավթային շուկայի խոցելիության նվազեցմանը:

Չնայած Իսրայել–Թուրքիա հարաբերություններում պարբերաբար ի հայտ եկող լարվածությանը՝ ԲԹՋ նախագիծը Իսրայելին և Թուրքիային հնարավորություն է տալիս պահպանելու բարձր մակարդակի հարաբերություններ:

Ավելի ուշ Իսրայելի տարածքային ջրերում՝ Աշդոդ ծովափից 16 կմ հեռավորության վրա, հայտնաբերվել է 6 կմ խորությամբ նավթային դաշտ:

---

[12] Տես *V. Bayramov.* Azərbaycan-İsrail münasibətləri strateji tərəfdaşlıq xarakteri daşıyır. “Xalq qazeti”, 15.12.2016 (http://old.xalqqazeti.com/az/news/economy/79167):

[13] Տես *С. П. Ежов.* Векторы современной политики Азербайджана на Ближнем и Дальнем Востоке, 17.04. 2009 (http://www.idmedina.ru/books/islamic/?1277):

[14] Տես *I. Bourtman.* Israel and Azerbaijan's Furtive Embrace. “Middle East Quarterly”, Summer 2006, Vol. 13, N 3 (https://www.meforum.org/987/israel-and-azerbaijans-furtive-embrace):

[15] Տես *H. Kenion.* Top aid to Azerbaijan president: Israel important strategic partner. “The Jerusalem post”, 27 January 2015 (http://www.jpost.com/Israel-News/Top-aid-to-Azerbaijan-president-Israel-important-strategic-partner-389060):

Այս նախագծում Ադրբեջանի Պետական նավթային ընկերությանը՝ ԱՊՆԸ, *(SOCAR)* պատկանում է 92,44 % բաժնետոմս և հանդես է գալիս որպես իսրայելական «Շեմեն նավթի և գազի ռեսուրսներ» ՍՊԸ-ը (*«Shemen Oil & Gas Resources Ltd»)* կոնսորցիումի գործընկեր: Դրա հետ մեկտեղ Ադրբեջանի «Կասպից ծովի հորատման ընկերությունը» (ԿՀԸ՝ "*Caspian Sea Drilling Company"*, կամ *CDC)* դարձել է Իսրայելի ծովային նավահանգստում «Շեմեն» կառույցի զարգացման ծրագրի օպերատոր: 2012 թ. մայիսին ԿՀԸ-ն հորատման աշխատանքներ կատարելու համար ստացել է «Մեդ Աշդոդի» (*Med Ashdod)* տարածքի 5 %-ի համար լիցենզիա[16]: Դա ԱՊՆԸ-ի առաջին նավթարդյունահանումն ու հորատումն էին, որոնք կատարվել էին Ադրբեջանի տարածքից դուրս: Դա ԱՊՆԸ-ին հնարավորություն է տալիս ձեռք բերելու միջազգային փորձ և ընդլայնելու իր գործունեությունը՝ մուտք գործելով Թուրքիա, Վրաստան և այլ պետություններ[17]: Միևնույն ժամանակ, Իսրայելի համար կարևոր էր «Մեդ Աշդոդ» հորատման աշխատանքներում ադրբեջանական ընկերությունների՝ որպես նավթահանքերի հորատման աշխատանքների բազմամյա փորձ ունեցող կազմակերպությունների ներգրավվածությունը Իսրայելի էներգետիկ ռեսուրսների համակողմանի ուսումնասիրության գործում:

Չնայած այն հանգամանքին, որ երկու պետությունների միջև առևտրի ծավալները կազմում են տասնյակ միլիարդավոր դոլարներ, այնուամենայնիվ, այդ համագործակցության շնորհիվ ստեղծված եկամուտները առաջանում են հիմնականում սպառազինության և նավթամթերքի առևտրից:

Ադրբեջանի արտաքին, ինչպես նաև անվտանգային քաղաքականության վրա լուրջ ազդեցություն ունեցող մեկ այլ գործոն է ռազմականը կամ ավելի ստույգ ասած՝ Ադրբեջանի ռազմական ներուժի շարունակական մեծացումը այդ ոլորտում տարբեր պետությունների, մասնավորապես՝ Իսրայելի հետ համագործակցությամբ: Ընդսմին Ադրբեջանի և Իսրայելի ռազմական համագործակցությունը, բացի ռազմատեխնիկական ոլորտից, ներառում է նաև հետախուզական տեղեկույթի փոխանակումը:

Երկկողմ ռազմական համագործակցության ոլորտում կնքվել են մի շարք պայմանագրեր, սակայն դրանցից առավել կարևորը 2011 թ. կնքված 1,6 մլրդ դոլար արժողությամբ պայմանագիրն է, որը Ադրբեջանի պատմության մեջ ամենամեծն է: Այդ պայմանագրով ձեռք բերվեցին մեծ քանակությամբ ԱԹԱ-ներ[18], հակաօդային պաշտպանության համակարգեր՝ 1 «Բարաք»-8 ՍԱՄ համակարգ, 75 հատ «Բարաք»-8 ՍԱՄ, 1 հատ օդային որոն-

[16] Տես «Азербайджанская компания приступила к бурению на морском шельфе Израиля», 07.12.2012 (http://www.islamsng.com/aze/report/5820):

[17] Տես *M. Khalifa-Zadeh.* Israel and Azerbaijan: to counteract Iran. "Central Asia and the Caucasus", 2012, Vol. 13, Issue 3 (https://cyberleninka.ru/article/v/israel-and-azerbaijan-to-counteract-iran):

[18] Տես *Ü. Abdullayeva.* Azərbaycan-İsrail münasibətləri: düşmənimin düşməni dostumdur…. "Publika", 28 Mart 2012 (https://publika.az/news/qirmizi/57447.html):

ման էԼ/Մ-2080 «Կանաչ սոճի» ռադիոտեղորոշիչ, 5-ական «Հերոն» և որոնողական ԱԹԱ-ներ[19]:

Ըստ Ադրբեջանի պաշտոնական տվյալների՝ մինչ այժմ Ադրբեջանը Իսրայելից գնել է 4 մլրդ 850 մլն դոլարի ռազմական տեխնիկա[20]: Դա կազմում է Իսրայելի ռազմական արտադրանքի ընդհանուր արտահանման 13 %-ը[21]:

Իսրայելի սպառազինության ոլորտում առաջատար «Թադիրան» *(Tadiran)*, «ԲլյուԲերդ» *(BlueBird)*, «էլբիտ Սիստեմս» *(Elbit Sistems)* ընկերությունները Բաքվում գտնվող գրասենյակների շնորհիվ պահպանում են իրենց ուրույն տեղը Ադրբեջանի սպառազինությունների կատարելագործման ասպարեզում:

Սակայն ռազմական համագործակցությունը չի սահմանափակվում վերը նշվածով. կարևոր է ռազմական կրթության, ուսանողների փոխանակման ոլորտներում Թուրքիայի միջոցով կատարվող գործակցությունը, այդ թվում՝ գաղտնի: Իսրայելը կազմակերպել է Ադրբեջանի անվտանգության և հետախուզական ծառայությունների աշխատողների վերապատրաստում, ինչպես նաև ապահովում է բարձրաստիճան ադրբեջանցիների անվտանգությունը նրանց արտասահմանյան ուղևորությունների ժամանակ[22]:

Ադրբեջանը ձգտում է Իսրայելի հետ ռազմական համագործակցության շնորհիվ դառնալու Իսրայելի տարածքից երրորդ պետություն զենքի վաճառքի կամ տեղափոխման համար տարանցիկ կամ միջնորդ պետություն:

ԱԴՐԲԵՋԱՆ–ԻՍՐԱՅԵԼ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎՐԱ

Ադրբեջանա-իսրայելական ռազմաքաղաքական համագործակցության զարգացումը պետք է վերագնահատել՝ Հայաստանի անվտանգային ռիսկերի հաշվառմամբ: Ակնհայտ է, որ դա լուրջ անվտանգային սպառնալիք է Հայաստանի և Արցախի համար:

Ադրբեջանը ակնկալում է, որ Իսրայելի հետ սերտ հարաբերությունները կբարելավեն իր կերպարի միջազգային ընկալումը և կնպաստեն Վաշինգտոնում ադրբեջանամետ քաղաքականության որդեգրմանը[23]: Ադրբեջանը

[19] Տես *R. Weitz.* Azerbaijani Defense Policy and Military Power, 18 October 2012 (https://sldinfo.com/2012/10/azerbaijani-defense-policy-and-military-power/):

[20] Տես *N. Məmmədova.* Azərbaycan-İsrail əlaqələri zamanın qovşağında. “Xalq qəzeti”, 25 yanvar 2017 (http://www.anl.az/down/meqale/xalqqazeti/2017/yanvar/525181.pdf):

[21] Տես *Հ. Խաչիկյան,* Քննարկվել են Ադրբեջան–Իսրայել ռազմարդյունաբերական համագործակցության հարցեր: «Ռազմ.info», 2017 թ. հուլիսի 31 (https://razm.info/108355):

[22] Տես *S. Cagaptay, A. Murinson.* Good Relations between Azerbaijan and Israel. “The Washington Institute”, 30 March 2005 (https://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/good-relations-between-azerbaijan-and-israel-a-model-for-other-muslim-state):

[23] Տես *A. Murinson.* Opportunities and Challenges in Israeli-Azerbaijani relations.

ձգտում է ԱՄՆ-ում իսրայելական լոբբինգի միջոցով թուլացնելու հայկական լոբբինգի ազդեցությունը[24]: Ինչպես վերը նշվել է, իսրայելական լոբբինգը բավական հաջող կերպով օգնել է Ադրբեջանին «Ազատության աջակցության ակտի» 907-րդ ենթաբաժնի գործողությունը չեղյալ հայտարարելու առումով: Այդ բանաձևն ընդունվել էր 1992 թ. հոկտեմբերի 24-ին հայկական լոբբինգի ջանքերով[25]:

Հայաստանի և Արցախի անվտանգային շահերի առաջմղման վրա առանձնակի ազդեցություն ունի Ադրբեջանի և Իսրայելի համագործակցությունը ռազմական ոլորտում:

Իսրայելական արտադրության մի շարք զինատեսակներ Ադրբեջանը կիրառել է 2016 թ. ինչպես Չորսօրյա պատերազմում, այնպես էլ դրանից առաջ և հետո՝ հրադադարը խախտելու ժամանակ: Մասնավորապես՝ Ադրբեջանը իսրայելական արտադրության ԱԹԱ առաջին անգամ Արցախի դեմ կիրառել է 2011 թ., սակայն այն հայկական ուժերը ոչնչացրել են[26]: 2016 թ. ապրիլյան Չորսօրյա պատերազմի ժամանակ ադրբեջանական կողմը կիրառել է իսրայելական արտադրության «Հարոպ» («*Harop*») տեսակի ԱԹԱ-ներ, որոնցից 12-ը հայկական ուժերը հաջողությամբ խոցվել են[27]: Ադրբեջանը փորձել է ԱԹԱ-ների կիրառմամբ գործել հոգեբանական ազդեցություն, սակայն մի քանի տասնյակ դեպքերից միայն մեկում՝ ապրիլի 4-ին, հակառակորդին հաջողվել է նման ԱԹԱ-ով հարված հասցել քաղաքացիական ավտոբուսին, ինչի հետևանքով 7 մարդ զոհվել է[28]:

Մեկ այլ դեպքում, ըստ ԼՂՀ ՊԲ հրամանատարության հրապարակած նկարների, երևում է, որ ադրբեջանական կողմը ապրիլի 2-ին գործի է դրել «ԹանդերԲ» (“*ThunderB”)* տեսակի ԱԹԱ, մինչդեռ, կայքի հաղորդմամբ, Ադրբեջանի ԶՈՒ-ն նախկինում չէր հրապարակել այս զինատեսակներից ոչ մեկի մասին[29]:

“Caucasus International”, Summer 2012, Vol. 2, N 2 (https://www.academia.edu/35841674/Alexander_Murinson_Opportunities_and_Challenges_in_Israeli-Azerbaijani_relations):

[24] Տես *Ժ. Զարիֆյան,* Ամերիկահայկական լոբբին. Կառուցվածքը, մեթոդները և արդյունքները: «Ռազմավարական անվտանգային հետազոտություններ (գիտափորձագիտական մատենաշար)», հ. 2: Ե., 2014, էջ 354:

[25] Տես “Restriction on assistance to Azerbaijan” (http://www.nkr.am/en/documents/section-907-of-us-freedom-support-act):

[26] Տես *Dhrubajyoti Bhattacharjee.* Israel and Azerbaijan Relation: A Strategic Compulsion. “Indian Council of World Affairs”, 4 January 2017 (https://icwa.in/pdfs/IB/2014/IsraelandAzerbaijanRelationIB04012017.pdf):

[27] Տես «Տոնոյան. Արցախում հրադադարի ռեժիմ հաստատված չէ, կա կրակը դադարեցնելու մասին պայմանավորվածություն»: «PanArmenian.net», 2016 թ. ապրիլ 6 (http://www.panarmenian.net/arm/news/209674/):

[28] Տես *Ա. Հովհաննիսյան,* Ապրիլյան պատերազմի ռազմավարական վերլուծություն. Որոշ նկատառումներ «Ազգ-բանակ» համակարգում ՀՀ պաշտպանության կատարելագործման լույսով: «ՀԲ», 2017, հմ. 1–2 (էլեկտրոնային տարբերակը՝ (https://razmavaraget.files.wordpress.com/2017/07/armenian-army-n-1-2-2017.pdf)):

[29] Տես «Կիրառվել են ԱԹՍ-ներ, որոնց՝ ադրբեջանական զինանոցում առկայության

Իսրայելական ԱԹԱ-ների գործածման մեկ այլ դեպք տեղի է ունեցել 2017 թ. հուլիսին, երբ ադրբեջանական կողմը մարտական ԱԹԱ արտադրող իսրայելական «Ավիացիոն պաշտպանական համակարգերի» (*"Aeronautics Defense Systems")* ընկերության համաձայնությամբ փորձարկել է նոր «Օրբիտր 1 Կ» (*"Orbiter 1 K")* մոդելի ԱԹԱ-ներ, ինչի հետևանքով զոհվել են երկու հայ զինվոր[30]: Վերը նշված ընկերության նկատմամբ Իսրայելի դատախազությունը 2018 թ. օգոստոսին մեղադրանք էր առաջադրել, իսկ 2019 թ. հունվարին տվյալ ընկերության լիցենզավորումը դադարեցվել է հայկական ուժերին հարվածներ հասցնելու մեղադրանքով: Համաձայն մեղադրանքի՝ նշված ընկերության երեք բարձրաստիճան ղեկավարների պատճառով, որոնք կասկածվում են խարդախության, ինչպես նաև պաշտպանական արտադրանքի արտահանման վերահսկման մասին օրենքի այլ խախտումներում, ընկերությանը չի թույլատրվում զենք արտահանել մինչև դատավարության ավարտը[31]: Դատավարությունը դեռևս ընթացքի մեջ է, և հետագան դեռ պարզ չէ:

Կապված տվյալ մեղադրանքի հետ՝ ԱՄՆ-ում հայկական ամենաազդեցիկ լոբբինգային կազմակերպություններից մեկը՝ Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը, դիմել է ամերիկյան դիվանագիտական գերատեսչությանը՝ պահանջելով հրապարակային քննություն անցկացնել իսրայելական զենքի կիրառմամբ տեղի ունեցած այդ միջադեպի հարցով և կասկած հայտնելով, որ այդ ԱԹԱ-ները, ինչպես նաև իսրայելական արտադրության մյուս պաշտպանական համակարգերը, որոնք Ադրբեջանը գործածում է Արցախի և Հայաստանի դեմ, կարող են պարունակել ամերիկյան տեխնոլոգիաներ, ինչը հակասում է տարածաշրջանում խաղաղություն հաստատելու, պատերազմի վերսկսումը զսպելու և սպառազինությունների մրցավազքը կանխելու Վաշինգտոնի ջանքերին[32]:

Այսպիսով՝ թեև Իսրայելը ներգրավված չէ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցություններում և առանձնապես հետաքրքրված չէ հակամարտությամբ, այնուամենայնիվ, Ադրբեջանը նրանից գնած զենքերը կիրառում է արցախա-ադրբեջանական բախումների ժամանակ՝ հայկական կողմին պատճառելով մարդկային կորուստներ:

մասին հայտնի չէր»: «PanArmenian.net», 2016 թ. ապրիլի 8 (http://www.panarmenian.net/arm/news/209841/):

[30] Տես *J. Magid*. Israeli dronemaker said to have bombed Armenians for Azerbaijan faces charges. "The Times of Israel", 29 August 2018 (https://www.timesofisrael.com/israeli-dronemaker-said-to-have-bombed-armenians-for-azerbaijan-faces-charges/):

[31] Տես *J. A. Gross.* Licenses suspended for dronemaker accused of bombing Armenia for Azerbaijan. "The Times of Israel", 27 January 2019 (https://www.timesofisrael.com/licenses-suspended-for-dronemaker-accused-of-bombing-armenia-for-azerbaijan/?fbclid=IwAR3VBSh224449pqrWtf05EnJVc4dYLJ0RErBEqiZom-dQjkxzIVhkqkW66A):

[32] Տես *E. S. Chouldjian.* ANCA Calls for Investigation into Azerbaijan/Israel Arms Export Violation, 6 September 2018 (https://anca.org/press-release/anca-calls-for-investigation-into-azerbaijan-israel-arms-export-violation/):

Ադրբեջանին Իսրայելի տրամադրած ռազմական աջակցության ընդլայնումը ավելի է մեծացնում Ղարաբաղյան հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու Ադրբեջանի հավակնությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Փորձելով գնահատել Ադրբեջան–Իսրայել հարաբերությունների զարգացման դինամիկան և հեռանկարները՝ կարող ենք ասել, որ դրանք անկախության օրվանից ի վեր ապրում են կայուն զարգացում, հատկապես՝ ռազմական և տնտեսական ոլորտում:

Երկու պետություններն էլ ունեն անվտանգային խնդիրներ: Դրանք խթանում են նրանց միջև ռազմական համագործակցության աճումը, որը երկկողմ տնտեսական հարաբերությունների անկյունաքարն է:

Ապագայում նույնպես սպասվում է երկկողմ հարաբերությունների զարգացում, ինչի վկայությունն է ռազմական ու տնտեսական ոլորտների բարձրագույն ղեկավարների փոխադարձ այցելությունների ինտենսիվությունը:

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

АНАЛИЗ АЗЕРБАЙДЖАНО-ИЗРАИЛЬСКИХ ОТНОШЕНИЙ С ТОЧКИ ЗРЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА

А. К. БАДАЛЯН, магистр политических наук, ученый-аналитик Центра региональных стратегических анализов НИУО МО РА

РЕЗЮМЕ

С момента установления дипломатических отношений между Азербайджаном и Израилем их отношения развиваются преимущественно в политической, экономической и военной сферах и направлены на укрепление их позиций в регионе. При этом Израиль рассматривает Азербайджан в качестве одного из основных импортеров энергоносителей, в то время как для Азербайджана Израиль является альтернативным поставщиком вооружения и боеприпасов, а также может предоставить возможность стать транзитным государством или государством-посредником для продажи или перевозки оружия из Израиля в третье государство. В целом, ожидается дальнейшее развитие азербайджано-израильских отношений.

Поскольку Азербайджан применяет приобретенное у Израиля оружие против Арцаха, причиняя ему людские потери, а рост военной поддержки Израиля Азербайджану способствует усилению стремления последнего к разрешению Арцахского конфликта военным путем, то развитие азербайджано-израильского военно-քաղաքական сотрудничества является серьезной угрозой для безопасности Армении и Арцаха.

REGIONAL SECURITY

ANALYSIS OF AZERBAIJANI-ISRAELI RELATIONS IN TERMS OF THE RA NATIONAL SECURITY

A. K. BADALYAN, Master of Political Sciences, Research Fellow,
Center for Regional Strategic Analyses, NDRU, MOD, RA

SUMMARY

Since the establishment of diplomatic relations between Azerbaijan and Israel, their relations have been developing in the political, economic and military spheres predominantly, and are targeted at bolstering their positions in the region. Moreover, Israel considers Azerbaijan to be one of the main importers of energy resources, while Israel is an alternative supplier of weapons and ammunition for Azerbaijan, and may also provide the opportunity to become a transit or a mediator state for the sale or transportation of weapons from Israel to a third state. In general, further development of Azerbaijani-Israeli relations is expected.

Since Azerbaijan uses the weaponry purchased from Israel against Artsakh, causing the latter human losses, and the growth of Israel's military support to Azerbaijan contributes to its increased desire for the resolution of the Artsakh conflict by military means, the development of Azerbaijani-Israeli military-political cooperation is a serious threat to the security of Armenia and Artsakh.

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՋԱՎԱՐ

ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը
մասնակցել է Ռազմական սպորտի միջազգային խորհրդի համաժողովին

Երևան, 2019 թ. սեպտեմբերի 11

ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանն ընդունել է
Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության
զինվորական ոստիկանության գլխավոր վարչության պետի տեղակալ
գեներալ-մայոր Վիտալի Կոխի գլխավորած պատվիրակությանը

Երևան, 2019 թ. օգոստոսի 29

ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանն ընդունել է
ՀՀ-ում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան
Ն.Գ. տիկին Լին Թրեյսիին, ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանությունում
առաքելության ղեկավարի նորանշանակ տեղակալ
Քրիստոֆեր Սմիթին և նորանշանակ ռազմական կցորդ
գնդապետ Սկոտ Մաքսվելին

Երևան, 2019 թ. սեպտեմբերի 10

ՀՀ Պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանն ընդունել է
ՀՀ-ում Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան
Ն. Գ. Ջուդիտ Ֆառնուորտին՝ Հայաստանում նրա առաքելության
ավարտի կապակցությամբ

Երևան, 2019 թ. սեպտեմբերի 6

ԿԱՊԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋՈՑՆԵՐ*

ՌԴ թվային Ռ419Լ1 ռադիոռելեային կայան
(http://bastion-karpenko.ru/station-r-419l1/)

Արբանյակային կապի ռուսաստանյան Ռ-440 «Կրիստալ» կայան
(https://www.arms-expo.ru/news/meropriyatiya/na-vystavke-interpolitekh-2016)



Ամերիկյան Յուբիկվիտի Էյրֆայբեր-24
թվային ռադիոռելեային կայան
(https://www.msdist.co.uk/ubiquiti/airfiber/airfiber-24-pair)

---

* Ներդիրում ներկայացված կապի բոլոր միջոցների ՄՏԲ-ները տես էջ 119:

Ռադիոկապի ռուսաստանյան «Արգոն-Է» համալիր (http://elektrosignal.ru/wp-content/uploads/2018/06/Argon-E%60.pdf)

ԿԱ-տիրույթի ռուսաստանյան Ռ-168-5ԿՆԵ կրովի ռադիոկայան (http://www.sozvezdie.su/catalog/nosimaya_radiostantsiya_r1685kne)

«Հարիս» ՌՖ-7800Հ-ՄՓ ամերիկյան ռադիոկայան (https://www.satellitetoday.com/government-military/2014/03/20/harris-corporation-introduces-new-hf-tactical-radio/)

ՌԱԶՄԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (ԵԱՏՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)*

Գ. Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի պետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական տնտեսական միության կարևոր խնդիրներից մեկը բոլոր անդամ պետությունների միջև այնպիսի կապերի ձևավորումն է, որը հնարավորություն կտա հաղթահարելու միաբևեռ համագործակցային մոդելի** թերությունները և ԵԱՏՄ շրջանակներում համագործակցությունը դարձնելու բոլոր մասնակիցների համար «չպարտադրված» փոխշահավետ: Նման պահանջն ավելի արդիական է դառնում արևմտյան պետությունների կիրառած պատժամիջոցների համատեքստում: Դա առաջ է բերում ԵԱՏՄ տարածքում ինքնաբավ զարգացման անհրաժեշտություն, ինչն անհնար է առանց երկրների զարգացման և նրանց միջև համագործակցության հիմքում նորամուծական*** մոտեցումների և համատեղ արդյունավետ արտադրական արժեշղթաների ձևավորման:

ԵԱՏՄ պետությունների միջև հարաբերությունների կառուցման նորամուծական հարացույցը ենթադրում է առաջին հերթին հավասարակշիռ տարածական զարգացում, այդ թվում նաև զարգացածության տարբեր մակարդակ ունեցող պետությունների միջև համահարթեցում: Ընդ որում, տվյալ գործընթացում որպես կարևոր *մեխանիզմ* (այն ենթադրում է մասնակցող

---

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-5B047 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

** Իսկ ԵԱՏՄ-ն ունի հենց այդպիսի համագործակցային մոդել, քանի որ բոլոր անդամ պետությունների համար հիմնական գործընկերը Ռուսաստանն է, իսկ մյուս պետությունների միջև համագործակցության մակարդակը շատ թույլ է:

*** *Инновация* կամ *«Innovation»,* տերմինի դիմաց այժմ մեզանում տարածում է ստացել «նորարարություն» բառը, որն արդեն վաղուց զբաղված է՝ լինելով «*новаторство*»-ի համարժեքը (տես, օրինակ, *Ա. Ս. Ղարիբյան,* Ռուս-հայերեն բառարան: Ե., 1977, էջ 600): Խորհրդային տարիներին կար «изобретательство и новаторство», որը թարգմանվում էր «գյուտարարություն և նորարարություն»: Տարբերությունն այն է, որ ***«նորարարությունը»*** կապված է ցանկացած նորույթի հետ, մինչդեռ «նորամուծությունն» արտահայտում է ***սկզբունքային նորույթի*** իմաստ:–*Խմբ.:*

տարբեր սուբյեկտների միջև հարաբերությունների դրսևորման ձևից սկզբունքային տարբերակում), որը կարող է ապահովել տարբեր երկրների անկախ ընկերությունների, գիտահետազոտական ու կրթական կազմակերպությունների և պետական կառավարման մարմինների միջև արդյունավետ փոխգործություն, հանդես է գալիս տնտեսության կլաստերացումը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐԹԱԿ

Դեռ 1970-ական թվականներից կլաստերները և արդյունաբերական գոտիները ներկայանում են որպես զարգացած երկրների համաշխարհային մրցունակության ապահովման և միջազգային արտադրական արժեշղթաներին այդ երկրների մասնակցության հիմք՝ նպաստելով գիտելիքների, տեխնոլոգիաների ու փորձի փոխանակմանը և վերածվելով տարածաշրջանային նորամուծական համակարգերի ձևավորման ու զարգացման կարևոր գործոնի[1]: Կլաստերների դասական սահմանումը, այն է՝ «իրար փոխկապված, աշխարհագրորեն մոտ, ինչպես նաև միմյանց հետ մրցակցող և համագործակցող ընկերությունների, մասնագիտացված մատակարարների, ծառայություններ մատուցող կազմակերպությունների, հարակից արդյունաբերական ճյուղերում գործող ֆիրմաների, ինչպես նաև տվյալ ոլորտի հետ առնչություն ունեցող հաստատությունների՝ համալսարանների, գործակալությունների և առևտրային ընկերակցությունների համախումբ»[2], լիովին չի արտացոլում ինտեգրացիոն կառույցների շրջանակներում կլաստերացման սկզբունքների կիրառելիության հնարավորությունները: Տվյալ դեպքում խնդիրն ավելի շատ ինտեգրացիոն կառույցի ներսում արտադրական արժեշղթաների ձևավորումն է, ինչը կարող է հանգեցնել անդամ պետությունների ձեռնարկությունների արտադրողականության սիներգետիկ աճմանը: Նման մոտեցումը նույնպես լիովին համապատասխանում է կլաստերացման էությանը: Այսպես. ըստ Զեկոբսի և Դը Մանի՝ պարտադիր չէ, որ կլաստերները ձևավորվեն արդյունաբերական (արտադրական) նմանությունների կամ տարածքային մերձության սկզբունքի հիման վրա, այլ դրանց հիմքում կարող են լինել պարզապես արտադրական փոխկապվածությունները[3]: Ըստ այդմ էլ տարբերակում են կլաստերների երեք հիմնական տեսակներ.

1. արդյունաբերական ճյուղերի տարածաշրջանային կենտրոնացում,
2. արտադրական սեկտորներ կամ դրանց խմբավորումներ,
3. արտադրական արժեշղթաներ:

Ինտեգրացիոն կառույցների ներսում կլաստերացումը հիմնավորելու համար առավել կիրառելի է Դրևինգի մոտեցումը, ըստ որի՝ տնտեսական

[1] Տես *Piotr Pachura*. Regional Cohesion: Effectiveness of Network Structures. Heidelberg, 2010, P. 26:

[2] Տես *M. E. Porter*. Location, Competition, and Economic Development: Local Clusters in a Global Economy. “Economic Development Quarterly”, 2000, N 14:

[3] Տես *D. Jacobs, A. P. De Man.* Clusters, industriebeleid en ondernemingsstrategie. “Economisch Statistische Berichten”, 1995, N 3998:

կլաստերը «մեզոտնտեսական ցանցային կառույց է, որը հիմնված է տեխնոլոգիապես փոխկապված տարբեր ճյուղերի՝ իրավաբանորեն անկախ ձեռնարկությունների միջև ուղղահայաց և հորիզոնական, տարածաշրջանային և միջտարածաշրջանային ինտեգրացիայի ձևերի համադրության վրա»[4]:

Նկատենք, որ Եվրասիական տնտեսական տարածքում կլաստերների ձևավորումն ունի իր օբյեկտիվ հիմքերը՝ պայմանավորված Խորհրդային Միությունում հանրապետությունների միջև գոյություն ունեցող փոխկապվածություններով: Օրինակ՝ Կալյուժնովան գտնում է, որ ԽՍՀՄ-ում կլաստերների նմանակներ կարելի է համարել նախկին տարածաարտադրական համալիրները[5]: Մասնավորապես՝ այդպիսին կարելի է համարել ծանր ռազմական տեխնիկայի՝ տանկերի արտադրության ոլորտը: Իսկ Սիմոնովը նկատում է, որ ռազմական արտադրանքի կենտրոնացումը հատուկ ռազմաարդյունաբերական-արտադրատեխնոլոգիական համալիրներում հիմնականում արդարացված էր: Նա խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրը բնորոշում է որպես «մշտապես գործող, փոխպայմանավորված այնպիսի ռազմաարդյունաբերական արտադրությունների ամբողջություն, որոնք առանձնացել են իրենց «արմատական» ճյուղերից, բայց չեն կորցրել դրանց հետ օրգանական արտադրատնտեսական կապերը»[6]:

Հենց այդ տրամաբանությամբ էլ նպատակահարմար է ԵԱՏՄ շրջանակներում ձևավորել այնպիսի կլաստերներ (մասնավորապես՝ ռազմաարդյունաբերության ոլորտում), որոնց մասնակցություն կունենան բոլոր անդամ պետությունները կամ դրանցից մի քանիսը: Իսկ ռազմաարդյունաբերությունը՝ որպես համակարգաստեղծ ոլորտ, որն ունի այլ արտադրական ոլորտների հետ համագործակցության զգալի ներուժ, կարող է վերածվել նմանատիպ կլաստերների ձևավորման համար իդեալական հարթակի: Նկատենք, որ ԵԱՏՄ անդամ պետություններում արդյունաբերության զարգացման նպատակով կլաստերների ձևավորման հնարավորությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացված են նույնիսկ Միության հիմնադիր պայմանագրում, որտեղ արդյունաբերական կլաստերների ձևավորումը «համատեղ տեխնոլոգիական հարթակների» հետ դիտվում է որպես մի գործիք, որը հնարավորություն կտա արդյունավետ կերպով իրականացնելու միության շրջանակներում անդամ պետությունների միջև արդյունաբերական համագործակցությունը[7]:

---

[4] *С. Р. Древинг.* Кластерная концепция устойчивого развития экономики. СПб., 2009, с. 34:

[5] Տես *Н. Я. Калюжнова.* Конкурентоспособность российских регионов в условиях глобализации. М., 2003, с. 47:

[6] *Н. С. Симонов.* Военно-промышленный комплекс СССР в 1920–1950 гг.: темпы экономического роста, структура, организация производства, управление. М., 1996, с. 27:

[7] Տես «Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր», 29.05.2014, բաժ. XXIV, հոդ. 92 (https://docs.eaeunion.org/ru-ru/Pages/DisplayDocument.aspx?s=bef9c798-3978-42f3-9ef2-d0fb3d53b75f&w=632c7868-4ee2-4b21-bc64-1995328e6ef3&l=540294ae-c3c9-4511-9bf8-aaf5d6e0d169&EntityID=3610):

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵԱՏՄ շրջանակներում կլաստերացման մեխանիզմով հարաբերությունների կառուցման հնարավորությունները քննարկենք ըստ ԵԱՏՄ Բարձրագույն խորհրդի մշակած միության տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների, որոնք «հանձնարարական» բնույթի առաջարկությունների ձևով ներկայացվել են 2015 թվականին[8]: Ըստ այդ փաստաթղթի՝ անդամ պետությունների ինտեգրացիոն ներուժի գնահատման համար առաջարկվում են որոշակի չափանիշներ: Դրանք պետք է պայմանավորեն այն ոլորտների ընտրությունը, որոնց զարգացումը կարող է հանգեցնել տվյալ պետության և ընդհանուր միության տնտեսական աճին:

Այդ ոլորտներն են.

1. Ոլորտներ, որոնց զարգացումը կպայմանավորի բազմարկչային (մուլտիպլիկատիվ) էֆեկտ ամբողջ տնտեսության համար: Այս ուղղությունն առաջին հերթին ենթադրում է էներգետիկ, ֆինանսական, տեղեկատվական և տրանսպորտային ոլորտների զարգացում, որոնք ակներև համակարգաստեղծ նշանակություն ունեն ցանկացած պետության տնտեսության համար: Ինտեգրացիոն համագործակցության համատեքստում դրանց զարգացումը ենթադրում է ընդհանուր օգտագործման ենթակառուցվածքների ապահովում այնպես, որ անդամ պետություններից որևէ մեկում դրանց բացակայությունը չհանգեցնի ինտեգրման հնարավոր առավելություններից օգտվելու «խտրականության»: Նկատենք, որ տրանսպորտային ենթակառուցվածքների դեպքում նման մոտեցման կիրառումը խիստ դժվար է, քանի որ Հայաստանը, օրինակ, այլ անդամ պետությունների հետ ընդհանուր սահման չունի: Ավելի իրատեսական է համագործակցությունը ֆինանսական և տեղեկատվական դաշտում, որտեղ իրականացվող քաղաքականության միասնականացման պահանջները նույնպես ամրագրված են միության հիմնադիր պայմանագրում[9]: Դա կարող է զգալիորեն նպաստել մատուցվող ծառայությունների բազմազանեցմանը, որակի բարձրացմանը և սակագների նվազեցմանը:

Ինչ վերաբերում է էներգետիկ ոլորտին, ապա ինտեգրացիոն կառույցի ձևավորման հենց սկզբից այս ոլորտում ծավալվելիք համագործակցության առավելությունները դիտվել են որպես ինտեգրման հիմք (դա հիմնավորված է այն փաստով, որ ԵԱՏՄ անդամ պետություններից երկուսն էներգակիրների խոշոր արտահանողներ են, իսկ մյուս երեքը՝ դրանք ներկրող և դրանց

[8] Տես «Об Основных направлениях экономического развития Евразийского экономического союза». Решение от 16 октября 2015 г., № 28, сс. 22–23 (http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_makroec_pol/SiteAssets/%D0%A0%D0%B5%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5%20%E2%84%9628%20%D0%9E%D0%9D%D0%AD%D0%A0.pdf):

[9] Տես «Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր», բաժ. 5, հոդ. 23 և բաժ. 16:

կիրառմամբ էլեկտրաէներգիա արտադրող պետություններ): Սակայն յուրաքանչյուր համագործակցող պետություն ունի էներգետիկ ոլորտի զարգացման հեռանկարներ, որոնք ոչ միշտ են համընկնում միության ընդհանուր հեռանկարների հետ: Օրինակ՝ էներգետիկ ոլորտի ներուժի արդյունավետ օգտագործման խնդիրը Հայաստանին պարտադրում է ոչ թե վերածվել արդեն ռազմավարական նշանակությունը կորցրած ածխաջրածնային ռեսուրսների սպառման շուկայի, այլ հանդես գալ որպես վերականգնվող էներգիայի աղբյուրներն արդյունավետ կերպով շահագործող երկիր: Հենց այդ ուղղությամբ էլ անհրաժեշտ է Հայաստանում զարգացնել էներգետիկ ոլորտի կլաստերացման քաղաքականությունը, որի հիմքում, մեր կարծիքով, պետք է դրվի տարածքային զարգացման անհամաչափության հարթեցման մտադրությունը: Տվյալ դեպքում անհրաժեշտ է շեշտադրել փոքր էներգետիկայի զարգացումը, ինչը հնարավորություն կտա կրճատելու կախվածությունը էներգիայի մատակարարման աղբյուրից:

2. Ներմուծման հրատապ փոխարինման անհրաժեշտություն[*] և (կամ) ԵԱՏՄ այլ անդամ պետությունների հետ համագործակցության շնորհիվ ներմուծման փոխարինման ներուժ ունեցող ոլորտներ: Այս չափանիշը շեշտադրում է երրորդ երկրներից կատարվող ներմուծումը փոխարինելու հնարավորությունների օգտագործումը: Սակայն, մեր կարծիքով, «ներմուծման փոխարինում» կամ այս ենթատեքստում դրան համարժեք «ԵԱՏՄ շրջանակներում տնտեսական համագործակցության խորացում» հասկացությունները Հայաստանի համար վերլուծություններ կատարելիս պահանջում են կիրառման որոշակի զգուշավորություն: Մասնավորապես, թույլ տարատեսակված (թե՛ ապրանքային, թե՛ աշխարհագրական առումներով) արտաքին առևտրի կառուցվածքի պայմաններում համագործակցության սահմանափակումը միայն ԵԱՏՄ անդամ պետություններով չի կարող համարվել խնդրի արդյունավետ լուծում: Օրինակ՝ Հայաստանի համար կարող է շահավետ դիտվել գազի, նավթի և ուրանի հանքաքարի ներկրումը հարևան Իրանից՝ ցածր սակագնի, տեղափոխման նվազ ծախսերի, տարանցիկ երկրի անհրաժեշտություն չլինելու հիմնավորմամբ, առավել ևս ներկայումս, երբ ԵԱՏՄ-ի և Իրանի միջև կնքվել է Ազատ առևտրի գոտու ձևավորման ժամանակավոր համաձայնագիր[**]: Միևնույն ժամանակ, ներմուծման նշված ուղղության համար ԵԱՏՄ շրջանակներում գործընկերության հիմնավորմամբ որպես այլընտրանք շրջանառում է նաև Ղազախստանի տարբերակը: Մինչդեռ, այս հանձնարարականի անտեղի, ոչ հիմնավոր կիրառման հնարավորությունը կարող է հանգեցնել այն մտայնությանը, թե ժամանակակից գերազատական միջազգային առևտրատնտեսական կապերի պայմաններում փորձ է արվում

[*] Փաստաթղթի հայերեն տարբերակում օգտագործված է «բարձր արդիականություն ունեցող ոլորտներ» արտահայտությունը, որի հետ համաձայն չենք:

[**] Ազատ առևտրի գոտու ստեղծման համաձայնագիրն ստորագրվել է 2018 թվականի մայիսի 17-ին Աստանայի տնտեսական համաժողովի ժամանակ, վավերացվել է Ռուսաստանի խորհրդարանում 2018 թ. նոյեմբերին և Իրանի խորհրդարանում՝ 2019 թ. հունիսի 10-ին:

ստեղծելու նոր ավտարկիա, որի բացասական հետևանքները, ի դեպ, արդեն քառորդ դար չենք կարողանում հաղթահարել: Ինչ վերաբերում է ընդհանրապես Հայաստանում ներմուծման փոխարինման անհրաժեշտությանը, ապա այդ խնդիրը ունի մշտական հրատապություն, և կարող է լուծվել միայն տնտեսության կառուցվածքում էական տեղաշարժերի պարագայում: Տարածաշրջանային կլաստերների ձևավորման տեսանկյունից տվյալ ուղղությունն ընձեռում է ամենալայն հնարավորությունները, քանի որ միության շրջանակներում համագործակցող այն պետությունների համար, որոնք ունեն ներմուծման հրատապ փոխարինման խնդիր, բավական արդյունավետ լուծում կարող է լինել անմիջական մասնակցությունը ներմուծվող ապրանքների արտադրության որոշակի փուլերին: Դա հատկապես արդարացված է ռազմաարդյունաբերական կլաստերների պարագայում (դրա մասին ավելի մանրամասնորեն կխոսենք աշխատության հաջորդ բաժնում):

3. Երրորդ երկրներ արտահանման աճի և տարատեսակման ներուժ ունեցող ոլորտներ, որտեղ ինտեգրացիոն փոխգործությունը պետք է ծավալվի հիմնականում իրացումային և մարկետինգային քաղաքականության, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղություններով: Մեր կարծիքով՝ սա ԵԱՏՄ զարգացման այն հիմնական ուղղությունն է, որի ներուժային հնարավորությունները պետք է լինեն արդյունավետ ինտեգրացիայի հիմքը: Միության այլ անդամ պետությունների հետ համագործակցությունը կարող է դառնալ ներուժային հնարավորությունների արդյունավետ իրացման նախապայման այնպիսի ճյուղերի համար, ինչպիսիք են քիմիական արդյունաբերությունը (կաուչուկի, անվադողերի, պլաստմասսայի, պարարտանյութերի, դեղորայքի արտադրության մասով), մեքենաշինությունը (զգալի գիտական բաղադրիչով և նվազ նյութատար ենթաճյուղերի առումով), թեթև արդյունաբերությունը, սննդարդյունաբերությունը, ոսկերչությունը և այլն[10]: Զարգացման այս չափանիշի պարագայում նույնպես կարևոր ուղղություն է միության մի շարք պետություններում (Ռուսաստան, Բելառուս, Հայաստան) ռազմաարդյունաբերության զարգացումը համատեղ կլաստերների ձևավորման ճանապարհով՝ համաշխարհային շուկայում Ռուսաստանի գերակշռող դիրքի հաշվառմամբ: Իհարկե, այդ առնչությամբ կարևոր է Ռուսաստանի քաղաքականությունը, որի համար միության այլ անդամ պետությունները սպառազինությունների և ռազմական նախանշանակման այլ արտադրանքի սպառման ավանդական շուկաներ են, և ռազմաարդյունաբերության ոլորտում այդ պետությունների հետ համագործակցությունը (համատեղ արտադրությունների զարգացման առումով) կարող է չբխել Ռուսաստանի շահերից:

4. Միության ներսում մրցակցային առավելություններ և մասնագիտացման հեռանկարներ ունեցող ոլորտներ, ինչը ենթադրում է ԵԱՏՄ-ում արտադրության գործոնների վերաբաշխմամբ դրանց տրամադրում առավել

[10] Այս արտադրական ուղղությունների ինտեգրալ համեմատական առավելությունների և արտահանման ներուժի վերլուծությունը (առանձին ապրանքային խմբերով) ամբողջությամբ տես *Գ. Հարությունյան,* ՀՀ արտաքին առևտրի հետագիծը համեմատական առավելությունների բազմաչափ համակարգում: Ե., 2013:

արդյունավետ ընկերություններին և այդպիսով անդամ պետությունների տնտեսությունների ընդհանուր արդյունավետության մեծացում, թեև դրա հետևանքով հնարավոր է նաև տեղի ունենա արտադրության ծավալների որոշակի կրճատում: Ակներև է, որ այս ուղղությունը նախորդ ուղղության «մասնավոր դեպքն» է: Տրամաբանորեն, այն բոլոր ոլորտները, որոնք երրորդ երկրներ արտահանման ծավալների մեծացման ներուժ ունեն, միության շուկայում նույնպես դիրքավորվելու մեծ հնարավորություն կունենան: Մյուս կողմից՝ միության 170 մլն-ոց շուկան արդեն իսկ լուրջ շարժառիթ է արտադրության ծավալների ընդլայնման և շուկայի գրավման ռազմավարության մշակման համար: Թերևս այն հանգամանքը, որ Հայաստանն այսօր ունի արտահանման տարատեսակման և կառուցվածքի բարելավման լրջագույն խնդիրներ, առնվազն ինտեգրման այս փուլում խանգարում է արտահանման ռազմավարական մոտեցումների մշակման ժամանակ միության և համաշխարհային շուկաները դիտելու որպես տարբեր թիրախային դաշտեր: Այնուամենայնիվ, տարբերակումն անհրաժեշտ է, ինչը պայմանավորված է մաքսային արտոնությունների և սահմանափակումների, փոխադրման և տարանցման ծախսերի, շուկայի հագեցվածության և տարողության, որակի նկատմամբ պահանջների և այլ հանգամանքներով: ԵԱՏՄ շրջանակներում այս ուղղությամբ տարածաշրջանային կլաստերների ձևավորումը կարող է նպատակահարմար դիտվել միայն այն ժամանակ, երբ լինի խնդիր «ներքին» մրցակցային առավելություններն իրացնելու նաև միության սահմաններից դուրս համատեղ ուժերով: Նկատենք, որ այս դեպքում նույնպես հնարավոր է, որ որոշ պետությունների շահերը բախվեն, քանի որ միջազգային կլաստերների ձևավորումը մշտապես ուղեկցվում է մրցակցային առավելությունները այլ պետություններին փոխանցելու վտանգով:

5. Ավելացված արժեք ստեղծող միջազգային և միութենական արտադրական շղթաներին անդամ պետությունների մասնակցության և դրանցում ներկայության ընդլայնման հեռանկար ունեցող ոլորտներ, որոնց զարգացումը կապահովի անդամ պետությունների դերի մեծացում համաշխարհային ավելացված արժեքի ստեղծման գործում: Սա զարգացման բավական գայթակղիչ ուղղություն է, հատկապես, երբ այն դիտում ենք մեծ ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրական շղթաներում Հայաստանի ներառվելու հեռանկարների տեսանկյունից: Այսօր միջազգային արտադրական շղթաներում ներառված ոլորտ կարելի է համարել ադամանդագործությունը, բայց արդյունավետության դիտակետից այն կարելի է ներուժային համարել միայն այն դեպքում, երբ վերամշակվող ադամանդը Հայաստանից ոչ թե լրիվությամբ արտահանվի, այլ դրա մի մասը հենց Հայաստանում վերածվի պատրաստի արտադրանքի՝ ադամանդե զարդերի: Ըստ տարբեր վերլուծությունների՝ այդպիսին են համարվում նաև թեթև արդյունաբերությունը, շինանյութերի արտադրությունը, ճշգրիտ ճարտարագիտությունը և դեղագործությունը[11]:

[11] Տես «Республика Армения в Евразийском экономическом союзе. Первые результаты». М., 2018, сс. 46–47:

6. Ոլորտներ, որոնց զարգացումը հնարավորություն կտա «հետևող» տնտեսական աճից (catch up growth) անցում կատարելու առաջանցիկ տնտեսական աճի՝ շնորհիվ նոր տեխնոլոգիաների ներգրավման և ստեղծման, այլ կերպ ասած՝ *«ապագայի ոլորտներ» (նանոտեխնոլոգիաներ, «3D» տպագրություն, ֆոտոնիկա, ռոբոտատեխնիկա, արտադրության ավտոմատացում, կենսատեխնոլոգիա, էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ և այլն):* Անշուշտ, սա այն ուղղությունն է, որը պետք է պայմանավորի ՀՀ տնտեսության և ընդհանուր միության հետագա զարգացումը, քանի որ ենթադրում է դիրքավորում համաշխարհային շուկայի այն տիրույթում, որտեղ դեռևս առկա է որոշակի վակուում: Մարդկային ներուժի զարգացումը, գիտատեխնիկական առաջընթացը և նվազ ծախսատարությունը շեշտադրող այս ուղղությունը կարող է միության անդամ պետությունների համար դառնալ միակ հնարավորությունը կենսաշրջանի նախնական փուլերն արդեն անցած տեխնոլոգիաներ ներմուծողի կարգավիճակը փոխելու դրանք արտահանողի կարգավիճակի: Այս ուղղությամբ Հայաստանի զարգացման հեռանկարները կապվում են առավելապես ՏՀՏ ոլորտի և ավտոմատացված արտադրական տեխնոլոգիաների (թվածրագրային կառավարմամբ հաստոցներ, սարքավորանք, մշակող կենտրոններ) արտադրության հետ: Միաժամանակ, պետք է նկատել, որ սրանք հենց այն ոլորտներն են, որոնց զարգացումն առավել իրատեսական է կլաստերացման մեխանիզմի կիրառմամբ, քանի որ պահանջում է գիտահետազոտական, ֆինանսական, արտադրական ենթակառուցվածքների արդյունավետ, փոխշահավետ և փոխկապված գործարկում:

7. Բարձր աստիճանի պետական միջամտությամբ կամ մասնակցությամբ հատկանշվող ոլորտներ, որտեղ հնարավոր կլինի ուղղակիորեն կիրառել ինտեգրացիոն միջոցառումները, դրանով իսկ ապահովել զգալի տնտեսական էֆեկտ: Թվում է՝ կլաստերացման տեսանկյունից այս ուղղությունը չի կարող որևէ հետաքրքրություն ներկայացնել, քանի որ բարձր մակարդակի պետական միջամտությունը (և մասնակցությունը) հաճախ նվազեցնում է ձեռնարկատիրական գործունեության նյութական շահագրգռվածությունը և արդյունավետության հասնելու խթանները, մինչդեռ կլաստերացումն ինքնին ենթադրում է արդյունավետության մեծացման ուղիների որոնում: Սակայն, մեր կարծիքով, տարածաշրջանային կլաստերների ձևավորման պարագայում պետական մասնակցությունն ավելի շատ հանդես կգա որպես առավելություն, քան խոչընդոտ, քանի որ պետական քաղաքականության շրջանակներում առաջադրված նպատակները կդառնան ավելի իրագործելի:

ԵԱՏՄ-ՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն ներուժի իրացման հիմնական ուղղությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի արդյունավետ ինտեգրումը պետք է ընթանա ոչ թե ԵԱՏՄ տարբեր մարմինների որոշումներով նախապես սահմանված սցենարով, այլ

ինտեգրացիոն ուղղություններին համապատասխան մշակված իր ռազմավարությամբ և առավելագույնս հաշվի առնի մեր պետության անվտանգային խնդիրները (այդ թվում նաև սպառազինությունների ներմուծումից կախվածության թուլացում, ռազմավարական նախանշանակման արտադրատեսակներով ինքնապահովման ձգտում, տեխնոլոգիական խզվածքի հաղթահարում) և տնտեսական արդյունավետության չափորոշիչներով: Այս նկատառումներով առաջարկում ենք ԵԱՏՄ-ում Հայաստանի ինտեգրացիոն ներուժն ուղղորդել ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացմանը և այս ոլորտում ԵԱՏՄ պետությունների հետ համագործակցության ընդլայնմանը տարածաշրջանային կլաստերների ձևավորման ճանապարհով: Ռազմաարդյունաբերությունն այն ոլորտն է, որի զարգացումը և ԵԱՏՄ շրջանակներում տեղի ունեցող համագործակցությունը հիմնավորվում են ինտեգրացիոն ներուժի գնահատման վերը թվարկված բոլոր չափանիշներով.

- ռազմաարդյունաբերությունն ունի համակարգաստեղծ նշանակություն և զարգացման պարագայում կարող է ամբողջ տնտեսության համար ապահովել բազմարկչային դրական էֆեկտ (*առաջին չափանիշ*): Բացի այդ, Հայաստանը տարեկան ռազմական ծախսերին է ուղղում զգալի ֆինանսական միջոցներ (2018 թվականին՝ ՀՆԱ-ի 4,8 %-ը[12]), որոնք տնտեսական աճի վրա խթանիչ ազդեցություն չեն գործում, այլ հակառակը՝ խոչընդոտում են տնտեսական զարգացմանը: Ռազմաարդյունաբերության զարգացման պարագայում ռազմական ծախսերի մի զգալի մասը հետ կվերադառնա տնտեսություն՝ զարգացումն էապես խթանող էֆեկտով,
- Հայաստանը մեծ կախվածության մեջ է սպառազինությունների ու ռազմական տեխնիկայի ներմուծումից և խնդիր ունի բարձրացնելու ՍՈՏ-ով ինքնապահովման աստիճանը, ինչպես նաև բազմազանեցնելու դրանց ներմուծման ուղղությունները (*երկրորդ չափանիշ*),
- Հայաստանում ռազմաարդյունաբերության զարգացման համար առկա են նշանակալի նախադրյալներ՝ բարձրորակ մարդկային կապիտալ, գիտահետազոտական հաստատություններ, արտադրական ավանդույթներ, ոլորտը զարգացնելու պետության պատրաստակամություն: Հաշվի առնելով խորհրդային տարիներին ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման գործում Հայաստանի ունեցած հսկայական դերը և պահպանված որոշակի գիտաարտադրական ներուժը՝ կարող ենք ասել, որ ռազմաարդյունաբերությունը նաև միության ներսում մրցակցային առավելություններ ու մասնագիտացման հեռանկար ունեցող ոլորտ է (*չորրորդ չափանիշ*),
- հայտնի է նաև, որ ռազմաարդյունաբերությունն ավանդաբար հանդես է գալիս որպես նոր տեխնոլոգիաների առաջագնաց և առանձնանում է համաշխարհային տնտեսության տեխնոլոգիական «նոր օրակարգն»

[12] Տես “SIPRI Military Expenditure Database” (https://www.sipri.org/databases/milex):

ընդունելու ճկունությամբ (արհեստական բանականություն, մեծածավալ տվյալներ, իրերի համացանց, ռոբոտատեխնիկա, ինքնակառավարվող մեքենաներ, «3D» տպագրություն, քվանտային հաշվարկներ), ինչպես նաև առաջանցիկ տնտեսական աճին նպաստելու կարողությամբ* (*վեցերորդ չափանիշ*): Ավելին. կլաստերային զարգացման հեռանկարներն առավել հիմնավորված են բարձրտեխնոլոգիական արտադրական ոլորտներում, և տնտեսության կառուցվածքի որակական բեկման գործընթացն անհրաժեշտ է սկսել հենց այս ոլորտից,

- ռազմաարդյունաբերությունը հատկանշվում է պետության բարձր աստիճանի մասնակցությամբ, իսկ միջազգային համագործակցությունը, առավել ևս, իրականացվում է պետական խիստ վերահսկողության սահմաններում (*յոթերորդ չափանիշ*), ինչն ավելի հավանական է դարձնում ԵԱՏՄ տարածքում արտածին (էկզոգեն) եղանակով կազմակերպված կլաստերների ձևավորումը:

Այսպիսով՝ ԵԱՏՄ շրջանակներում ռազմաարդյունաբերության ոլորտում իրականացվող համագործակցությունը, որը ծավալվում է կլաստերների կամ համատեղ արտադրական արժեշղթաների ձևավորման մեխանիզմով, կարող է հնարավորություն ընձեռել նախագծելու արդիական սպառազինությունների նոր նմուշներ, էժան աշխատուժի ներգրավման շնորհիվ հասնելու ծախսերի զգալի տնտեսման և բազմազանեցնելու արտահանման շուկաները՝ շղթայական դրական էֆեկտ ապահովելով ոչ միայն Հայաստանի, այլև միության անդամ այլ պետությունների համար: Մասնավորապես՝ այս ուղղությամբ համագործակցելու ներուժ ունեն Հայաստանը, Ռուսաստանը և Բելառուսը: Թեև կլաստերի ձևավորումից առավել կշահի այն պետությունը, որտեղ աշխարհագրորեն տեղակայված կլինի կլաստերը, այնուամենայնիվ, այլ պետություններ նույնպես կունենան էական օգուտներ՝ շնորհիվ նորամուծությունների անընդհատ գեներացման և գիտելիքների, կարողությունների, արտադրական հմտությունների հոսքերի:

Խոսքը վերաբերում է այնպիսի նորամուծական կլաստերների ձևավորմանը, որոնք Հայաստանին հնարավորություն կտան մասնակցելու ռազմաարդյունաբերական արտադրանքի արտադրությանը դրա կենսաշրջանի նախնական փուլերում (օրինակ՝ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական մշակումներ կատարելով), իսկ այնուհետև միության մի այլ պետությունից (օրինակ՝ Բելառուսից կամ Ռուսաստանից) որպես վերջնական արդիական սպառազինություն ձեռք բերելու բավական էժան գնով, քանի որ դրանց նախագծման ու մշակման աշխատանքները կատարվել են Հայաստանում: Մեկ այլ օրինակ. Հայաստանը կարող է արտադրել ռազմական նախանշանակման արտադրանքի մասեր, դետալներ, համալրող սար-

* Դրա հիմնավորումները բերվել են հեղինակի «Հայաստանը «Նոր տնտեսության» ճանապարհին. ռազմարդյունաբերություն» հոդվածում (տես «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովի նյութեր: Ե., 2019, էջ 172–188):

քավորանք և դրանք արտահանել ԵԱՏՄ գործընկեր երկրներ՝ վերջնական արտադրանքի ստացման համար, ինչպես նաև ինքը կարող է հանդես գալ որպես ներկրվող տարբեր բաղադրիչներ հավաքող և վերջնական արտադրանք թողարկող երկիր: Մասնագիտացումը պայմանավորված կլինի կլաստերի տեղակայման, կառուցվածքի, նպատակային շուկայի առանձնահատկություններով:

Հայաստանում ռազմաարդյունաբերական կլաստերների ձևավորման ներուժը պայմանավորված է այնպիսի բարձրտեխնոլոգիական արտադրությունների գործարկման հնարավորություններով, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրության, քիմիական, ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական արդյունաբերության և այլ ճյուղերը: Ներկայացնենք նորամուծական և բարձրտեխնոլոգիական մի շարք ուղղություններ, որոնց զարգացումը շաղկապված է ռազմաարդյունաբերության հետ*.

- ✓ տարբեր տեսակի միակցիչների (արդյունաբերական նշանակությամբ) արտադրություն,
- ✓ գերբարձր հաճախականության սարքերի (զտիչներ, գումարիչներ, բաժանիչներ, կամրջակներ, ճյուղավորիչներ, պտտական անցումներ և այլն) նախագծում և արտադրություն,
- ✓ ռադիոտեխնիկական և ալեհավաքային համակարգեր,
- ✓ լազերային տեխնիկա և կապի միջոցներ,
- ✓ չափիչ սարքերի, տվիչների, կատարող հանգույցների արտադրություն,
- ✓ ռոբոտաշինություն,
- ✓ կոմպոզիտային նյութերի արտադրություն,
- ✓ տարբեր տիպի բյուրեղների աճեցում,
- ✓ անօդաչու թռչող ապարատների արտադրություն,
- ✓ փոքր հեռահարությամբ հրթիռների արտադրություն,
- ✓ ալմաստի վերամշակում (այն լայն կիրառություն ունի միկրոէլեկտրոնիկայում, քվանտային համակարգիչների, միջուկային ռեակտորների արտադրությունում և սարքաշինությունում):

Անշուշտ, Հայաստանի աշխարհատնտեսական շահերի տեսանկյունից ԵԱՏՄ-ում ռազմաարդյունաբերական կլաստերների ձևավորման նպատակադրումն ունի բազմաթիվ հիմնավորումներ և նախադրյալներ: Սակայն, մյուս կողմից, այս ոլորտում համագործակցությունը կապված է մի շարք բարդությունների հետ, որոնք խոչընդոտում են դրա ընդլայնմանը: Այդպիսիք են.

- ✓ ռազմաարդյունաբերության համաշխարհային շուկայի բարձր աստիճանի մենաշնորհացումը (այդ թվում նաև Ռուսաստանի մասնակցութ-

* Բարձրտեխնոլոգիական արտադրությունների մի մասը ներկայացված է ըստ «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովում «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի» (ԵրԿՄԳՀԻ) տնօրեն Մեր Մարկոսյանի ելույթի (տես *Մեր Մարկոսյան, ՀՀ* ռազմարդյունաբերության արտահանման ներուժի զարգացումը (http://www.mindiaspora.am/res/Hamajoxovner/2017/6/Eluytner/24/Mher_Markosyan.pdf)):

յամբ), որտեղ հիմնական դերակատարները վարում են ակնհայտորեն հովանավորչական քաղաքականություն,

- ✓ Հայաստանը Ռուսաստանի համար սպառազինությունների արտահանման ավանդական շուկա է, ու թեև Ռուսաստանի սպառազինությունների արտահանման կառուցվածքում դեպի Հայաստան արտահանման տեսակարար կշիռը այնքան էլ մեծ չէ (2008–2018 թթ. տվյալներով՝ 0,3 %), այնուամենայնիվ, Հայաստան ներմուծվող սպառազինությունների 95,9 %-ը* Ռուսաստանից է: Հետևաբար, Ռուսաստանը կարող է շահագրգռված չլինել Հայաստանում ռազմաարդյունաբերության զարգացման և, առհասարակ, ռազմաարդյունաբերության ոլորտում իր ունեցած մրցակցային առավելությունները ԵԱՏՄ անդամ գործընկերների միջև «վերաբաշխելու» հեռանկարում,
- ✓ կլաստերների ձևավորման վերջնանպատակը, այնուամենայնիվ, շահույթի առավելարկումն է, և նույնիսկ այն դեպքում, երբ նախաձեռնությամբ հանդես է գալիս պետությունը, դրանցում էական դերակատարում ունեն մասնավոր ընկերությունները, իսկ կլաստերում դրանց ներառվելու համար անհրաժեշտ են ոչ թե միջպետական համաձայնագրեր, այլ բարենպաստ պայմաններ (ներդրումային և հարկային արտոնությունների, պետություն մասնավոր համագործակցության համար նախադրյալների տեսքով),
- ✓ այս ուղղությամբ համագործակցող պետությունների օրենսդրահիրավական դաշտերի անհամապատասխանությունը, գիտահետազոտական և կրթական ծրագրերի չհամաձայնեցվածությունը, պետական, առևտրային, ֆինանսական մարմինների միջև ցածր աստիճանի փոխադարձ վստահությունը,
- ✓ համագործակցող պետությունների միջև ընդհանուր սահման չունենալը, Հայաստանի տնտեսական շրջափակման փաստը, ինչպես նաև ռազմական անկայունության դաշտում գտնվելու հանգամանքը,
- ✓ երրորդ պետությունների հետ ԵԱՏՄ անդամ պետությունների աշխարհաքաղաքական և տնտեսական գործընկերության առանձնահատկությունները: Խոսքը մասնավորապես վերաբերում է Ադրբեջանի հետ գործընկերությանը, որն սպառազինությունների խոշոր ներկրող է և գործընկեր ինչպես Ռուսաստանի (2008–2018 թթ. տվյալներով՝ Ադրբեջանին բաժին է հասնում Ռուսաստանից սպառազինությունների արտահանման մոտ 3 %-ը), այնպես էլ Բելառուսի համար (13,3 %)**:

Խոչընդոտները, իհարկե, բավական շատ են, սակայն, եթե հաշվի առնենք ԵԱՏՄ շրջանակներում ծավալվող գործընկերության հավակնոտ նպա-

* Ցուցանիշները հաշվարկվել են հեղինակի կողմից www.sipri.org կայքում գեներացված տվյալների հիման վրա, որոնք կարող են նաև լրիվությամբ չարտացոլել երկու երկրների միջև սպառազինությունների առևտրի իրական պատկերը:

** Ցուցանիշները հաշվարկվել են http://armstrade.sipri.org/armstrade/page/values.php կայքէջից գեներացված տվյալների հիման վրա:

տակները, կարող ենք ասել, որ բարձրտեխնոլոգիական (և հատկապես ռազմաարդյունաբերական) ոլորտում կլաստերացման մեխանիզմի կիրառումը փոխշահավետ համագործակցության խորացման և համատեղ ջանքերով համաշխարհային շուկայում արդյունավետ դիրքավորման հնարավորությունները տնտեսական տեսանկյունից դարձնում են ոչ այնքան անիրատեսական: Խնդիրը պահանջում է գլխավորապես դիվանագիտական ու քաղաքական լուծումներ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է խուսափել նաև միության անդամ պետությունների չհիմնավորված ու տնտեսապես չարդարացված փոխսերտաճման և փոխկախվածության միտումներից՝ ԽՍՀՄ փլուզումից հետո ձևավորված իրողությունների նման օրինակներին ապագայում չբախվելու համար:

Անհրաժեշտ է միության ընդհանուր շահերի ասպարեզում հասնել այնպիսի փոխհամաձայնության, որ Հայաստանի տնտեսական ու քաղաքական շահերն ունենան նույն առաջնահերթությունը, ինչ և այլ անդամ պետությունները: Իհարկե, շահերը միշտ էլ ունենում են բախման որոշակի ներուժ, ուստի ինտեգրացիոն այս իրողությունների պարագայում հանրապետությունը մշտապես պետք է պահպանի բոլոր ուղղություններով իր այլընտրանքային զարգացման հնարավորությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միանշանակ է, որ միջազգային մակարդակում կլաստերների ձևավորումը ներկայանում է որպես համագործակցող պետությունների նորամուծական զարգացման արդյունավետ մեխանիզմ և հնարավորություն է տալիս հասնելու տնտեսական զարգացման առաջանցիկ տեմպերի՝ մասնակից պետությունների մրցակցային առավելությունների սիներգետիկ էֆեկտի հաշվին: Միևնույն ժամանակ, ռազմաարդյունաբերության ոլորտում միջազգային համագործակցությունը որոշակի բարդություններ է ենթադրում՝ պայմանավորված առավելապես տնտեսական և աշխարհաքաղաքական շահերի հակադրմամբ: Սակայն ԵԱՏՄ տարածքում համագործակցության հայտարարված առաջնահերթությունները և ուղղությունները անհրաժեշտություն են դարձնում ռազմաարդյունաբերության ոլորտում տարածաշրջանային կլաստերների ձևավորումը, ինչը կարող է զգալի դրական տնտեսական էֆեկտ ապահովել թե՛ Հայաստանի, թե՛ ԵԱՏՄ անդամ այլ պետությունների համար՝ սպառազինությունների նոր նմուշների նախագծման և արտադրության, նոր շուկաների գրավման, ռազմաարդյունաբերության ոլորտում արդիական տեխնոլոգիաների ներդրման առումներով:

ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի գիտական-վերլուծաբան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռազմաարդյունաբերության ոլորտի պետական կարգավորումը պայմանավորված է սոցիալ-մշակութային գործոններով, պետության զարգացման ընտրված ուղղությունով, տնտեսական կազմակերպվածքով, քաղաքական շահերի առանձնահատկություններով և այլ իրողություններով: Միևնույն ժամանակ, այն պետք է համապատասխանի ժամանակի պահանջներին և ազգային անվտանգությանն ուղղված մարտահրավերներին: Հետևաբար՝ ժամանակի հրամայականն է որոշակիացնել ՀՀ ռազմաարդյունաբերության ոլորտում պետական կարգավորման բարելավման ուղղությունները միջազգային միտումների հաշվառմամբ:

1. ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ռազմաարդյունաբերական ոլորտի պետական կարգավորման ներկայիս միտումները սերտորեն կապված են ընդհանուր տնտեսության պետական կարգավորման նոր հարացույցի հետ, ինչը ենթադրում է կառավարման հին սկզբունքների հաղթահարում: Նախկինում դրանք պիտանի էին ավանդական կառավարչական գործողությունների համար, սակայն անարդյունավետ են հասարակական զարգացման նոր ռիսկերի և դժվարությունների առաջացման դեպքում: Ավելին. մեծ թվով զարգացած պետություններում պետական կառավարման նոր հարացույցը ենթադրում է տնտեսությունում, այդ թվում՝ ռազմաարդյունաբերական ոլորտում ձևավորվող միտումների երկարաժամկետ կանխատեսում և ռազմավարությունների, ինչպես նաև պլանային կողմնորոշիչների մշակում:

Մյուս կողմից՝ ռազմաարդյունաբերության պետական կարգավորման նոր հարացույցը նաև նախատեսում է, որ զարգացած պետությունների օրինակով ձեռնարկված համակարգային բարեփոխումները պետք է բխեն ոչ միայն պետական կառավարման մարմինների և բուն կառավարման բարեշրջական զարգացման օրինաչափություններից, այլև, ընդհանուր առմամբ հասարակության սոցիալ-տնտեսական զարգացումից: Նախ. հասարակութ-

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-5B047 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

յանը պետք է ուժեղ պետական համակարգ, քանի որ ազգային անվտանգություն կարող է հուսալի կերպով ապահովել միայն ուժեղ, իրավական և ժողովրդավարական պետությունը: Երկրորդ. սկզբունքային կարևորություն ունեն պետական կառավարման հրապարակայնությունը, հստակությունը և կանխատեսելիությունը: Երրորդ. պետական կառավարման արդյունավետությունը մեծ մասամբ կախված է տաղանդավոր ու լավ կրթված կազմակերպիչ-ղեկավարներից: Չորրորդ. արդյունավետ պետական կառավարումը հնարավոր է պետական մարմինների գործառույթների իրականացման պայմանով՝ ոչ միայն ստաժավոր ղեկավարների և քաղծառայողների, այլև փորձառու կադրերի առկայության դեպքում: Հինգերորդ. պետական և ռազմական կառավարման արդյունավետության մեծացման կարևորագույն պայման է ժամանակակից կառավարչական և կազմակերպական մշակույթի դերի աճումը[1]: Վերջինս՝ որպես տնտեսական ոլորտում պետական կարգավորման բարելավման կարևոր գործոն, ենթադրում է մրցունակ կրթություն–որակյալ աշխատուժի ձևավորում–մասնավոր հատվածի զարգացում շղթայի արդյունավետ գործարկում: Ինչպես այդ, այնպես էլ մասնավոր հատվածում ու պետական կառավարման համակարգում կառավարչական գիտելիքների ու փորձի լրացման նպատակով կարևոր է կրթություն–աշխատաշուկա կապի խթանումը՝ կրթական ծրագրերում չափորոշիչները մշակելիս աշխատաշուկայի պահանջները հաշվի առնելու միջոցով, այդ թվում՝ տեսական ու գործնական պարապմունքների որակի բարելավմամբ:

Ընդ որում, նշված շղթայի կայացածությունը և ամրությունը լիովին պայմանավորված են պետություն–մասնավոր հատված գործընկերությամբ: Ռազմաարդյունաբերության ոլորտում պետության և մասնավոր հատվածի գործակցության արդյունավետ համակարգի ձևավորումը ենթադրում է այնպիսի փոխկապված ու համակարգված միջոցառումներ, որոնք նպատակաուղղված լինեն կայուն համագործակցային կապերի հաստատմանն ու դրանց հետևողական և անընդհատ զարգացմանը: Նման համակարգ ունեցող զարգացած արևմտյան պետություններում մշակվում և իրականացվում են ռազմաարդյունաբերությանը վերաբերող ռազմավարություններ, ծրագրեր և նախագծեր: Օրինակ՝ մշակվում է փոքր ձեռնարկատիրության զարգացման ռազմավարություն, ըստ որի՝ տնտեսվարման տվյալ եղանակը, դրվելով համագործակցային կազմավորումների ձևավորման հիմքում, դառնալու է այդ համակարգի հիմնական բաղադրիչը:

Ռազմաարդյունաբերության ոլորտում պետություն–մասնավոր հատված գործընկերության կարևոր մասերից է նաև տեխնոլոգիաների փոխանակման ապահովումը: Օրինակ՝ ԱՄՆ-ի անընդհատ կատարելագործվող նորմատիվային-իրավական բազան ոչ միայն սահմանել է համաշխարհային շուկայում

[1] Տես *В. П. Гриднев.* Повышение эффективности государственного управления в условиях динамического развития России. «Управленческое консультирование», 2015, № 8 (https://cyberleninka.ru/article/n/povyshenie-effektivnosti-gosudarstvennogo-upravleniya-v-usloviyah-dinamicheskogo-razvitiya-rossii):

ազգային մրցունակության աճմանը վերաբերող պետական–մասնավոր փոխազդեցության մեխանիզմները, այլև դարձել է դրանց իրագործման և հետագա զարգացման սկզբունքորեն նոր ենթակառուցվածքի ձևավորման հիմք[2]: Տեխնոլոգիաների առևտրայնացման ԱՄՆ-ի օրենսդրությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի.

- *կազմակերպական բլոկ*՝ օրենքներ, որոնք սահմանում են տեխնոլոգիաների առևտրայնացման գծով առավել լայն իրավասությունները՝ դրանք տալով այնպիսի գերատեսչությունների, ինչպիսիք են պաշտպանության, էներգետիկայի, առողջապահության և սոցիալական ապահովության նախարարությունները, Ազգային գիտական հիմնադրամը և այլն,
- *փոքր գործարարությանը տեխնոլոգիաների փոխանցման բլոկ*՝ օրենքներ, որոնք կարգավորում են փոքր գործարարության ոլորտում նորամուծական գործունեությունը, փոքր գործարարության սուբյեկտների կողմից տեխնոլոգիաների առևտրայնացումը, ֆինանսական աջակցությունը տարբեր մակարդակների կազմակերպություններին և դրանց միջև համագործակցությունը և այլն,
- *խթանող բլոկ*՝ օրենքներ, որոնք գլխավորապես ուղղված են այն գիտնականների, ճարտարագետների, կազմակերպությունների ֆինանսական խթանմանը, որոնք իրականացնում են տեխնոլոգիաների փոխանցման բազմաթիվ միջոցառումներ և սերտորեն գործակցում են նախարարությունների և լաբորատորիաների հետ[3]:

Ռազմաարդյունաբերության ոլորտում պետական կարգավորման բարելավման ուղղություններից է նաև տեխնոլոգիաների առևտրայնացման ֆինանսական ապահովումը: Այս ոլորտում աշխարհի առաջատար պետությունների փորձը նախատեսում է.

- ԳՀՓԿԱ-ներին պետական ֆինանսական աջակցության մեխանիզմի կատարելագործում (պետական վարկավորում և դրամաշնորհներ, բանկային վարկեր ստանալու համար պետական երաշխիքներ, բաժնեմասային մասնակցություն գիտական հետազոտություններին, հարկային արտոնություններ, արտահանման-ներկրման քվոտաներ ազգային գիտահեն արտադրության աջակցության համար, հարկերի վճարման հետաձգում ԳՀՓԿԱ-ներում ներդրում կատարելու դեպքում, պատենտների ստացմանը նպատակաուղղված աշխատանքների պետական ֆինանսավորում և դրանց պաշտպանության ապահովում՝ արտադրության մեջ դրանց արդյունքների ներդրման դեպքում (ԳՀՓԿԱ-ների արժեքի մոտ 10 %-ը հատկացվում է պատենտների պաշտպանության համար) և այլն,

[2] Տես *Д. Б. Изюмов, Е. Л. Кондратюк.* Зарубежный опыт коммерциализации инновационных технологий. «Инноватика и экспертиза», 2017, вып. 1 (19):

[3] Տես նույն տեղում:

- գիտական հետազոտությունների հարկման համակարգի բարելավում, ինչը ենթադրում է մտավոր սեփականության պաշտպանության գործում պետական գործնական աջակցություն,
- տեխնոլոգիաների փոխանցման դյուրինացում, ներառյալ՝ գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրումը արդյունաբերության մեջ, ինչը ենթադրում է վաղ փուլերում նորամուծական նախագծերի ֆինանսավորում (գործարքների ֆինանսավորումը, խորհրդատվությունը և գեներացիան հնարավորություն են տալիս խթանելու ԳՀՓԿԱ-ների կատարումը և արդյունքները ներկայացնելու ազգային ու միջազգային ներդրողներին), ինչպես նաև ընկերությունների նախաձեռնությունների համաֆինանսավորում, ինչը հեշտացնում է պատենտավորումն ու առևտրայնացումը լիցենզավորման համակարգի կամ *«սպին–օֆֆ»* ընկերությունների ստեղծման միջոցով,
- առևտրայնացման նպատակով բարձր եկամտաբերությամբ արդյունքների ընտրություն (պետական ԳՀՓԿԱ-ների, համալսարանական հետազոտությունների և մասնավոր գործարարության միջև նորամուծական միջնորդության մեխանիզմի մշակում և զարգացում)[4]:

Պետք է նաև նշել, որ տնտեսության քանակական աճը և ՌԱՀ-ի կառուցվածքի որակական բարելավումը սերտորեն կապված են պետության և նրա առանձին ոլորտների տնտեսվարական գործունեության հետ: Այդ կապի առկայության, համընդհանուր սպառնալիքների և մարտահրավերների հաշվառմամբ՝ պետությունները պետք է ընտրեն տեխնիկայի, տեխնոլոգիաների, կառավարման, արտադրության կազմակերպման անընդհատ կատարելագործման ուղին, այսինքն՝ գործունեության բոլոր ոլորտներում նորամուծության ճանապարհը:

Ներկայումս ՌԱՀ-ի կարգավորման ուղղությամբ համալիր միջոցառումների իրականացման հաջողությունը հնարավոր չէ առանց հատուկ պետական ծրագրերի շրջանակներում պրոֆիլային ուսուցման և մասնագիտացման համակարգի արդիականացման, ՍՈՏ-ների նոր նմուշերի ստեղծման և ռազմաարդյունաբերական հզորությունների զարգացման:

2. ՀՀ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետք է նշել, որ սույն մշակման սեղմ ծավալներում անհնար է վերհանել և, առավելապես, վերլուծել ՀՀ ռազմաարդյունաբերության ոլորտի պետական կարգավորման բարելավման բոլոր կողմերը: Այնուամենայնիվ, հնարավոր է մակրո- մակարդակում ներկայացնել պետական կարգավորման համակարգային պրոբլեմները և դրանց հաղթահարմանն ուղղված որոշ առաջարկություններ:

ՀՀ-ում ռազմաարդյունաբերության ոլորտի կարգավորման մեխանիզմները և այդ ոլորտում պետական մարմինների լայն պարտավորություններն

[4] Տես նույն տեղում:

ու լիազորությունները ամրագրված են «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքում[5]: Այնուամենայնիվ, ռազմական արդյունաբերության ոլորտում պետական կարգավորման բարելավման գլխավոր ուղղություններից մեկը բազմազանեցված ինտեգրային կառույցների ստեղծումն է: Ինչպես ցույց է տալիս այլ պետությունների փորձը, տվյալ կառույցները փոփոխվող պայմաններին արդյունաբերության, այդ թվում՝ ռազմական արդյունաբերության, հարմարման կարևոր միջոց են: Սակայն ՀՀ-ում, ըստ էության, պետական հաստատութենական համակարգը դեռ լիովին կայացած չէ: Մեզանում դեռ մասամբ գործում է անձնակենտրոն կառավարման մշակույթը, որն առանձին դեպքերում թեև արդարացված է, սակայն ընդհանուր առմամբ չի համապատասխանում ՀՀ-ի առջև ծառացած անվտանգային մարտահրավերներին: Մյուս կողմից՝ առաջնահերթություն պետք է համարել կառավարման այդպիսի համակարգում պետական ապարատի գործառույթները վերակողմնորոշելը դեպի ռազմավարական տրամաչափի խնդիրների լուծում: Այդ խնդրի լուծման նպատակով պետական իշխանության կառուցվածքներում, այդ թվում՝ ռազմաարդյունաբերության ոլորտի կարգավորման գործում, պետք է կենտրոնացվեն ազգի մտավոր ընտրախավի ջանքերը, քանի որ նա է ընդունակ մշակելու և երկարաժամկետ կտրվածքով հետևողականորեն իրագործելու պետության կենսագործունեության բոլոր ոլորտների զարգացման հայեցակարգը, տնտեսությունը, մասնավորապես՝ ռազմաարդյունաբերությունը, վերածելու դինամիկորեն և կայուն կերպով զարգացող բնագավառի:

Ռազմաարդյունաբերության ոլորտում ռեսուրսների կառավարման գործում ևս ՀՀ-ում խիստ կարևոր է բոլոր մակարդակների բարձր որակավորում ունեցող կառավարիչների դերը: Նրանք պետք է տիրապետեն աստիճանակարգված համակարգում ռեսուրսների կառավարման ընթացակարգերին: Հակառակ դեպքում տեղի կունենա պրոբլեմների խորացում, որը կփոխակերպվի ավելի մեծ ծախսերի: Միևնույն ժամանակ, ռազմաարդյունաբերության ոլորտում ռեսուրսների օպտիմալ օգտագործման համար անհրաժեշտ է պետական կարգավորման բոլոր մակարդակներում անձնակազմի պատասխանատվության սահմանակարգի ներդրում և այդ պատասխանատվությունից բխող գործողությունների հստակ որոշում[6]:

Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ ՀՀ-ում ձևավորված հարկային համակարգը դեռևս չի նպաստում ռազմաարդյունաբերության ոլորտում ներդրումային ակտիվության մեծացմանը և ձեռնարկատիրական գործունեության ընդլայնմանը: Այս խնդիրն ուղղակիորեն կապված է պետական կառավարման ամբողջ համակարգի գործունեության արդյունավետության մեծաց-

[5] Տես ՀՀ 2015 թ. մարտի 25-ի «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» հմ. ՀՕ-16-Ն օրենքը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=97154):

[6] Տես *Florin Eduard Grosaru.* Performance evaluation elements within defense resources management. Bulletin of “Carol I” National Defence University, June 2015 (https://revista.unap.ro/index.php/bulletin/article/download/81-86/445):

ման նպատակով անհրաժեշտ բյուջետային բարեփոխումների հետ: Վերջիններս ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման միջոցով պետք է ապահովեն պետական պարտավորությունների պատշաճ կատարում, բյուջետային ծախսերի արդյունավետության մեծացում, ինչպես նաև ծախսային գերակայությունների սահմանում[7]: Հարկային բարեփոխումները պետք է կրեն համալիր բնույթ և նպատակաուղղված լինեն տնտեսության տարբեր ոլորտների վրա, մասնավորապես՝ ռազմաարդյունաբերության օպտիմալ հարկային ճնշման մակարդակի պարզմանը: Անհրաժեշտ է նաև տնտեսության զարգացման տվյալ փուլին համապատասխան կատարելագործել բյուջետային համակարգի բոլոր մակարդակների միջև հարկային եկամուտների վերաբաշխման մեխանիզմը:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս պետական պատվերների տեղաբաշխումը ենթարկվում է տարբեր աստիճանների օրենսդրական կարգավորման, սահմանակարգային և մեթոդական ապահովման: Գործող օրենսդրությամբ չի ապահովվում ռազմաարդյունաբերության ոլորտում պետական պատվերների տեղաբաշխման ամբողջ փուլաշրջանի կարգավորման նկատմամբ մոտեցումների միասնականությունը: Այսպես. պետական պատվերների ձևավորման փուլում գործում է բյուջետային օրենսդրությունը, որը հիմնականում կողմնորոշված է դեպի բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման ապահովումը, սակայն դեռևս սահմանված չեն պետական կարիքների ծավալային և որակական ցուցանիշների որոշման կարգն ու չափանիշները, ապահովված չէ բյուջետավորման և պետական գնումների պլանավորման փոխկապվածությունը: Որպես արդյունք՝ չկան բյուջետային հատկացումների և, մի կողմից, տրամադրվող պետական ծառայությունների որակական ու ծավալային ցուցանիշների, մյուս կողմից՝ պետական պայմանագրերում սահմանված չափանիշների և դրանց արդյունքների միջև կապերը[8]: Այս հարցը արտացոլված չէ նաև ՀՀ Կառավարության 2019 թ. ծրագրում, որտեղ խնդիրների շարքում նշվում է միայն արդար ու թափանցիկ պետական գնումների (այդ թվում՝ կոնկրետ ապրանքների և ծառայությունների գնումների անհրաժեշտության հիմնավորմամբ) և դրանք ճիշտ ժամանակին ու պատշաճ ծավալով կատարման արդյունավետ համակարգերի ներդրումը[9]:

ՀՀ-ում ռազմաարդյունաբերության ոլորտի պետական կարգավորումը պետք է պայմանավորված լինի նաև տնտեսության կառուցվածքային փոփոխություններով: Այս առումով ՀՀ ներկայիս Կառավարությունը նպատա-

[7] Տես *Վ. Բ. Բոստանջյան,* Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: Ե., 2017, էջ 325–326:

[8] Տես նույն տեղում, էջ 185:

[9] Տես «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր», ՀՀ կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի հմ. 65-Ա որոշման հավելված (https://www.gov.am/files/docs/3133.pdf):

կադրվել է կատարելու տնտեսական կառուցվածքի փոփոխություն՝ անցնելով բարձր բազմապատիկության էֆեկտ ունեցող վերամշակող արդյունաբերության և տեխնոլոգիական ոլորտի զարգացմանը: Սա ենթադրում է պետական ուղղորդմամբ տնտեսության այլ ոլորտներից ֆինանսական, մարդկային և տեխնիկատեխնոլոգիական ռեսուրսների փոխադրում նշված ոլորտներ:

ՀՀ տնտեսության լոկոմոտիվային ոլորտներից մեկը ռազմաարդյունաբերությունն է, որտեղ, մեր կարծիքով, պետական քաղաքականությունը պետք է գործի գիտական մտքի և գիտատեխնիկական լուծումների առաջքաշման և երկակի տեխնոլոգիաների ներգրավման դիրքերից: Սա հատկապես կարևոր է հնարավոր պատերազմի ժամանակ առկա արտադրությունները ՍՈՏ թողարկմանը օպերատիվ կերպով փոխադրելու համար: Այս առումով առանձնակի ուշադրության են արժանի կառավարման օպտիկական (լազերային) համակարգերով ՍՈՏ-ների մշակումն ու արտադրությունը տվյալ ոլորտում Հայաստանի փորձի հաշվառմամբ՝ առաջավոր տեխնոլոգիաների կիրառմամբ և կատարելագործմամբ, ինչը պետք է դառնա ռազմաարդյունաբերության ոլորտում ՀՀ արտաքին տնտեսական համագործակցության առաջնահերթություններից մեկը: Այդ խնդիրը հնարավոր կլինի լուծել, եթե Հայաստանի հեռանկարային զարգացման հիմնական առաջնահերթությունների թվում ներառվեն արդյունաբերանորամուծական, գիտատեխնոլոգիական և ռազմաարդյունաբերական համակարգերի հիմնական նպատակները: Դրանք պետք է ստանան ազգային ռազմավարական զարգացման ծրագրերի կարգավիճակ և օգտվեն պաշտպանության, արտաքին գործերի ու էկոնոմիկայի նախարարությունների, ինչպես նաև Սփյուռքի համադասված միասնական աջակցությունից:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ռազմաարդյունաբերության ոլորտի պետական կարգավորման արդյունավետության մեծացման ուղղությունների մշակումը և ներդրումը ոչ միայն Հայաստանի համար հրամայականն են, այլև ընդհանրապես միջազգային խնդիր: Այդ գործի հաջողությունը կախված է պետությունների քաղաքական, ռազմական, տնտեսական, սոցիալական և մշակութային գործոններից և պետք է դիտվի ռազմավարական տեսանկյունով: Ընդ որում, ռազմաարդյունաբերության ոլորտի պետական կարգավորման համակարգի պրոբլեմները ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել, իսկ ժամանակավրեպ բարեփոխումների դեպքում՝ դառնալ այդ ոլորտում պետությունների հետամնացության պատճառ: Ընդսմին ՀՀ-ում ռազմաարդյունաբերության ոլորտի պետական կարգավորման բարեփոխումների վերջնանպատակը պետք է լինի նաև պետության մրցունակության և ազգային անվտանգության մակարդակի բարձրացումը:

ՀՀ ԿԼԱՍՏԵՐԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՇՄԻԴՏ-ԲԱՆՆԻԿՈՎԻ ՄՈՏԵՑՄԱՄԲ*

Կ. Ռ. ՊՈՂՈՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական ռեսուրսների սահմանափակության պարագայում կայուն տնտեսական աճի ապահովման ու տնտեսական ներուժ ունեցող տնտեսական ոլորտների զարգացման առավել արդյունավետ տարբերակներից է տնտեսական կլաստերների կազմակերպումը: Գոյություն ունեն տնտեսական կլաստերների ստեղծման ձևայնացված և ոչ ձևայնացված եղանակներ: Երկու դեպքում էլ դրանցից ակնկալվող օգուտները ներառում են գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ-ներ) ակտիվացում, մասշտաբի էֆեկտի դրսևորում ու մասնագիտացված սոցիալական ենթակառուցվածքների զարգացում: Կլաստերացման արդյունավետությունը տարբեր պետությունների փորձով հատկապես հիմնավորված է ռազմաարդյունաբերության ոլորտում: Սույն հոդվածում մեր հիմնական նպատակն է գնահատել Հայաստանում կլաստերացման ներուժը՝ Շմիդտ-Բաննիկովի առաջարկած մոտեցման կիրառմամբ: Այս խնդրի առնչությամբ մենք նախ ուսումնասիրել ենք ռազմաարդյունաբերության ոլորտում կլաստերացման միջազգային փորձը՝ ՀՀ օրինակով դրանց տեղայնացման հնարավորությունները դիտարկելու նկատառումներով:

ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԼԱՍՏԵՐԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Ռազմաարդյունաբերության կլաստերային զարգացման հեռանկարը գնահատելու համար ներկայացնենք մի շարք զարգացող պետությունների փորձը, ինչը հնարավորություն կտա պարզելու նման կլաստերների ձևավորման նկատմամբ մոտեցումներն ու զարգացման միտումները: Դրա հետ մեկտեղ ուշադրություն դարձնենք նաև կլաստերների ձևավորումից հետո համապատասխան ոլորտի զարգացման ուղեգծի փոփոխությանը՝ այդպիսով որոշելով կլաստերների գործունեության արդյունավետությունը: Դիտարկել ենք չորս օրինակ, որոնք, ըստ էության, արտացոլում են արդյունավետ ռազմաարդյունաբերական կլաստերների ձևավորման յուրահատկությունները.

Խորվաթիա: Թեև Խորվաթիան չի կարելի համարել զարգացած ռազմաարդյունաբերություն ունեցող պետություն, սակայն նա հաջողությամբ ընդու-

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-5B047 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

նել է նորամուծական ձեռնարկատիրության կանոնները և ունակ է արագ արձագանքելու սպառման շուկաներում ձևավորվող պահանջարկին, ինչն էլ անդրադառնում է ռազմաարդյունաբերական հատվածի արտադրանքի արտահանման տեմպերի աճման վրա: 2013–2014 թվականներից ռազմաարդյունաբերական ոլորտում ակտիվորեն գործող Պաշտպանական արդյունաբերության մրցունակության խորվաթական կլաստերի *(Croatian Defense Industry Competitiveness Cluster)* շնորհիվ հետագա երկու տարվա ընթացքում ոլորտային արտադրանքի արտահանման ծավալները կրկնապատկվեցին[1]: Այդ կլաստերում ընդգրկված են տնտեսության տարբեր ոլորտներ ներկայացնող ընկերություններ[2], որոնք համագործակցում են պետության պաշտպանունակության և անվտանգության մակարդակի բարձրացման, մեծ ավելացված արժեք ստեղծող նորամուծական արտադրությունների զարգացման, համատեղ ԳՀՓԿ աշխատանքների կատարման ասպարեզում: Կլաստերի գործունեությունը սերտորեն կապված է «Գիտատար ոլորտներում մասնագիտացման ռազմավարության հետ» *(Smart Specialization Strategy,* կամ *RIS3)*, ինչպես նաև 2020–2030 թթ. համար հեռանկարային ֆինանսական պլանավորման հետ, որտեղ կլաստերը հանդես է գալիս որպես նպատակների իրագործման հույժ կարևոր գործոն և այլ ձեռնարկությունների ցանցային համագործակցության կենտրոն:

Խորվաթիայի ռազմաարդյունաբերական կլաստերի հիմնական հայեցակարգը հիմնվում է այն պարզ ճշմարտության վրա, որ պետության անվտանգության գլխավոր երաշխավորը զինված ուժերի, քաղաքացիական հասարակության, տնտեսական և գիտական ոլորտների սերտ համագործակցությունն է: Ուստի պետությունում արտադրվող ցանկացած սարքավորանք, սպառազինություն, մատուցվող ծառայություն, մթերք կամ խմիչք, որը կարող է օգտագործվել պաշտպանության և անվտանգության ապահովման համար, պետք է լինի բարձր որակի, համապատասխանի խիստ չափանիշների: Կլաստերը գլխավորապես համախմբում է երկակի նախանշանակման արտադրությունները՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով նոր ներդրումների կատարման, ներարտադրական նմուշների ստեղծման, արտահանման, արտադրությունների բրենդավորման համար: Այս կլաստերի շրջանակներում գիտության և տեխնոլոգիաների համատեղ օգտագործումը մասնավոր և պետական ներդրումների (լրավճարների) պայմաններում բավական գրավիչ է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան կազմակերպությունների համար:

Թուրքիա: Թուրքիայում գործող ռազմաարդյունաբերական կլաստերներն աչքի են ընկնում խոշոր ընկերությունների հետ մեկտեղ փոքր գիտա-

[1] Տես “National reports: Croatia”. “SIPRI” (https://www.sipri.org/databases/national-reports/Croatia); “The strategy of innovation potential development of Croatia” (http://eng.hkkoi.hr/dokumenti/Strategija_poticanja_inovacija_2014-2020.pdf):

[2] Տես *Goran Basarac.* Croatian competitiveness cluster of defence industry – Defence R&D dual integration, 2018 (https://c1.assets-cdn.io/event/3392/assets/8460148290-2c0c041d1a.pdf):

տար ընկերությունների ընդգրկվածությամբ: Վերջիններս, ստանալով հարկային արտոնություններ, մատչելի աշխատանքային տարածք և վարկային միջոցների հասանելիություն, բավական բարենպաստ պայմաններ են ստեղծում որակյալ աշխատուժի ներգրավման ու նրանց մասնագիտական կարողությունների զարգացման համար[3]: Ընդհանուր առմամբ Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրը անցել է զարգացման հետևյալ փուլերը. պետական և հիմնադրամային ֆինանսավորմամբ ընկերությունների հիմնում, ռազմաարդյունաբերական համակարգում մասնավոր հատվածի ներգրավում՝ մասնավոր հատվածի տեսակարար կշռի աստիճանական ավելացմամբ, միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ձեռնարկությունների հիմնում և միջազգային նախագծերի իրականացում, ռազմաարդյունաբերական կլաստերների հիմնում:

Թուրքական ռազմաարդյունաբերության զարգացման համար կարևոր դեր են կատարել մի շարք պետական և ոչ պետական հաստատություններ՝ Պաշտպանական արդյունաբերության ենթակոմիտեն (պետության երկարաժամկետ ռազմապաշտպանական քաղաքականության ձևավորման հիմնական պատասխանատուն), Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդը, Ռազմածովային հետազոտությունների թուրքական կենտրոնը, Պաշտպանական և օդատիեզերական արդյունաբերողների միությունը (մասնավոր ոլորտում գործող ձեռնարկությունների բավական ազդեցիկ ասոցիացիա, որը ներառում է 137 ընկերություն, այդ թվում՝ 4 ռազմաարդյունաբերական կլաստեր) և այլն: Որպես արդյունք՝ 2014 թ. տվյալներով Թուրքիայի ռազմաարդյունաբերության ոլորտի վաճառքների ընդհանուր ծավալը կազմել է 5 մլրդ դոլար, իսկ ոլորտում կնքված պայմանագրերի ընդհանուր արժեքը գերազանցել է 11 մլրդ դոլարը՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 35 %-ով: Թուրքիան ռազմական նախանշանակման արտադրանք է արտահանում մեծ թվով պետություններ, ընդսմին հիմնական գնորդներն են ԱՄՆ-ը (2014 թ. 581 մլն դոլարի արտահանում) և Եվրոպայի պետությունները (418 մլն դոլար)[4]:

Բրազիլիա: Բրազիլիան նպատակ է դրել զարգացնել ռազմաարդյունաբերական համալիրի տարբեր ճյուղեր, ինչպիսիք են նավաշինությունը, օդային գերակայություն ապահովող միջոցների արտադրությունը, թեթև մեքենաշինությունը, ՏՀՏ համակարգերի արտադրությունը և միևնույն ժամանակ լուծել ոլորտի մի շարք խնդիրներ, ինչպիսիք են համակարգի տեխնոլոգիական վերազինումն առանց ռազմական ծախսերի կտրուկ ավելացման, ռազմաարդյունաբերական համակարգի որակավորված մասնագետների աշխա-

[3] Տես *K. A. Demir, E. Caymaz, F. Erenel.* Defense industry clusters in Turkey. “Journal of Defense Resources Management”, 2016, Vol. 7, Issue 1 (http://journal.dresmara.ro/issues/volume7_issue1/01_demir_caymaz_erenel.pdf):

[4] Տես *Գ. Հարությունյան,* Ռազմաարդյունաբերության ոլորտում կլաստերային զարգացման արտերկրյա փորձը: «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: Գիտական հոդվածների ժողովածու, մաս II: Ե., 2018, էջ 84–97:

տավարձի (տարեկան 11 միլիարդ ԱՄՆ-ի դոլար) մի մասի տեղափոխումը մասնավոր հատված, համատեղ ձեռնարկությունների ստեղծման միջոցով օտարերկրյա ներդրումների ներգրավումը, երկակի նախանշանակման արտադրանքի թողարկման տեխնոլոգիական մոբիլության ապահովումը, ռազմական ծախսերի արդյունավետության մեծացումը[5]: Ըստ այդմ նա նպատակաուղղված կերպով ձևավորել է մի քանի կլաստերներ, որոնք, մի կողմից, հիմնված են փոքր գիտատար ընկերությունների վրա՝ հորիզոնական համագործակցության ստեղծմամբ, մյուս կողմից՝ այն ոլորտներում, որտեղ պահանջվում են առավել մեծածավալ ներդրումներ, խոշոր արտադրողների ու գիտատար ընկերությունների միջև ուղղահայաց համագործակցության վրա:

Ներկայացված միջազգային փորձի համառոտ վերլուծության արդյունքներով առաջարկում ենք ՀՀ-ում արդյունաբերական կլաստերների կառուցումն սկսել տնտեսական գործունեության այն ոլորտներից, որտեղ ստեղծվող ապրանքներն ու ծառայությունները իրենց բնույթով ունեն երկակի նախանշանակում և կարող են դիտարկվել որպես ռազմաարդյունաբերական արտադրանքի թողարկման կայուն հենք: Մեր կարծիքով՝ այդ ոլորտներն են.

- քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունը (տնտեսական գործունեության դասակարգմամբ՝ C20),
- պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը, բացի մեքենաներից և սարքավորանքից (C25),
- համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրությունը (C26),
- էլեկտրական սարքավորանքի արտադրությունը (C27),
- այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրությունը (C30),
- մեքենաների և սարքավորանքի նորոգումը և տեղադրումը (C33):

Ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացման այսպիսի սցենարը բնորոշ է ինչպես զարգացած (Նիդերլանդներ, Սինգապուր), այնպես էլ զարգացող պետություններին (Թուրքիա, Խորվաթիա, Սլովենիա)[6], իսկ նրանց արդյունավետությունը մեծապես կախված է խոշոր արտադրողների, փոքր գիտատար ընկերությունների և բարձրորակ գիտակրթական համակարգի միջև տեխնոլոգիաների ու գիտելիքի փոխանակման ապահովումից և ոլորտը կարգավորող իրավական դաշտի ամբողջականությունից[7]:

---

[5] Տես *S. Raza.* Brazil's Defense Industry: The Emerging Transformational Role of C5I in Defense Industry's Cluster Formation. CAEI, Working paper N 42 (https://www.files.ethz.ch/isn/145419/42%20DS.pdf):

[6] Տես "Clusters at your fingertips". "European Cluster Observatory" home page (http://www.clusterobservatory.eu/index.html):

[7] Տես "EU funding for dual use – Guide for Regions and SMEs". "European Commission" (https://s3platform.jrc.ec.europa.eu/-/eu-funding-for-dual-use-guide-for-regions-and-smes?inheritRedirect=true):

ԿԼԱՍՏԵՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Գոյություն ունեն տնտեսության ոլորտներում կլաստերային հնարավորությունների գնահատման մի քանի եղանակ: Դրանցից առանձնացնենք հետևյալները.

- ***տնտեսաչափական ծախքեր-թողարկում (econometric Input-Output) մոդելներ:*** Տվյալ մոդելների հիմքում դրված է այն գաղափարը, որ տնտեսության ոլորտները միմյանց կապված են արտադրական շղթայի միջոցով, այն է՝ առաջին ոլորտում ստեղծված արդյունքը կարող է միջանկյալ բարիք լինել մյուս ոլորտների համար: Այս պայմաններում տնտեսության կառուցվածքային փոփոխությունները հանգեցնում են որոշակի ապրանքների նկատմամբ արդյունավետ պահանջարկի և ոլորտի տնտեսական աճմանը: Նման փոփոխություններ խթանող գործիք են ոլորտային կլաստերները: «Ծախքեր-թողարկում» մոդելները պատասխանում են այն հարցին, թե մեկ միավոր վերջնական արդյունք (թողարկում՝ *output*) ստանալու համար տնտեսության ճյուղերից որքան ռեսուրս (միջանկյալ արդյունք) է անհրաժեշտ (ծախք՝ *input*):
- ***Հիմնական տարրերի վերլուծության (ՀՏՎ՝ PCA) մոդելներ:*** «Ծախքեր-թողարկում» աղյուսակային մոդելների տարատեսակ է ՀՏՎ մեթոդը, որի ժամանակ փոփոխականների առավելագույն ընդհանուր ցրման հայտանիշի *(maximum common variance criteria)* կիրառմամբ մոդելում ներառված կախյալ փոփոխականների թիվը շարունակ փոքրացվում է, մինչև մնան միայն առավել փոխկապված և համակարգային սխալի հավանականություն ունեցող գործոնները[8]: Գոյություն ունեն ՀՏՎ կիրառման հետևյալ հիմնական եղանակները՝
  - միևնույն ոլորտում գործող ընկերությունների ռեսուրսների ներգրավման փուլաշրջանների նմանության վրա *(R-mode analysis),*
  - միևնույն ոլորտում գործող ընկերությունների վաճառքների փուլաշրջանի նմանության վրա *(Q-mode analysis),*
  - տնտեսության տարբեր ոլորտներում գործող ընկերությունների ռեսուրսներըմի ոլորտում ներգրավելու, իսկ մյուս ոլորտում վաճառքների փուլաշրջանների նմանության վրա:

Տեղայնացման մեթոդը տնտեսական կլաստերների կառուցման քանակական և որակական գնահատականների համատեղ կիրառության օրինակ է[9]: Այս մեթոդի համաձայն՝ ցանկացած տնտեսական կլաստերի հաջողութ-

[8] Տես *Rainer vom Hofe, Saurav Dev Bhatta.* Method for identifying local and domestic industrial clusters using interregional commodity trade data. “The Industrial Geographer”, 2007, Vol. 4, Issue 2 (https://pdfs.semanticscholar.org/eeea/ae3bda47098d994e802a47514987b3bb91cd.pdf):

[9] Տես *Rachel V. Smith*. Industry Cluster Analysis: Inspiring a Common Strategy for Community Development (http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.124.8601&rep=rep1&type=pdf):

յան հիմքում որակյալ մարդկային կապիտալի առկայությունն է: Նման պայմաններում պետական և մասնավոր (կլաստերում ընդգրկված) ընկերությունների տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի մարդկային կապիտալի զարգացմանը՝ աշխատանքի և մասնագիտական կրթության միաժամանակյա տրամադրման միջոցով: Հետևաբար տնտեսական կլաստերների կառուցում հնարավոր է միայն արտադրական ընկերությունների և գիտակրթական համակարգի՝ մեկ վայրում տեղայնացման եղանակով:

Շմիդտ-Բաննիկովի մեթոդը[10] մշակվել է վերը նշված մեթոդների թերությունների շրջանցման և առավելությունների օգտագործման նպատակով: Մեթոդի տրամաբանությունը հետևյալն է. տնտեսական կլաստերների կառուցումը և արդյունավետ գործունեությունը հնարավոր են երեք գործոնների՝ ոլորտում ընդգրկված ընկերությունների տարածքային կենտրոնացման, տեղայնացման մեծ գործակցի և մեկ շնչին բաժին հասնող բարձր մակարդակի արտադրանքի միաժամանակյա առկայության պարագայում: Ընդ որում, երեք բաղադրիչներից մեկի ցածր մակարդակը չի կարող համակշռվել մյուս երկուսի բարձր մակարդակներով: Ընդսմին հեղինակներն առաջարկում են տվյալ գործոնները հաշվարկել հետևյալ հավասարման միջոցով.

$$\text{ԿԶՆ} = \frac{\text{ԸՏԿ} * \text{ԼԳ}}{\text{ԱԾ}} = \frac{\left(\frac{\frac{\text{ՃԱՏ}}{\text{ՏՄ}}}{\frac{\text{ՃԱՊ}}{\text{ԵՄ}}}\right) * \left(\frac{\frac{\text{ՃԱՏ}}{\text{ԱՏԾ}}}{\frac{\text{ՃԱՊ}}{\text{ԱԾԵ}}}\right)}{\left(\frac{\frac{\text{ՃԱՏ}}{\text{ՃԱՊ}}}{\frac{\text{ԲԹՏ}}{\text{ԲԹԵ}}}\right)} = \left(\frac{\text{ՃԱՏ}}{\text{ՃԱՊ}} \Big/ \frac{\text{ԱՏԾ}}{\text{ԱԾՊ}}\right) * \left(\frac{\text{ԲԹՏ}}{\text{ԲԹԵ}} \Big/ \frac{\text{ՏՄ}}{\text{ԵՄ}}\right)$$

որտեղ՝ ԿԶՆ-ն կլաստերային զարգացման ներուժն է, ԸՏԿ-ն՝ ընկերությունների տարածքային կենտրոնացումը, ԼԳ-ն՝ տեղայնացման գործակիցը, ԱԾ-ն՝ մեկ շնչին բաժին հասնող արտադրանքի ծավալը, ՃԱՏ-ը՝ ճյուղային արտադրության ծավալը տարածաշրջանում, ՃԱՊ-ը՝ ճյուղային արտադրության ծավալը պետությունում, ԱՏԾ-ն՝ արտադրության ամբողջական ծավալը տարածաշրջանում, ԱԾՊ-ն՝ արտադրության ամբողջական ծավալը պետությունում, ՏՄ-ն՝ տարածաշրջանի մակերեսը, ԵՄ-ն՝ երկրի մակերեսը, ԲԹՏ-ն՝ բնակչության թվաքանակը տարածաշրջանում, ԲԹԵ-ն՝ բնակչության թվաքանակը երկրում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԼԱՍՏԵՐԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ՝ ԸՍՏ ՇՄԻԴՏ-ԲԱՆՆԻԿՈՎԻ ՄՈՏԵՑՄԱՆ

Մեր կատարած հետազոտության արդյունքները վկայում են, որ դիտարկվող ոլորտներում Հայաստանն իր ներուժով ԵԱՏՄ պետություններից երկրորդն է, իսկ ոլորտների կլաստերային զարգացման համար առավել բարենպաստ պայմաններում է Բելառուսը: Այդ պատճառով Հայաստանում

[10] Տես *А. Шмидт, А. Банников.* Подходы к идентификации региональных кластеров. «Региональное развитие», 2016, № 1 (https://cyberleninka.ru/article/v/podhody-k-identifikatsii-regionalnyh-klasterov):

ԵԱՏՄ պետությունների հետ համատեղ ռազմաարդյունաբերական համագործակցության և համատեղ ընկերությունների հիմնմամբ անհրաժեշտ է առաջին հերթին ներքին կլաստերների զարգացմամբ ապահովել նշված ոլորտների գործունեության արդյունավետության մեծացման, ինչպես նաև միջազգային ռազմատնտեսական հարաբերությունների ընդլայնման հիմքեր: Եթե հնարավոր լինի ոլորտային արտադրության ծավալները այդ կերպ մեծացնել 3-4 անգամ, Հայաստանի համար կլաստերային ներուժի Շմիդտ-Բաննիկովի ցուցանիշը կհավասարվի Բելառուսի ցուցանիշին ու պայմաններ կստեղծի տարածաշրջանային կլաստերների ձևավորման և այլ օտարերկրյա ընկերությունների ներգրավման համար:

Հենվելով վերը ներկայացվածի վրա՝ կարող ենք պնդել, որ ՀՀ տարածքում տնտեսական կլաստերների ձևավորման և այլ անհրաժեշտ քայլերի համատեղումը իրական հնարավորություններ կստեղծի այս ոլորտներում տեղական արտադրության խթանման համար: Այս եղանակով ներմուծվող ապրանքատեսակների մի մասի փոխարինումը տեղական արտադրանքով Հայաստանին հնարավորություն կտա հիմնական տնտեսական գործընկերներին ներկայանալու ավելի մրցունակ տեսքով, ակտիվացնելու արտաքին ներդրումների հոսքը և իր տարածքում իրագործելու համատեղ ծրագրեր: Միևնույն ժամանակ, շատ կարևոր է ոլորտային զարգացումը զուգակցել հավասարաչափ տարածքային զարգացման հետ, ուստի անհրաժեշտ է գնահատել կլաստերային զարգացման ինդեքսները նաև մարզային կտրվածքով:

Ստորև (աղյուսակներ1−6) բերված են ՀՀ տնտեսության կլաստերային ներուժի ինդեքսները՝ հաշվարկված, համապատասխանաբար, C20, C25, C26, C27, C30, C33 ոլորտների համար: ՀՀ տնտեսական կառուցվածքը՝ արտադրության և բնակչության մեծ մասի կենտրոնացումը Երևանում, նվազեցնում է տարածաշրջանային կլաստերային ներուժի գնահատման արդյունավետությունը, ուստի վերլուծությունը կրկնել ենք առանց Երևանն ընդգրկելու: Տվյալ պարագայում արդյունքները մեծ մասամբ պահպանվել են՝ հնարավորություն տալով առանձնացնելու այն մարզերը, որտեղ կլաստերների գոյության ներուժը նկատելի է: Աղյուսակներում փակագծերից դուրս նշված են կլաստերային ներուժի ինդեքսները (ԿՆՀ)՝ հաշվարկված Երևան քաղաքի ներառմամբ, իսկ փակագծերում բերված է նույն ցուցանիշը՝ հաշվարկված առանց Երևան քաղաքի:

Աղյուսակ1[*]

ՇՄԻԴՏ-ԲԱՆՆԻԿՈՎԻ ԻՆԴԵՔՍԸ C20 ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՐ

	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Երևան	77,83	78,84	85,36	88,19	87,66	95,66	99,57
Արագածոտն	0,37 (1,18)	0,52 (1,56)	0,32 (1,21)	0,2 (0,93)	0,22 (0,94)	0,15 (0,87)	0,06 (0,45)
Արարատ	2,2 (7,03)	2,04 (6,16)	1,59 (6,04)	1,62 (7,45)	1,06 (4,46)	0,82 (4,83)	0,48 (3,55)

[*] Այս և հաջորդ աղյուսակներում հաշվարկները կատարվել են www.armstat.am կայքի տվյալների հիման վրա:

Արմավիր	0,39 (1,25)	–	0,26 (0,99)	0,32 (1,48)	0,37 (1,56)	0,3 (1,78)	0,31 (2,31)
Գեղարքունիք	–	–	–	–	–	–	–
Լոռի	1,72 (5,49)	2,13 (6,45)	1,74 (6,63)	0,86 (3,97)	0,74 (3,1)	0,51 (2,98)	0,42 (3,06)
Կոտայք	0,08 (0,25)	0,07 (0,22)	0,06 (0,24)	0,07 (0,31)	0,24 (1,02)	0,1 (0,57)	0,23 (1,7)
Շիրակ	–	–	–	–	–	0,07 (0,39)	0,05 (0,34)
Սյունիք	–	–	–	–	0,01 (0,04)	0,02 (0,12)	0,01 (0,1)

Տնտեսական գործունեության C20 ոլորտի ցուցանիշներ ունեցող մարզերի մեծ մասի դեպքում նկատվում է կլաստերային ներուժի նվազում: Երևանի ընդգրկմամբ բոլոր մարզերում ԿՆԻ-ի ցուցանիշը չի գերազանցում 1-ը, իսկ բացառմամբ՝ Լոռու և Արարատի մարզերում ցուցանիշները ավելի բարձր են, սակայն ունեն նվազման միտում, քանի որ լավագույն ցուցանիշները գրանցվել են 2011–2012 թթ.:

Աղյուսակ 2

ՇՄԻԴՏ-ԲԱՆՆԻԿՈՎԻ ԻՆԴԵՔՍԸ C25 ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՐ

	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Երևան	85,50	90,30	89,31	93,83	100,23	96,87	100,13
Արարատ	0,16 (0,67)	0,09 (0,39)	0,19 (0,82)	0,17 (1,01)	0,12 (0,95)	0,17 (1,05)	0,13 (1,01)
Արմավիր	–	–	–	–	–	–	–
Լոռի	–	–	–	–	–	0,05 (0,29)	0,1 (0,8)
Կոտայք	0,65 (2,73)	0,71 (3,06)	0,64 (2,8)	0,43 (2,62)	0,42 (3,38)	0,79 (4,95)	0,59 (4,47)
Շիրակ	0,13 (0,56)	0,16 (0,69)	0,15 (0,64)	0,18 (1,08)	0,23 (1,86)	0,14 (0,86)	0,15 (1,11)
Սյունիք	0,14 (0,6)	0,12 (0,53)	0,12 (0,53)	0,09 (0,57)	0,07 (0,56)	0,02 (0,12)	0,03 (0,22)
Վայոց ձոր	0,38 (1,58)	0,07 (0,31)	0,1 (0,44)	0,08 (0,48)	0,09 (0,7)	0,14 (0,91)	0,03 (0,21)
Տավուշ	–	–	–	–	–	–	–

Աղյուսակ 3

ՇՄԻԴՏ-ԲԱՆՆԻԿՈՎԻ ԻՆԴԵՔՍԸ C26 ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՐ

	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Երևան	84,07	88,37	90,06	79,85	86,17	89,51	97,01
Արագածոտն	0,36 (1,43)	0,65 (2,62)	0,44 (1,99)	0,56 (1,9)	0,59 (2,36)	0,53 (2,33)	0,5 (3,17)

Արմավիր	6,34 (25,06)	7,55 (30,54)	7,12 (32,25)	10,06 (33,91)	7,29 (29,00)	7,10 (31,42)	6,02 (37,88)
Լոռի	0,03 (0,11)	0,07 (0,29)	0,01 (0,05)	-	-	-	-
Կոտայք	0,01 (0,03)	0 (0,02)	0 (0,01)	-	-	-	-
Շիրակ	1,71 (6,76)	1,57 (6,33)	1,29 (5,83)	0,97 (3,28)	1,81 (7,19)	1,84 (8,12)	0,97 (6,12)
Վայոց ձոր	0,42 (1,67)	0,29 (1,15)	0,22 (1)	0,25 (0,85)	0,22 (0,86)	0,15 (0,67)	0,14 (0,9)

C25 ոլորտի ուսումնասիրությունը կրկնում է նախորդ ոլորտի պատկերը: Միակ մարզը, որում նկատվում է կլաստերային ներուժ, Կոտայքի մարզն է, եթե ուսումնասիրությունը կատարվում է առանց Երևանի: Ի տարբերություն C20 և C25 ոլորտներից, C26 ոլորտում կլաստերային ներուժի բարձր ցուցանիշ առկա է Արմավիրի մարզում՝ (6,02−10,06), որն ավելի է աճում Երևանը անտեսելու դեպքում (25−37.88):

Աղյուսակ 4

ՇՄԻԴՏ-ԲԱՆՆԻԿՈՎԻ ԻՆԴԵՔՍԸ C27 ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՐ

	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Երևան	73,78	76,81	77,88	75,31	88,40	89,72	104,52
Արարատ	-	-	-	-	-	0,19	0,12
Արմավիր	0,01	-	-	-	-	-	-
Լոռի	3,26 (9,27)	3,4 (9,77)	3,07 (9,29)	3,04 (8,95)	1,1 (4,79)	0,88 (3,93)	0,41 (4,51)
Կոտայք	0,38 (1,09)	0,36 (1,02)	0,45 (1,37)	0,48 (1,42)	0,44 (1,92)	0,39 (1,73)	0,13 (1,4)
Սյունիք	0,1 (0,28)	0,09 (0,27)	0,12 (0,35)	0,16 (0,46)	0,14 (0,59)	0,15 (0,67)	0,05 (0,51)

Աղյուսակ 5

ՇՄԻԴՏ-ԲԱՆՆԻԿՈՎԻ ԻՆԴԵՔՍԸ C30 ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՐ

	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Երևան	54,28	-	-	44,48	56,88	112,70	112,50
Շիրակ	11,01 (20,45)	25,52 (25,07)	26,99 (26,19)	14,68 (23,23)	15,29 (29,52)	0,56 (32,1)	0,75 (37,8)

C27, C30 և C33 ոլորտներում նույնպես կլաստերային ներուժի ինդեքսը հիմնականում աննշան է և վերջին տարիներին ունի փոփոխման բացասական միտում: Ընդ որում, C30 ոլորտում Շիրակի մարզի բարձր ցուցանիշները կապված են ոլորտային արտադրանքի ցածր մակարդակի հետ: C27 ոլորտում Լոռու մարզում, իսկ C33 ոլորտում Կոտայքի մարզում առկա են ներուժի բավարար ցուցանիշներ, եթե ոլորտը դիտարկում ենք առանց Երևանի հաշվառման:

Աղյուսակ 6

ՇՄԻԴՏ-ԲԱՆՆԻԿՈՎԻ ԻՆԴԵՔՍԸ C33 ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՐ

	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Երևան	69,61	78,01	83,59	73,93	76,20	76,50	92,98
Լոռի	1 (2,55)	0,79 (2,35)	–	–	–	–	–
Կոտայք	1,17 (2,98)	0,84 (2,49)	0,74 (2,64)	1,27 (3,61)	1,67 (4,89)	1,81 (5,27)	1,01 (5,2)
Սյունիք	0,21 (0,53)	0,2 (0,6)	0,23 (0,82)	0,17 (0,49)	0,16 (0,47)	0,15 (0,45)	0,08 (0,4)

Երևանում բարձր մակարդակի կլաստերային ներուժ, համաձայն հաշվարկված ինդեքսի, առկա է C20, C25 և C27 ոլորտներում, չափավոր՝ նաև C33 ոլորտում, որում արտադրության 80 %-ից ավելին կենտրոնացված է Երևանում:

Ամփոփելով կլաստերային ներուժի գնահատումը՝ երկակի նախանշանակման արտադրական ներուժ ունեցող և ՀՀ ռազմաարդյունաբերության ոլորտի զարգացմանը հնարավոր նպաստ բերող ոլորտներում, ինչպես նաև ԵԱՏՄ շրջանակներում տարածաշրջանային կլաստերների ստեղծման հնարավորությունները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Ինչպես ուղղահայաց (կլաստերում ընդգրկվում են արտադրական ընդհանրական փուլաշրջանում աշխատող ընկերությունները), այնպես էլ հորիզոնական (կլաստերում ընդգրկվում են նույն արտադրական գործունեությամբ զբաղված ընկերությունները) կլաստերներում արդյունավետության հիմնական պայմանը ընդգրկված ընկերությունների միջև արդյունավետ համագործակցության և տեղեկատվության փոխանակման ապահովումն է:
2. Հայաստանի տարածքում տնտեսական կլաստերների ձևավորումը հնարավորություն կտա ավելացնելու ներկայացված ուղղություններում առկա տնտեսական ներուժը: Ոլորտի ճիշտ կառավարման և օտարերկրյա պատվերների ներգրավման դեպքում տնտեսական կլաստերների գործունեությունը կապահովի ինչպես դրանցում ներգրավված ընկերությունների ներքին հնարավորությունների (արտադրական, ֆինանսական, կառավարչական) աճը, այնպես էլ կնպաստի նրանցում զբաղված մարդկային կապիտալի որակական աճին: Զարգացման նման սցենարի դեպքում բարենպաստ պայմաններ կստեղծվեն ԵԱՏՄ շրջանակներում ռազմաարդյունաբերական կապերի խորացման և համատեղ նախաձեռնությունների իրականացման համար:
3. Ռազմաարդյունաբերական կլաստերների ձևավորումն անհրաժեշտ է սկսել ֆինանսական, գիտակրթական և արտադրական ենթակառուցվածքների միջև արդյունավետ կապերի ձևավորումից: Այս ոլորտում կլաստերացում նախաձեռնողը պետք է լինի պետությունը, համենայն դեպս, ներկայումս՝ զարգացման սաղմնային փուլում:

ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ РЕГИОНАЛЬНЫХ КЛАСТЕРОВ В ВОЕННО-ПРОМЫШЛЕННОЙ СФЕРЕ (НА ПРИМЕРЕ ЭКОНОМИЧЕСКОЙ ТЕРРИТОРИИ ЕАЭС)

Г. Э. АРУТЮНЯН, кандидат экономических наук, доцент, начальник Группы стратегических игр и моделирования ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Инновационная парадигма построения отношений между государствами ЕАЭС предполагает сбалансированное пространственное развитие и конвергенцию показателей экономического развития. В качестве важного механизма, обеспечивающего этот процесс, и в то же время как платформу для эффективного сотрудничества между государствами в военно-промышленной сфере можно рассматривать международные кластеры. Именно с этой точки зрения в статье обсуждены возможности и основные задачи формирования региональных кластеров (в частности – военно-промышленных) в ЕАЭС.

НАПРАВЛЕНИЯ УЛУЧШЕНИЯ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ВОЕННО-ПРОМЫШЛЕННОЙ СФЕРЫ

А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, доцент, ученый-аналитик ГСИМ ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Разработка и внедрение мероприятий по повышению эффективности государственного регулирования военно-промышленной сферы не только императив для Армении, но и международная проблема. Успех данного процесса зависит как от собственно экономических и социальных, так и исторических, политических, военных и культурных факторов и представляет общегосударственную цель стратегического масштаба. Важным обстоятельством является необходимость обеспечения соответствия реформирования государственного регулирования военно-промышленной сферы требованиям времени, поскольку запаздывание реформ может привести к отставанию государства в экономическом развитии и обороноспособности. В случае Армении реформирование государственного регулирования военно-промышленной сферы должно быть также нацелено на повышение уровня конкурентности и национальной безопасности государства.

ОЦЕНКА КЛАСТЕРНОГО ПОТЕНЦИАЛА РА МЕТОДОМ ШМИДТА-БАННИКОВА

В. Р. ПОГОСЯН, кандидат экономических наук, Институт экономики им. М. Котаняна НАН РА

РЕЗЮМЕ

Хотя результаты проведенного исследования свидетельствуют о возможности развития кластеров в различных развивающихся странах, в то же время подчеркивая важность национальной стратегии инновационного развития посредством формирования национальных и транснациональных кластеров.

Для выявления возможностей кластерного развития оборонной промышленности был рассчитан индекс Шмидта-Банникова как для региональной (в рамках ЕАЭС), так и для национальной экономики Армении. Результаты показывают, что экономика Армении обладает скромным потенциалом развития оборонных кластеров (2-й в странах ЕАЭС), но этот потенциал может быть увеличен в случае создания связанных с оборонной промышленностью национальных кластеров и стимулирования развития в регионах Армении предлагаемых экономических остраслей.

ECONOMIC SECURITY

PROBLEMS OF FORMATION OF REGIONAL CLUSTERS IN THE MILITARY-INDUSTRIAL SPHERE (ON THE EXAMPLE OF THE EAEU)

G. E. HARUTYUNYAN, PhD in Economics, Associate Professor, Head, Strategic Games and Simulation Group, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

The innovative paradigm of building relations between the EAEU states implies balanced spatial development and convergence of economic development indicators. International clusters can be viewed as an important mechanism ensuring this process, and at the same time as a platform for effective cooperation between states in the military-industrial sphere. It is precisely from this standpoint that the article discusses the possibilities and main tasks of forming regional clusters (namely, military-industrial) in the EAEU.

DIRECTIONS FOR IMPROVING STATE REGULATION OF THE MILITARY-INDUSTRIAL SPHERE

A. G. DAVTYAN, PhD in Economics, Associate Professor, Research Fellow, Strategic Games and Simulation Group, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

The development and implementation of measures for improving the efficiency of state regulation of the military-industrial sphere is not only an imperative for Armenia, but also an international problem. The success of this process depends on economic and social, as well as historical, political, military and cultural factors, and is a strategic-caliber nationwide objective. The necessity of ensuring the conformity of reforming state regulation of the military-industrial sphere with the demands of the times is an important circumstance, since the delay in reforms can lead to the backlog of the state in economic development and defense capability. In case of Armenia, state regulation reforming of the military-industrial sphere should also be targeted at increasing the level of competitiveness, and the national security of the state.

THE ASSESSMENT OF THE RA CLUSTER POTENTIAL BY SCHMIDT-BANNIKOV METHOD

V. R. POGHOSYAN, PhD in Economics, Institute of Economics after M. Kotanyan, NAS, RA

SUMMARY

The results of the undertaken study indicate the possibility of cluster development in various developing countries, at the same time emphasize the significance of the national strategy for innovative development through the formation of national and transnational clusters.

To identify the opportunities for cluster development of the defense industry, the Schmidt-Bannikov Index was calculated both for the regional (within the framework of the EAEU) and for the national economy of Armenia. The results indicate that the Armenian economy has a modest potential for the development of defense clusters (the second in the EAEU countries), but that potential can increase in case national clusters related to the defense industry are created, and the proposed economic sectors are encouraged to develop in Armenia's regions.

ՀՀ ԶՈՒ-Ի ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՁՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ս. Ս. ՄԵԼԻՔՅԱՆ, ԵՊՀ ասպիրանտ, Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դասախոս

Ազգային պետականության ամրապնդման առումով կենսական կարևորություն ունի ազգային անվտանգության ապահովման պաշտպանական բաղադրիչը՝ ռազմական անվտանգությունը: Այն «երաշխավորում է ներքին և արտաքին սպառնալիքներից քաղաքացու, հասարակության, ազգի ու պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությունը ռազմական ուժի կիրառմամբ կամ դրա կիրառման սպառնալիքով»[1]: Ռազմական անվտանգության ապահովման համակարգի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է պաշտպանական ներուժի զարգացմամբ և զինված ուժերի մարտունակության աստիճանի բարձրացմամբ:

Ռազմական անվտանգությունը սերտորեն փոխկապված է ազգային անվտանգության մյուս բաղադրիչների, մասնավորապես՝ հոգևոր անվտանգության հետ, որը բնութագրում է «հասարակության կենսակերտվածքի, պատմության և մշակույթի ավանդույթները, հասարակության բարոյաքաղաքական միասնության մակարդակն արտացոլող ազգային ինքնագիտակցության պաշտպանվածությունը, ինչպես նաև առանց ազգային ինքնությանը վնաս պատճառելու իր առաջադիմական զարգացման համար անհրաժեշտ նոր արժեքներ և գաղափարներ ընդունելու ազգի կարողությունը»[2]:

Անհրաժեշտ է նշել նաև, որ արևմտյան անվտանգային մշակույթում «ոգեբարոյական *(mental and moral)* անվտանգություն» և «հոգևոր *(spiritual)* անվտանգություն» հասկացությունները տարանջատված են: Ոգեբարոյական անվտանգությունը սահմանվում է որպես մի վիճակ, որի դեպքում ստեղծվել է այնպիսի պայմանների համակարգ, որոնք հասարակությանը հնարավորություն են տալիս իր կենսականորեն կարևոր պարամետրները (առաջին հերթին՝ մշակութային, վարքային, մտավոր բնույթի) պահպանելու պատմականորեն ձևավորված նորմերի սահմաններում, մինչդեռ հոգևոր անվտանգության դեպքում խոսքը գերազանցապես կրոնին առնչվող ան-

[1] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 74:

[2] Տես նույն տեղում, էջ 75:

վտանգության մասին է[3]: Այդուհանդերձ, ազգային անվտանգության ապահովման համակարգում հոգևոր բաղադրիչի այս երկու չափումները գործում են փոխպայմանավորված և միահյուսված:

Բոլոր ժամանակներում և հասարակություններում կրոնական գիտակցությունը, ընկալվելով որպես աքսիոմատիկ ճշմարտություն, եղել է անհատի կյանքի կարգավորող ուժն ու հասարակական կյանքի առաձգական կենտրոնը, իսկ սկսած Քրիստոսի ծննդից՝ քրիստոնեական աստվածաճանաչությունը կազմել է քրիստոնյաների կյանքի իմաստն ու օրինապահ քաղաքացի լինելու առանցքը[4]:

19–20-րդ դարերի հայ կրոնական փիլիսոփայության ներկայացուցիչները (Հ. Տերոյենց, Հ. Չերքեզյան, Ստ. Մանդինյան, Գ. Աշըգյան, Գ. Այվազովսկի, Մ. Մսերյան, Ա. Գուրգենյան, Պ. Էմմանուելյան, Է. Սիրունյան, Ա. Տէր-Միքելեան) կրոնը համարում էին «բարոյականության աղբյուր» և «կյանքի զարկերակ»[5]: Արևմտյան ժամանակակից քաղաքագիտական-հասարակագիտական տեսություններում կրոնը դիտվում է որպես «գաղափարախոսություն» *(ideology),* «հիշողության շղթա» *(chain of memory),* «մշակութային համակարգ» *(cultural system),* «հասարակական կյանքի կարգավորող» *(social control),* «հաղթահարման մեխանիզմ» *(coping mechanism)* և այլն, իսկ Ս. Հանտինգտոնն իր «Քաղաքակրթությունների բախումը և աշխարհակարգի վերափոխումը» գրքում կրոնը սահմանում է որպես քաղաքակրթությունը բնութագրող մի յուրատեսակ մշակութային գործոն և դրա կարևորագույն տարր, որը, նրա կարծիքով, ապագայում կենտրոնական դեր կունենա արդյունավետ անվտանգային քաղաքականության մեջ:

ԱՄՆ-ի քաղաքական ղեկավարությունը փորձեց ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին (մասնավորապես՝ ամերիկյան հասարակության էթնիկ-դավանական բազմազանությամբ պայմանավորված) և արտաքին (մասնավորապես՝ մահմեդական աշխարհից բխող) սպառնալիքները չեզոքացնելու համար օգտագործել կրոնական գործոնը՝ անվտանգային խնդիրների լուծումը կառուցելով «Կրոնը՝ որպես Ազատություն» և «Կրոնը՝ որպես Միասնություն» հարացույցների վրա[6]:

---

[3] Տես *Դ. Ս. Չիլինգարյան,* Ազգը, ազգային ինքնությունը և լեզուն՝ որպես հոգևոր անվտանգության առանցքային օբյեկտներ. եռալեզու պաշտպանական-անվտանգային բառարանը՝ որպես լեզվի բնագավառում համատեղայնացման օրինակ: «ՀԲ», 2018, հմ. 3 (էլեկտրոնային տարբերակը՝ (https://razmavaraget.files.wordpress.com/2018/12/armenian_army_n3_2018.pdf)):

[4] Տես *Կրթանես եպիսկոպոս Աբրահամյան,* Ազգային-հոգևոր արժեքների նկատմամբ սպառնալիքները և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը հոգևոր արժեքների, հասարակության ինքնության և պետության պահպանման գործում: «ՀԲ», 2018, հմ 3 (էլեկտրոնային տարբերակը՝ (https://razmavaraget.files.wordpress.com/2018/12/armenian_army_n3_2018.pdf)):

[5] Տես նույն տեղում:

[6] Տես *Jonathan E. Shaw.* The Role of Religion in National Security Policy Since September 11, 2001. Carlisle paper, February 2011 (https://www.globalsecurity.org/military/library/report/2011/ssi_shaw.pdf):

Ժամանակակից ռուսաստանյան հասարակագիտական տեսություններում կրոնը դիտվում է որպես հասարակության համախմբման միջոց, ինչը պայմանավորված է համախմբման մի շարք այլ կարևոր գործիքների քայքայմամբ, մասնավորապես՝ արժեհամակարգային աղճատումներով, հասարակության մեջ արմատավորված հեդոնիստական մղումներով, «սպառողական հասարակության» ձևավորմամբ և բարոյահոգեբանական բնույթի այլ արատներով[7]:

Հասարակության հոգևոր և բարոյական անկումը ուղղակի սպառնալիք է՝ ուղղված ընդդեմ ազգային անվտանգության շահերի, և խարխլում է պետության ազգային անվտանգությունն ապահովող հաստատությունները: Ձինված ուժերում հոգևոր և բարոյական արժեքների պաշտպանվածությունը ու ռազմահայրենասիրական ոգու ձևավորումը, պահպանումն ու ամրապնդումը նրանց մարտունակության աստիճանի բարձրացման և դրված խնդիրների արդյունավետ կատարման ապահովման երաշխիք են: Պատահական չէ, որ ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության մեջ որպես անվտանգությանն ուղղված ներքին սպառնալիքներ են դիտվում բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության թերի վիճակը, ազգային ինքնության աղավաղումը, շեշտվում է հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնությանն ու բարոյական արժեքներին սպառնացող երևույթների կանխման կարևորությունը[8]: Ռազմական և հոգևոր անվտանգության հիմնախնդիրների փոխադարձ կապի մասին դրույթներ է պարունակում նաև ՀՀ Ռազմական դոկտրինը, որում ռազմական անվտանգության ապահովման հարցում շեշտվում է ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստվածության և ռազմահայրենասիրական դաստիարակության կարևորությունը[9]:

Փորձենք պարզել ազգային անվտանգության բազմաշերտ համակարգում ՀՀ ռազմական անվտանգության ապահովման համակարգի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային-հոգևոր ու բարոյական արժեքների ստեղծման, պահպանման և տարածման գործում առանցքային դերակատարի փոխադարձ կապը:

Հատկանշական է, որ հայ մշակույթում դեռ վաղուց են ձևավորվել բանակի և եկեղեցու կապի հաստատութենացման պատմական հիմքերը: Մեր պատմության տարբեր շրջաններում՝ պետականություն չունենալու պայմաններում, Եկեղեցին հանձն է առել ժողովրդի ինչպես հոգևոր-մշակութային,

[7] Տես *М. В. Силантьева.* Религия как фактор социальной консолидации современного российского общества. «Точки. PUNCTA», январь-июнь 2011, № 1-2 (https://mgimo.ru/upload/iblock/ff9/ff9d488f5110802e87e3e07b8d4fd926.pdf):

[8] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 21-22 (էլեկտրոնային տարբերակը՝ (https://razmavaraget.files.wordpress.com/2019/07/national-security-strategy-of-the-republic-of-armenia.pdf)):

[9] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ 4, էջ 44:

այնպես էլ կեցության ֆիզիկական գոյության ապահովման առավելությունը: Քրիստոնեական հավատքի հիմքով ձևավորված ազգային հոգևոր արժեքները, մշակույթն ու հասարակության ինքնության կերտումը մշտապես դիտվել են որպես գոյատևման կարևորագույն հոգևոր-բարոյական ռեսուրս:

Արցախյան ազատագրական պատերազմում տարած հաղթանակից հետո Զինված ուժերում քրիստոնեական հավատի ու արժեհամակարգի ամրապնդման, հոգևոր զարգացման, բարոյական նորմերի կերտման ծանրակշիռ նշանակության կարևորմամբ հիմնադրվեց ՀՀ ԶՈՒ-ի Հոգևոր առաջնորդության հաստատությունը: Նախ նշենք, որ Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում նշված է. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իրավունք ունի ունենալու մշտական հոգևոր ներկայացուցիչ հիվանդանոցներում, մանկատներում, տուն-ինտերնատներում, զորամասերում, ազատազրկման վայրերում…»[10]:

Հայ եկեղեցում ԶՈՒ-ի հոգևոր ծառայությունն ստեղծվել է 1997 թ. նոյեմբերի 13-ին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև փոխհամաձայնության հուշագրի ստորագրմամբ: Հուշագրում հստակեցվում էին բանակի հոգևոր ծառայողների գործունեության ոլորտը, հոգևոր ծառայության կառուցվածքը, խնդիրներն ու նպատակները: 2000 թ. սեպտեմբերի 14-ին հաստատվել է «ՀՀ Զինված ուժերում Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու հոգևոր ծառայության» կանոնադրությունը[11]: Այսպիսով՝ ՀՀ Զինված ուժերում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր ծառայությունը հաստատվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակով, ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով և մտնում ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի մեջ: ԶՈՒ-ի հոգևոր սպասավորների գործունեությունը կանոնակարգելու և վերահսկելու նպատակով նշանակվում է ծառայության պատասխանատու՝ ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդ: Զորամասերում հոգևոր սպասավորները գործում են Հոգևոր ծառայության առաջնորդի և ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալի հաստատած ծրագրերով, իսկ ընթացիկ և կազմակերպական հարցերում առաջնորդվում են զորամասի հրամանատարի հրամաններով՝ համագործակցելով հրամանատարի դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալի հետ[12]:

Հատկանշական է, որ նախկինում ևս ձեռնարկվել են եկեղեցի–բանակ

[10] Տես ՀՀ 2007 թ. փետրվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» հմ. ՀՕ-80-Ն օրենքը, հոդ. 10 (https://www.gov.am/u_files/file/kron/ekegheci.pdf):

[11] Տես «Հոգևոր առաջնորդությունը զինված ուժերում»: ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջ (http://www.mil.am/hy/libraries/23?fbclid=IwAR3mD151k_2Rh9akOf269QndjwfPKPOQuie-1RUo-qTvEkeTEjjFvPv1YHI):

[12] Տես *Արշեն աբեղա Սանոյան,* Բանակային քահանաների հաստատությունը ՀՀ Զինված ուժերում: «ՀԲ», 2001, հմ 1-2 (էլեկտրոնային տարբերակը՝ (https://razmavaraget.files.wordpress.com/2001/02/2001-1-2.pdf)):

կապի իրավական կարգավորման քայլեր: Այս առումով հիշատակման արժանի փաստաթուղթ է 1918 թ. Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի (1932–1938 թվականներին՝ Խորեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս) կազմած «Հրահանգ զինվորական քահանաների համար» նախագիծը, որը նա նամակով ներկայացրել էր Գևորգ Ե կաթողիկոսին՝ նշելով, որ հայկական գնդերի քահանաները դիմում են իրեն՝ տարբեր հարցերի վերաբերյալ խնդրելով հրահանգներ: 10 կետից բաղկացած նախագծով զինվորական քահանաներին հրահանգվում էր օրվա որոշակի ժամերի լինել իրենց գնդի հետ, ազատ ժամերին դասախոսել Ս. Գրքի և ազգային-եկեղեցական ավանդության թեմաներով, զինվորների մեջ վառ պահել պարտքի գիտակցությունը և ազգի ու ազգային սրբությունների նկատմամբ սերը, և այլն[13]:

Զինված ուժերի անձնակազմի շրջանում ՀՀ ԶՈՒ-ի Հոգևոր առաջնորդության գործունեության հիմնական ուղղությունը պետք է լինի ճշմարիտ քրիստոնեական գաղափարախոսության քարոզմամբ հասարակությունը պառակտող, դրա ինքնության կայացմանը խոչընդոտող և Զինված ուժեր ներթափանցող տարաբնույթ աղանդավորական շարժումների (Եհովայի վկաներ, Մորմոններ, Ադվենտիստներ, Յոթերորդ օրվա ադվենտիստներ և ուրիշներ), կամայական կրոնական ընկալումների տարածման, հոգեորսության դեմ պայքարը: ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը»[14]: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի երկրորդ մասով այդ ազատությունը կարող է սահմանափակվել օրենքով՝ «պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»[15]: Կա համոզմունք, որ տարբեր միջազգային կառույցների և թշնամական պետությունների ֆինանսավորմամբ «լույս» տարածող այս կրոնական ուղղությունները և ենթամշակույթները կատարում են հովանավորող պետության գաղտնի ծառայությունների հրահանգները և հետախուզական առաջադրանքներ՝ մեծապես վտանգելով ՀՀ ազգային անվտանգությունը[16]: Ընդսմին հատկանշական է, որ աղանդավորական շարժումները սովորաբար իրենց գործունեության տարածումն սկսում են հիմնականում 18–25 տարեկանների շրջանում, ինչը նշանակում է, որ նրանց համար թիրախայինը Զինված ուժերն են:

[13] Տես *Գարիկ սարկավագ Ասրյան,* Հոգևոր ծառայությունը հայոց բանակում (ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդություն), օգոստոս 2015 (http://theanalyticon.com/?p=6675):

[14] Տես «ՀՀ Սահմանադրության փոփոխություններ», 06.12.2015, հոդ. 41, կետ 1 (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510):

[15] Տես նույն տեղում, հոդ. 41, կետ 2:

[16] Տես *Վրթանես եպիսկոպոս Աբրահամյան,* Նշ. աշխ:

Բոլոր ժամանակակից կրոնական ենթամշակույթների հիմնական թիրախը այն անհատներն ու հասարակական խմբերն են, որոնք գտնվում են հոգեկան, սոցիալական, հոգեբանական և ֆիզիկական ծանր դրության մեջ: Իսկ ինչպես գիտենք, զինվորական ծառայությունը կարող է ուղեկցվել անկումային, ապահարմարումային հոգեվիճակներով, որոնք «հաղթահարելու» համար աղանդավորական կրոնական կառույցներն առաջարկում են «փրկագործության» իրենց «ուրույն ճանապարհը»: Ուստի ԶՈՒ-ի հոգևոր ծառայության կարևոր խնդիրներից է տեղեկատվական ու գաղափարական քարոզչության միջոցով խափանել ԶՈՒ-ի անձնակազմի շրջանում աղանդավորական կազմակերպությունների վարած գործունեությունը: Այս առումով կարևոր է ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդության գնդերեցների միջոցով զինծառայողների շրջանում կատարվող ամենօրյա աշխատանքը[17]: Մասնավորապես՝ հոգևոր ծառայությունը ՀՀ Զինված ուժերի անձնակազմին հաղորդակից է դարձնում Աստվածաշնչին, Քրիստոսի Ավետարանին և քրիստոնեական հավատքի սկզբունքներին, դաստիարակում քրիստոնեական բարոյական սկզբունքներ, ձևավորում ճշմարիտ քրիստոնեական պատկերացումներ: Զորամասի գրադարանները համալրվում են հոգևոր գրականությամբ, բաժանվում են Աստվածաշունչ, «Էջմիածին» ամսագիրը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթը, հոգևոր բնույթի տարբեր գրքույկներ, աղոթագրքեր: Հոգևոր ծառայողները դասախոսություններ են կարդում, զինվորների հետ զրույցներ են անցկացնում, յուրաքանչյուր մարտական հերթապահությունից առաջ դիրքապահ զինվորներին խրախուսում են, իրենց խոսքով և աղոթքով ճանապարհում, այցելում են նաև սահմանապահ ուղեկալներ, կազմակերպում ուսուցողական ֆիլմերի ցուցադրումներ, ուխտագնացություններ, կատարում են Եկեղեցու խորհուրդները, ժամերգություններ և եկեղեցական այլ արարողություններ[18]: Մեր կարծիքով՝ այս բնագավառում հույժ կարևոր է, որ գնդերեցները չմտնեն աղանդավորական քարոզիչների հետ աստվածաբանական վեճերի՝ փորձելով տրամաբանական դատողություններով հերքել նրանց իրավացիությունը: Նրանց ամենահաղթ զենքը պետք է լինեն Հայաստանյայց Առաքելական եկեղեցու բազմադարյա անբասիր ծառայությունը հայ ժողովրդի ազգային շահերին և աղանդների ապազգային բնույթի բացահայտումը[19]:

Հոգևոր անվտանգության կարևոր օբյեկտներն են ազգը և նրա հիմնական բնութագրիչը՝ ազգային ինքնությունը[20]: «Աշխարհում տեղի ունեցող համընդհանրացումը, ժամանակակից արագընթաց զարգացման պայմաններում նպաստելով մարդկության ընդհանուր առաջընթացին, միևնույն ժամանակ բովանդակում է այնպիսի տարրեր, որոնք սպառնում են ազգային

[17] Տես նույն տեղում:

[18] Տես «Հոգևոր առաջնորդությունը զինված ուժերում»:

[19] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Թ. Դ. Չիլինգարյան, Ս. Դ. Չիլինգարյան,* Կրոն–Եկեղեցի–աղանդ–ազգ: «ՀԲ», 2003, հմ. 1:

[20] Տես *Դ. Ս. Չիլինգարյան,* Նշ. աշխ.:

ինքնությանը, ազգային մշակույթին, ազգային ինքնագիտակցությանը, հատկապես՝ սակավաթիվ ազգերի ու փոքր պետությունների դիմազրկմամբ»[21]: Հասարակությունից բանակ են ներթափանցում բարոյական նորմերը խախտող կեղծ մշակութային արժեքներ, հայ ազգային հոգեկերտվածքին խորթ գաղափարներ, աշխարհայեցողական խեղումներ, որոնք թերևս միտված են բարոյահոգեբանական անկայունության առաջացմամբ հասնելու ԶՈՒ-ի մարտունակության անկման: Այս առումով ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդության գործառույթը՝ որպես հայ ինքնության կերտման և պահպանման երաշխիք զինվորներին ազգային հոգևոր-մշակութային ժառանգությանը մշտապես հաղորդակից դարձնելն է:

Արդի աշխարհում տեղեկատվապես հագեցած հասարակությունների գիտակցության մեջ իշխում է համընդհանրացման գաղափարների և ազգային ինքնանույնականացման արժեքային երկվությունը[22]: Ընդ որում, ազգային ինքնանույնականացումը սերտորեն կապված է կրոնական ավանդույթների ու գաղափարաբանական առանձնահատկությունների հետ, որոնք էլ, իրենց հերթին, ազդում են հայրենասիրության զգացումի ձևավորման վրա: Մեր կարծիքով՝ Հայ Եկեղեցին ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդության միջոցով քրիստոնեական արժեհամակարգը պետք է դնի ԶՈՒ-ի անձնակազմի շրջանում հայրենիքին նվիրվածության, պետության ու նրա ատրիբուտների նկատմամբ հարգալից վերաբերմունքի վսեմ արժեքային կողմնորոշումների ձևավորման ու արմատավորման հիմքում, ռազմահայրենասիրական դաստիարակությունը կառուցի հավատքի, հոգևոր արժեքների, ազգային ինքնության պահպանման համար մղվող սրբազան ու հերոսական պայքարի գաղափարի հիմքով: ՀՀ ԶՈՒ-ի հոգևոր առաջնորդության հաստատության դերակատարությունը մեծ է նաև ԶՈՒ-ի դեմ ուղղված հոգեբանական ու տեղեկութային սպառնալիքների չեզոքացման գործում: Այս տեսանկյունից կարևոր ենք համարում ԶՈՒ-ի գնդերեցների, հոգևոր սպասավորների անընդհատ վերապատրաստման, լրացուցիչ և շարունակական կրթության նշանակությունը:

Այսպես. ժամանակակից աշխարհում ռազմական ոլորտի սրընթաց զարգացման, գերժամանակակից ռազմական տեխնիկայի, սպառազինությունների մրցավազքի պայմաններում աշխարհի առաջադեմ պետությունները նպատակաուղղված աշխատանք են տանում նաև հոգևոր անվտանգության բաղադրիչի ապահովման ուղղությամբ, քանի որ բոլոր ժամանակ-

[21] Տես *Հ. Ս. Քոթանջյան,* Հայաստանի Հանրապետության զարգացման և անվտանգության նպատակներն ու գերակայությունները գլոկալիզացման պահանջների լույսով՝ «թավշյա հեղափոխության» նպատակադրման իմաստավորմամբ: «ՀԲ», 2018, հմ 3 (էլեկտրոնային տարբերակը՝ (https://razmavaraget.files.wordpress.com/2018/12/armenian_army_n3_2018.pdf)):

[22] Տես *В. К. Борецкая.* Религиозные ценности как фактор формирования чувства патриотизма (http://rep.barsu.by/bitstream/handle/data/1245/Religioznye%20cennosti%20kak%20faktor%20formirovanija%20chuvstva%20patriotizma.pdf?sequence=1&isAllowed=y):

ներում կրոնը եղել է նաև պատերազմում հասարակությանը համախմբող զենք[23]: Մի շարք պետություններում՝ Ռուսաստան, Հունաստան, Դանիա, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Իսրայել, նույնպես ներդրված է բանակային քահանաների հաստատությունը:

Ամերիկյան բանակում գործող այդ հաստատությունը ամենահներից է: Այն ղեկավարում է Քահանաների գործերով խորհուրդը: Այն ենթարկվում է Պաշտպանության նախարարի՝ անձնակազմի հարցերով օգնականին: Զինված ուժերում ծառայում են 5000 քահանա: Նրանք ներկայացնում են հինգ մեծ դավանաբանական խումբ՝ կաթոլիկներ, բողոքականներ, հուդայականներ, բուդդայականներ, մահմեդականներ, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու հոգևոր ծառայություն տարբեր կրոնների ու դավանանքների զինծառայողների համար: ԱՄՆ-ի ԶՈՒ-ում զինվորական քահանաները շտաբային սպաներ են, ունեն զինվորական կոչումներ, կրում են զինվորական հագուստներ և տարբերանշաններ: Նրանք զենք չեն կրում: Քահանաները կազմակերպում են զինվորական-կրոնական միջոցառումներ, ամենօրյա աղոթք, մասնակցում են թմրամոլության, ալկոհոլիզմի դեմ պայքարին, ինքնասպանությունների կանխարգելման ծրագրերին, կազմակերպում մարդկության հոգևոր ժառանգության լուսաբանումներ և այլն[24]: Գեներալ Զ. Մարշալի կարծիքով՝ ազգային շահից է բխում, որ զինված ուժերի անձնակազմը պաշտպանված լինի բարոյական, հոգևոր ու կրոնական արժեքների իրացման և զարգացման առումներով, ուստի զինվորներին պետք է ուսուցանվի ոչ միայն պատերազմի արվեստը, այլև կրոնը[25]:

Ռուսական Ուղղափառ եկեղեցու զինվորական հոգևոր ծառայությունն ստեղծվել է 2009 թվականին: Ուշագրավ է, որ սկզբնական շրջանում հոգևոր ծառայողները պետք է ծառայության անցնեին արտերկրում գտնվող ստորաբաժանումներում: Բացի զուտ կրոնական գործառույթներից, մասնավորապես՝ ժամերգություններ, կրոնական ծիսակատարություններ, լուսավորական աշխատանք և այլն, նրանք աշխատում են նաև կարգուկանոնի հաստատման, իրավախախտումների ու անձնակազմում ոչ կանոնադրային հարաբերությունների և ինքնասպանական դեպքերի կանխարգելման ուղղությամբ, մասնակցում են հրամանատարության ձեռնարկած զինծառայողների ռազմահայրենասիրական և բարոյական դաստիարակչական աշխատանքներին, քրիստոնեական բարոյական նորմերի հիման վրա անձնակազմում ստեղծում են առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ և այլն[26]:

[23] Տես *Presco Hernandez.* Religion as a Weapon of War: Understanding Individual and Collective Aspects of Religion and their Implications for the Concept and Practice of Design (https://usacac.army.mil/sites/default/files/documents/cace/LREC/religion_as_weapon_of_war.pdf):

[24] Տես "US Army Chaplain Corps". National Museum United States Army, 28 January 2015 (https://armyhistory.org/u-s-army-chaplain-corps/):

[25] Տես *T. Jeremy Gunn.* Spiritual Weapons. The Cold War and the Forging of an American National Religion. Westport, Connecticut, London, 2009:

[26] Տես «Положение о военном духовенстве Русской Православной Церкви в Российской Федерации» (http://www.patriarchia.ru/db/text/3481010.html):

Այսպիսով՝ ՀՀ ազգային անվտանգության հոգևոր բաղադրիչի ապահովման համատեքստում Զինված ուժերում ՀՀ Հոգևոր առաջնորդության առաքելությունը ունի ոչ միայն հոգևոր-կրոնական, այլև բարոյահոգեբանական, գաղափարաբանական-քարոզչական, մշակութային, սոցիալական բովանդակություն: Եկեղեցի–բանակ կապի ամրապնդման, զարգացման, հաստատութենացման ընթացքում ՀՀ ԶՈՒ-ի Հոգևոր առաջնորդությունն ստեղծվել է ոչ թե ներմուծվող կամ պարտադրվող օրինակների ու մոդելների, այլ յուրային պատմական իրողությունների ու փորձի հիման վրա, մի ազգի համար, որը գիտակցված մահի գաղափարը համարում է գերակա արժեքներից մեկը:

ДУХОВНАЯ БЕЗОПАСНОСТЬ

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ДУХОВНОГО ПРЕДВОДИТЕЛЬСТВА ВС РА В КОНТЕКСТЕ ОБЕСПЕЧЕНИЯ ДУХОВНОЙ БЕЗОПАСНОСТИ

С. С. МЕЛИКЯН, аспирант ЕГУ, лектор кафедры политических институтов и процессов

РЕЗЮМЕ

В 1997 г. между Эчмиадзинским католикосатом и Министерством обороны РА был подписан меморандум о взаимосогласии ВС РА и Армянской Апостольской Святой Церкви по вопросу институционализации связей: в ВС РА было создано Духовное предводительство.

Миссия Духовного предводительства заключается в: укоренении истинного христианского вероучения в среде военнослужащих; борьбе с различными сектантскими движениями, нацеленными на раскол общества и препятствование формированию национальной самости и самосознания; воспитанию в военнослужащих приверженности национальному духовно-культурному наследию и преданности Родине; формированию в них уважительного отношения к государству и его атрибутам на основе христианской ценностной системы; военно-патриотическом воспитании воинов на идеях священной и героической борьбы за сохранение веры, духовных ценностей, национальной самости. Тем самым Духовное предводительство ВС РА в значительной степени способствует обеспечению высокого уровня боеспособности нашей армии, воспитанию армянского воина как полноценного гражданина нашего национального государства.

THE ROLE AND SIGNIFICANCE OF THE SPIRITUAL LEADERSHIP IN THE RA ARMED FORCES IN THE CONTEXT OF ENSURING SPIRITUAL SECURITY

S. S. MELIKYAN, Graduate Student, YSU, Lecturer,
Chair of Political Institutes and Processes

SUMMARY

In 1997, the Echmiadzin Catholicosate and the RA Ministry of Defense signed a memorandum of understanding between the RA Armed Forces and the Holy Armenian Apostolic Church on the institutionalization of relations: Spiritual Leadership was set up in the RA Armed Forces.

The mission of the Spiritual Leadership is: to root the true Christian beliefs among the servicemen; to struggle against various sectarian movements targeted at splitting the society and preventing the formation of a national identity and self-consciousness; to nurture the servicemen for the commitment to the national spiritual and cultural heritage and devotion to the Homeland; to shape in them a respectful attitude to the state and its attributes on the basis of the Christian system of values; to provide soldiers with military-patriotic education on the ideas of the sacred and heroic struggle for the preservation of faith, spiritual values, national identity. Thus, the Spiritual Leadership in the RA Armed Forces contributes significantly to ensuring a high level of combat effectiveness of our army, educating the Armenian soldier as a full-fledged citizen of our Nation State.

ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆԵՐԱՆՁՆԱՅԻՆ ԳԺՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Զ. Ղ. ԱՍԱՏՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Գիտահետազոտական կենտրոնի ռազմագիտական խմբագրման բաժնի պետ–գլխավոր խմբագրի տեղակալ

Զինվորական ծառայության ընթացքում պարտադիր զինվորական ծառայության զինծառայողները (այսուհետև՝ զինծառայողներ) երբեմն բախվում են այնպիսի դժվարությունների, որոնք դառնում են ներանձնային գժտությունների (կոնֆլիկտների) պատճառ*: Հետազոտությունները ցույց են տալիս, որ թեև դրանց ծագման պատճառների մի զգալի մասը կապված է տվյալ անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների հետ, այսինքն՝ անձնային է, սակայն դրանք կարող են լուրջ կերպով ազդել տվյալ մարդու շրջապատում, մեր դեպքում՝ զինվորական կոլեկտիվում, տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի վրա[1]:

Ինչպես հայտնի է, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի» մասին ՀՀ օրենքի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիները՝ մինչև իրենց 27 տարին լրանալը: Դա տարիքային հոգեբանության մեջ համապատասխանում է պատանեկության և երիտասարդության փուլերին: Այս փուլերում մարդն անցնում է բավական ինտենսիվ սոցիալականացման շրջան, որն էական ազդեցություն է գործում ճանաչողական պրոցեսների և ինքնագիտակցության զարգացման, բարոյական նորմերի համակարգի ձևավորման, հիմնական անձնային որակական հատկությունների, հմտությունների, գիտելիքների ձեռքբերման վրա:

---

* Ներանձնային գժտություն է կոչվում մարդու (անձնավորության) այն վիճակը, երբ նա ունենում է հակասական ու փոխբացառող շարժառիթներ, արժեքներ և նպատակներ, որոնք տվյալ պահին չի կարողանում հաղթահարել, չի կարողանում մշակել վարքի գերակայություններ (տես «Внутриличностный конфликт». «MED портал» (https://medportal.ru/enc/psychology/conflictology/7/):

[1] Տես, օրինակ, *В. П. Щербакова*. Влияние личностных качеств сотрудников на психологический климат коллектива. «Вестник Тамбовского университета». Серия «Гуманитарные науки. Психология», 2009, вып. 9 (https://cyberleninka.ru/article/v/vliyanie-lichnostnyh-kachestv-sotrudnikov-na-psihologicheskiy-klimat-kollektiva):

Այսպես. հայտնի բելգիացի հոգեբաններ Մ. Ա. Ռոբերը և Ֆ. Տիլմանը, որոնց տեսակետներն առավել մոտ են նոր ֆրոյդականության դպրոցի հայացքներին, առանձնացնում են սոցիալականացման չորս փուլ՝ բերանային, սրբանային, ֆալլոսյան ու մանկությունից դեպի հասունություն, և դրանք տեղադրում ժամանակային սանդղակի վրա: Վերջին փուլը, որն սկսվում է դպրոցն ավարտելուց հետո, անձնավորության հոգեբանական հասունության շրջանն է, երբ մարդը որոշակիորեն ձգտում է ինքնուրույնության, որը դրսևորվում է որոշակի ազատությունից օգտվելու և սահմանափակումների ու արգելանքների հետ հաշվի նստելու հնարավորության, պատասխանատվության զգացումի և այլ մարդկանց հետ շփվելու կարողության ձևով[2]:

Ուստի, եթե անձնավորության սոցիալականացումն այդ փուլում տեղի է ունեցել աղճատված ձևով՝ որևէ հավասարակշռող բաղադրիչի, օրինակ՝ ազատ լինելու ձգտման գերակայությամբ, ապա տվյալ անձնավորության հոգեկանը կլինի ոչ լիարժեքորեն զարգացած, ինչը կխանգարի նրան բնականոն ձևով հաղորդակցվելու շրջապատի հետ:

Միևնույն ժամանակ, այս տարիքային փուլերում անձնավորությանը բնորոշ է սոցիալական միջավայրում հեղինակություն ձեռք բերելու միջոցով ինքնահաստատվելու ձգտումը[3]: Այլ կերպ ասած՝ նա արտաքին ազդակների նկատմամբ հույժ զգայուն է, իսկ դրանց հակազդելու բնույթը կախված է առաջին հերթին նրա արդեն ձևավորված որակական հատկություններից, սոցիալական գիտելիքներից, ունակություններից ու հմտություններից: Նրա համար զինվորական ստորաբաժանումները՝ որպես նոր սոցիալական միջավայր, նախորդ միջավայրներից խիստ տարբերվում են բոլոր գործողությունների կանոնակարգվածությամբ, հարաբերությունների խիստ ենթակարգությամբ և նույն սեռի ներկայացուցիչներից կազմված խմբում ներգրավվածությամբ: Արտաքին ազդեցությունների հաղթահարումը նրանից պահանջում է հոգեկան ուժերի զգալի ծախս, որն ուղեկցվում է ստրեսային վիճակներով: Դրանց պատճառով հոգեկանի հասունության ոչ բավարար մակարդակի դեպքում ստրեսը կարող է առաջ բերել ներանձնային գժտություններ, որոնք կարող են վերաճել միջանձնային և անգամ միջխմբային գժտությունների՝ նվազեցնելով տվյալ զինվորական ստորաբաժանումում կարգապահության մակարդակը:

Մասնագիտական գրականության մեջ նաև նշվում է, որ գոյություն ունեն ներանձնային գժտությունների հետևյալ ցուցանիշները, որոնք, ըստ էության, դրսևորվում են երեք ոլորտներում.

---

[2] Տես *Մ. Ա. Робер, Ֆ. Тильман*. Психология индивида и группы. М., 1988: Բերված է ըստ՝ *Е. П. Поликовна*. Социализация личности. «Философия и общество», 2003, № 2 (cyberleninka.ru/article/v/sotsializatsiya-lichnosti-1):

[3] Տես *Л. А. Журавлева, Х. В. Завьялова.* Молодежь как инновационная социальная общность. «Образование и наука», 2013, № 4; *К. В. Абрамов.* Социально-психологические ресурсные возможности молодежи. «Мониторинг общественного мнения», 2010, № 6 (https://cyberleninka.ru/article/v/sotsialno-psihologicheskie-resursnye-vozmozhnosti-molodezhi):

1. *Ճանաչողության ոլորտ*՝ խախտվում է մարդու իր անձնավորության ընկալումը, այն է՝ նվազում է ինքնագնահատականը, իրավիճակը ընկալվում է որպես փակուղի, կասկածի տակ են դրվում նախկին արժեքները, դանդաղում է որոշումների ընդունումը,

2. *Հուզական ոլորտ*՝ աճում է հոգեկանի լարվածությունը և առաջանում են լուրջ բացասական ապրումներ,

3. *Վարքային ոլորտ*՝ ի հայտ են գալիս բացասական փափոխություններ, այն է՝ նվազում են գործունեության ինտեսիվությունն ու որակը, նկատվում է անբավարարվածություն գործունեությունից, հաղորդակցման մեխանիզմները գործում են խիստ բացասական ֆոնի վրա:

Դրանց ավելացվում են չորրորդ տեսակի ցուցանիշները՝ ինտեգրալ, այն է՝ վատթարանում են հարմարման մեխանիզմները, ուժեղանում է ստրեսը[4]:

Ինչպես տեսնում ենք, ներանձնային գժտությունները բացասաբար դրսևորվում են հոգեկանի գրեթե բոլոր ոլորտներում՝ ավելի վտանգավոր դառնալով, երբ խաթարվում է պաշտպանական մեխանիզմների գործունեությունը:

Հոգեբանական հակամարտաբանության մասնագետները, վերլուծելով մի շարք հոգեբանական տեսություններ, ներկայացրել են ներանձնային գժտությունների ծագման պատճառները, դրանց զարգացման և հաղթահարման օրինաչափությունները[5]:

Այսպես. ֆրոյդականության տեսությամբ մարդու մեջ նրա ծնված օրից պայքարում են երկու հակադիր բնազդներ, որոնք պայմանավորում են նրա վարքը: Դրանք են՝ էրոսը (սեռական, կյանքի և ինքնապահպանման բնազդը) և Թանատոսը (մահվան, ագրեսիայի, քայքայման ու կործանման բնազդը), և ներանձնային գժտությունը հենց էրոսի ու Թանատոսի մշտական պայքարի հետևանք է: Այդ պայքարը դրսևորվում է մարդու զգացմունքների երկարժեքության (ամբիվալենտություն), դրանց հակասականության միջոցով: Զգացմունքների երկարժեքությունն ուժգնանում է հասարակական կյանքում եղած հակասությունների հետևանքով և վերաճում գժտության: Անձնավորության ներքին հիմնական հակասությունները ծագում են «Նա»-ի և «Գեր-ես»-ի միջև, իսկ դրանք կարգավորում է «Ես»-ը: Եթե «Ես»-ին չի հաջողվում լուծել «Նա»-ի և «Գեր-ես»-ի միջև ծագած գժտությունը, ապա գիտակցականի մակարդակում առաջանում են խոր ապրումներ, որոնք բնութագրական են ներանձնային գժտության համար: Ֆրոյդն իր տեսության մեջ ուրվագծում է ոչ միայն ներանձնային գժտությունների ծագման պատճառները, այլև դրանցից պաշտպանության մեխանիզմները: Դրանցից հիմ-

[4] Տես *С. М. Емельянов.* Практикум по конфликтологии (https://psy.wikireading.ru/17289); «Внутриличностный конфликт» (https://syntone.ru/psy_lib/vnutrilichnostnyj-konflikt/):

[5] Տես, օրինակ, *Н. В. Гришина.* Психология конфликта. М., 2008 (http://www.law.vsu.ru/structure/criminalistics/books/grishina_psy_conf.pdf), նաև՝ *А. Я. Анцупов, А. И. Шипилов.* Конфликтология. М., 1999, сс. 292–299:

նականը սուբլիմացիան է[6]: Բացի այդ, Ֆրոյդն առանձնացնում է նաև այնպիսի պաշտպանական մեխանիզմներ, ինչպիսիք են պրոեկցիան, ռացիոնալացումը, արտամղումը, ռեգրեսիան[7]:

Ըստ Ա. Ադլերի՝ անձնավորության բնավորության ձևավորումը տեղի է ունենում մարդու կյանքի առաջին 5-6 տարիների ընթացքում: Երբեմն այդ շրջանում նրա վրա ազդում են անբարենպաստ գործոններ, որոնք էլ առաջացնում են թերարժեքության բարդույթ, որը էական ազդեցություն է գործում անձնավորության վարքի, ակտիվության, մտածողության և այլ հոգեկան կենսընթացների վրա: Ըստ Ադլերի՝ ներանձնային գժտությունը թերարժեքության զգացումի և դրա հաղթահարման ձգտման միջև մշտապես ընթացող պայքարն է[8]:

Կ. Յունգի կարծիքով՝ ներանձնային գժտությունը անձի կառուցվածքի հակամարտային բնույթի հետևանք է: Անձնավորության տիպաբանության մեջ գլխավորը ուղղվածությունն է՝ էքստրավերսիան (արտագցողություն) կամ ինտրավերսիան (ներգցողություն): Ըստ այս տեսության՝ անձնային դիրքորոշումը, ի վերջո, կարող է դրսևորվել ներանձնային գժտությունների ձևով: Այսպես. էքստրավերտն իր ներաշխարհը կառուցում է արտաքին աշխարհին համապատասխան, մինչդեռ ինտրավերտը ամփոփված է ինքն իր մեջ, նրա համար ամենակարևորը ներքին ապրումների աշխարհն է: Ակնհայտորեն էքստրավերտը ավելի մեծ չափով է ենթակա ներանձնային գժտությունների, քան ինտրավերտը[9]:

Է. Էրիքսոնն առաջ է քաշել և հիմնավորել անձի հոգեկան-սոցիալական զարգացման փուլերի գաղափարը: Այդ փուլերից յուրաքանչյուրում մարդը վերապրում է իր ճգնաժամը՝ դրա բարեհաջող կամ անբարեհաջող հաղթահարմամբ: Առաջին դեպքում տեղի է ունենում անձի պոզիտիվ զարգացում, նա վստահ անցնում է կյանքի հաջորդ փուլ՝ դրա բարեհաջող հաղթահարման համար լավ նախադրյալներով: Երկրորդ դեպքում անձն իր կյանքի հաջորդ փուլ է մտնում նախորդ փուլի պրոբլեմներով (բարդույթներով), ինչն ստեղծում է անձնավորության զարգացման համար անբարենպաստ նախադրյալներ և առաջացնում ներքին ապրումներ: Ըստ այդմ՝ 12–19 տարեկան անձանց համար բնութագրական են կա՛մ «Ես»-ի նույնականությունը (պոզիտիվ), կա՛մ դերերի խառնումը (նեգատիվ), իսկ 20–25 տարեկանների համար համապատասխանաբար՝ կա՛մ մտերմությունը, կա՛մ մեկուսացումը[10]:

---

[6] Տես *Ս. Մ. Եմելյանով,* Նշ. աշխ.:

[7] Տես *Զ. Фрейд.* Я и Оно (https://www.gumer.info/bibliotek_Buks/Psihol/freyd/ya_ono.php):

[8] Տես *Ս. Մ. Եմելյանով,* Նշ. աշխ., նաև՝ *Альфред Адлер.* Наука жить (http://lib.ru/PSIHO/ADLER/live.txt):

[9] Տես *Ս. Մ. Եմելյանով,* Նշ. աշխ., նաև՝ *Карл Густав Юнг.* Психологические типы (http://transyoga.ru/assets/files/books/psychology/yung_tip_lichnosti.pdf):

[10] Տես *Է. Эриксон.* Детство и общества (http://psychoanalysis.by/wp-content/uploads/2018/04/detstvo_i_obshestvo.output.pdf):

Վարքաբանական դպրոցի ներկայացուցիչներից Բ. Սկինները նշում է, որ ներանձնային գժտություններն այնպիսի հակազդեցությունների համախումբ են, որոնք առաջանում են սխալ դաստիարակության հետևանքով: Ըստ Կ. Լևինի՝ դրանք մի իրավիճակ են, որը պայմանավորված է անձնավորության վրա ներգործող հավասարազոր ուժերի միջև ընտրություն կատարելու անհրաժեշտությամբ: Ճանաչողական հոգեբանության դպրոցի ներկայացուցիչներ Զ. Քելլին, Լ. Ֆեստինգերը ներանձնային գժտությունը դիտում են որպես մի բացասական իրավիճակ, երբ գիտելիքները չեն համապատասխանում վարքին, իսկ մարդասիրական հոգեբանության ուղղության կարկառուն գիտնական Կ. Ռոջերսը նշում է, որ այն առաջանում է, երբ հակասությունների մեջ են մտնում «Ես»-ի հայեցակարգը և մարդու փորձը: Նույն ուղղության մեկ այլ խոշոր գիտնական Ա. Մասլոուն ներանձնային գժտությունը դիտարկում է ինքնիրացման ձգտման և իրական արդյունքների միջև գոյություն ունեցող հակասությունների համատեքստում: Էքզիստենցիալ հոգեվերլուծության հիմնադիր Վ. Ֆրանկլը նշում է, որ ներանձնային գժտությունը մի վիճակ է, երբ անհատը կորցնում է կյանքի իմաստը[11]:

Ինչպես երևում է վերը շարադրվածից, գիտության մեջ բնականաբար չկան ներանձնային գժտությունների ծագման պատճառների կամ դրանց դրսևորման հոգեբանական առանձնահատկությունների նկատմամբ միասնական մոտեցումներ: Գիտության մեջ ընդունված հայեցակարգային մոտեցումների, ինչպես նաև 2016–2017 թթ. ՀՀ ԶՈՒ-ում ինքնախեղիչ վարքի արձանագրված դեպքերի վերաբերող փաստաթղթերի մեր կատարած վերլուծության, մի շարք կարգազանց զինծառայողների հետ քննազրույցների արդյունքների հաշվառմամբ փորձել ենք ներկայացնել որոշ անձնային պատճառներ, որոնք դեր են խաղում զինվորական կոլեկտիվներում ներանձնային գժտությունների առաջացման գործում: Այս առումով հարկ ենք համարում նաև նշել, որ մեր կատարած ուսումնասիրությունները վկայում են, որ հետազոտված դեպքերի տեսական բացատրությունն առավել մոտ է հոգեվերլուծական (մասնավորապես՝ Ալֆրեդ Ադլերի) և մարդասիրական հոգեբանության (մասնավորապես՝ Աբրահամ Մասլոուի պահանջմունքների բավարարման) մոտեցումներին:

1. Զինվորական գործունեության առանձնահատկությունները զինծառայողներից պահանջում են պատասխանատվություն հայրենիքի և զինակից ընկերների առջև: Այդ պատասխանատվության գիտակցումը երբեմն դառնում է հակասական մտքերի և ապրումների պայքարի աղբյուր, օրինակ՝ արդյոք ինքը կկարողանա պատվով կատարել իր պարտականությունները, արդյոք իր պատճառով վտանգի չեն ենթարկվի իր մարտական ընկերները և

[11] Տես *О. О. Шемякина.* Исследование внутриличностных конфликтов юношеского этапа развития. «Психологическая наука и образование», 2012, № 2 (http://psyjournals.ru/files/53529/psyedu_ru_2012_2_Shemyakina.pdf), նաև՝ *К. Левин.* Разрешение социальных конфликтов. СПб., 2000; *А. Маслоу.* Мотивация и личность (http://loveread.ec/read_book.php?id=49550&p=1); *В. Франк.* Человек в поисках смысла. М., 1990:

այլն: Սովորաբար որքան մեծ է անորոշությունը, այնքան բարձր է հուզական լարվածության ու ներանձնային գժտության մակարդակը, ինչի հետևանքով էլ զինծառայողը հայտնվում է սահմանային հոգեվիճակում ու դերային պայքարի բովում, և ցածր ինքնագնահատականի պատճառով թուլանում են արտաքին ներգործությունների դեմ պայքարի նրա անձնային կարողությունները:

2. Այն զինծառայողը, որի բնավորությունում գերակայում է հուզականությունը, ինչի հետևանքով նա ձեռք է բերել թերարժեքության բարդույթ, համարժեք կերպով չի ընկալում արտաքին միջավայրից ստացվող ազդակները: Նման անձնավորությունը չի կարողանում իրատեսորեն գնահատել ոչ միայն շրջապատում տեղի ունեցող իրադարձությունները, այլև իր հնարավորությունները: Նա փորձում է հույզերի ճնշման համար մշտապես մղվող ներքին պայքարը տեղափոխել արտաքին միջավայր, ինչի հետևանքով էլ արժանանում է շրջապատի բացասական վերաբերմունքի և հայտնվում եզրահանված (մարգինալ) վիճակում:

3. Զինվորական ծառայությանը զինծառայողների ֆիզիկական ու հոգեկան թույլ պատրաստականությունը սովորաբար զինվորական միջավայրում դառնում է գժտածին գործոն: Նախ. զինծառայողն ինքը չի կարողանում գործել զինվորական ծառայության պահանջներին համարժեք, ինչի հետևանքով էլ առաջանում են տարբեր բացասական հոգեկան ապրումներ՝ դառնալով անլիարժեքության բարդույթի ձևավորման պատճառ: Դրան հաճախ գումարվում է շրջապատի՝ դեռ ոչ լիարժեք չափով կայացած հրամանատարի, զինվորական կոլեկտիվի մյուս անդամների ծաղրանքը: Նման դեպքում մեծ է հրամանատարի դերը, որը կարող է, մի կողմից՝ սաստել այդ ծաղրը, մյուս կողմից՝ քաջալերել տվյալ զինծառայողին՝ օգնելով հաղթահարել ձևավորվող բարդույթը:

4. Անձնավորության արժեքային համակարգում հակաբարոյական արժեքների առկայությունը, ցինիզմը և սադիզմը բնորոշ են գժտաբարո անձանց, որոնց հատուկ են ագրեսիվ ու սանձարձակ վարքը: Նրանք մշտապես ձգտում են իրենցից ֆիզիկապես և հոգեպես թույլ անձանց ստորացնելու, ֆիզիկական բռնություն կիրառելու միջոցով իրենց պարտականությունների կատարումը նրանց պարտադրելու: Իր դեմ ուղղված սանձարձակ ու արատավոր վարքի պատճառով տեղի է ունենում զինծառայողի հիմնական պահանջմունքների (անվտանգություն և հաղորդակցում) բավարարման[12] գործընթացի խաթարում, ինչի պատճառով առաջանում է վախի զգացողություն՝ մեծացնելով հակումը դեպի ինքնախեղում և ինքնասպանություն:

5. Զինծառայողի գիտելիքներին, հմտություններին և կարողություններին ոչ համարժեք սոցիալական դերերը կամ սոցիալական միջավայրով նրանց այդպիսի դերերի պարտադրումը հանգեցնում են արտաքին գնահատականի և ինքնագնահատականի միջև անհամապատասխանության, ինչի հետևանքով էլ ծագում են ներանձնային գժտություններ:

[12] Տես *Ա. Մասլոու,* Նշ. աշխ.:

6. Հուսալքությունը, ստրեսը ևս կարող են լինել ներանձնային գժտության առաջացման պատճառ: Նման հոգեվիճակների հետևանքով հյուծվում են անձնավորության հոգեկան ուժերը, և նա զինվորական միջավայրն սկսում է ընկալել որպես հիմնական պահանջմունքների բավարարման համար խոչընդոտ:

7. Սևեռուն մտքերը և մտավախությունները, իրադրության անորոշությունը, ապագայի նկատմամբ վախը, տագնապայնությունը մեծացնում են ներանձնային գժտությունների առաջացման հավանականությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Զինծառայողները, ներանձնային գժտությունների ժամանակ իրենց մեջ ընկճելով անձնային հատկությունների դրսևորումները, պահանջմունքները, դրա հետ մեկտեղ կարող են կտրուկ կերպով նվազեցնել վարքի վերահսկման մեխանիզմների արդյունավետությունը: Սակայն պետք է նշել, որ նման իրավիճակում հայտնվում են ոչ բոլորը, այլ ոմանք: Նրանց հաջողվում է իրենց անձնային առանձնահատկությունների, հմտությունների, սոցիալական գիտելիքների, հարմարման ճկուն մեխանիզմների շնորհիվ խուսափել հոգեխոցիչ ապրումներից, առավել ևս՝ դրանց բացասական ազդեցություններից:

Անշուշտ, զինվորական գործունեության առանձնահատկությունները անձնակազմից մշտապես պահանջում են համախմբում, փոխաջակցություն, միմյանց վերահսկման արդյունավետ մեխանիզմների առկայություն, ինչը հնարավորություն է տալիս կոլեկտիվ ջանքերով հաղթահարելու ոչ միայն զինվորական ծառայության օբյեկտիվ դժվարությունները, այլև կանխելու սուբյեկտիվ գործոններով պայմանավորված ներանձնային գժտությունների զարգացումը և բացասական, իսկ երբեմն՝ ողբերգական հետևանքները:

Օգնություն չլինելու դեպքում թերարժեքության, անելանելիության և անվստահության զգացումները գնալով ուժեղանում են, ինչը կարող է ուղեկցվել կյանքի իմաստի կորստով, իր անձի և ուրիշների նկատմամբ ագրեսիվ վարքով, այսինքն՝ ներանձնային գժտության վերաճմամբ միջանձնայինի: Հոգեկան լարվածության աճմանը զուգահեռաբար կտրուկ կերպով նվազում են գործունեության և հաղորդակցման ինտենսիվությունն ու որակը: **Դա հրամանատարի համար պետք է լինի կոլեկտիվի կամ տվյալ անձնավորության բարեվարությանն սպառնացող իրավիճակի ձևավորման ակներև հատկանիշ:**

Քրեական ենթամշակույթին հետևողները սովորաբար փորձում են զանազան ձեռնածությունների միջոցով ձեռք բերել իրենց համար նպաստավոր սոցիալական դերեր, ինչը կապահովի հեղինակություն: Մյուսների նկատմամբ նման հնարների կիրառումը լուրջ հոգեխոցիչ ազդեցություն է գործում ինչպես առանձին անհատների հոգեկանի, այնպես էլ տվյալ միջավայրում ձևավորված արժեքային համակարգի վրա:

Նման աղճատված բարոյահոգեբանական միջավայրում միայն հարուստ ներքնաշխարհ և ամուր կամք ունեցող անձնավորությունները կարող են ի հաշիվ իրենց ներանձնային ռեսուրսների սկսել պայքար այդ «փողոցային

բարքերի» դեմ[13]՝ հենվելով սպայական կազմի անվերապահ աջակցության վրա և իրենց անձնական օրինակով քաջալերելով մյուսներին:

Այսպիսով՝ ներանձնային գժտությունները մեծապես պայմանավորված են մինչ այդ կատարված սոցիալականացման ընթացքում տեղ գտած թերություններով, որոնց դերը կարող է էապես մեծանալ արտաքին գործոնների ազդեցությամբ: Ուստի հրամանատարը պետք է ոչ միայն ուսումնասիրի իր յուրաքանչյուր ենթակայի անձնային հատկությունները, այլև ստորաբաժանումում ապահովի ընդհանուր առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

[13] Տես «Հայկական բանակ». «Պայքար արատավոր բարքերի դեմ», 2014, հմ. 3–4:

ԿԱՐԳԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՀԱԿՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ն. Յ. ՄԿՐՏՉՅԱՆ, գնդապետ, Պաշտպանության բանակի Բարոյահոգեբանական ապահովման բաժնի պետ

Մեր բանակն աչքի է ընկնում իր բարձր մակարդակի կարգասիրությամբ, ավագների ու կրտսերների նկատմամբ հարգալից վերաբերմունքով, հայրենասիրական գաղափարներով տոգորվածությամբ, որոնք ազգային հոգեկերտվածքի հիմնաքարային տարրերն են: Սակայն վերջին շրջանում նկատվում են միտումներ, որոնք ոչ միայն վտանգի են ենթարկում մեր ինքնությունը, այլև մեր բանակի մարտունակությունը: Եթե դրանք այսօր չկանխվեն, վաղը կարող է ուշ լինել: Ահա այս մտահոգությունն է դրդել մեզ կատարել տվյալ երևույթների խորքային ուսումնասիրություններ և մշակել դրանց դեմ պայքարի՝ մեր կարծիքով արդյունավետ եղանակներ: Հուսով ենք, որ տվյալ պրոբլեմները հուզում են ոչ միայն բարոյահոգեբանական ապահովման ոլորտի սպաներին և բոլոր այն հրամանատարներին ու պետերին, որոնք պատասխանատու են զորքերի մարտունակության համար, այլև մեր ամբողջ հասարակությանը: Ու թեև այդ միտումները ներկայումս ավելի մեծ տարածում ունեն քաղաքացիական կյանքում, սակայն արտացոլում են ստանում նաև բանակում, ուստի և, ինչպես նշվեց, պահանջում են դրանց վերացման արդյունավետ մեխանիզմների մշակում ու ներդրում:

Բանն այն է, որ բանակ զորակոչվում են երիտասարդներ, որոնք անցել են սոցիալականացման որոշակի ճանապարհ, քաղաքացիական կյանքում ձեռք են բերել որոշակի արժեհամակարգ: Ցավոք, հաճախ այդ արժեհամակարգը ձևավորվում է այսպես կոչված «փողոցային բարքերի» ազդեցութ-

յամբ[1] և անհարիր է ինչպես բանակային ծառայությանը, այնպես էլ ընդհանրապես քաղաքացու կերպարին: Եվ քանի որ բանակի շրջանից դուրս կյանքը լի է զանազան արատներով, բանակի սպայակազմը պարտավոր է համապատասխան ձևով արձագանքել ցանկացած իրավախախտման, ցանկացած կարգազանցության: Չէ՞ որ անպատասխան մնալու դեպքում յուրաքանչյուր, առաջին հայացքից չնչին թվացող զանցանք կարող է վերաճել մեծ հանցագործության, տարածում ստանալ ու դառնալ նորմ: Ահա թե ինչու մենք խոսում ենք տարբեր տեսակի կարգազանցությունների մասին ոչ թե ըստ դրանց տարածվածության ու տեսակարար կշռի, այլ ըստ այն պարզ տրամաբանության, որ եթե կա զանցանք, ապա այն սպառնալիք է[2]:

ՁՈՒ-ում ոչ կանոնադրական հարաբերությունները, կանոնադրական նորմերից զինծառայողների վարքի շեղումները, արատավոր բարքերի տարածումը և կարգազանցությունը հանգեցնում են կոլեկտիվի կառավարման դժվարությունների, բարոյալքության և որպես արդյունք՝ բարոյահոգեբանական կայունության խաթարման: Բարոյահոգեբանական կայունությունը կարելի է սահմանել որպես «անհատի կամ կոլեկտիվի որոշակի հոգեկան հատկությունների ու որակների համախումբ, որի շնորհիվ օրգանիզմն անգամ անբարենպաստ գործոնների պայմաններում պահպանում է համարժեք և արդյունավետ կենսագործունեության կարողությունը»[3]: Դրա ապահովումը ՁՈՒ-ի մարտունակության մակարդակի բարձրացման, թե՛ խաղաղ պայմաններում, թե՛ պատերազմական ժամանակ նրա առջև դրված խնդիրների արդյունավետ կատարման նախապայման է: Ըստ ժամանակակից տեսությունների՝ ռազմական կազմակերպության մարտական ներուժի բարոյահոգեբանական բաղադրիչը պետության անվտանգության ապահովման հիմնական գործոններից է[4]:

Վերլուծելով մասնագիտական գրականության մեջ բերվող տվյալները և մեր ուսումնասիրությունների արդյունքները՝ մենք սույն հոդվածում փորձում ենք ներկայացնել այն վտանգավոր բարոյահոգեբանական իրավիճակները, որոնք կարող են սպառնալ զորքերի մարտունակությանը, և ուրվագծել դրանց հաղթահարման միջոցներն ու եղանակները:

---

[1] Տես «Հայկական բանակ». «Պայքար արատավոր բարքերի դեմ», 2014, հմ. 3–4 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2015/02/haykakan-banak-2014-n3-4.pdf):

[2] Տես, օրինակ, *К. В. Фатеев, С. С. Харитонов.* О содержании понятий воинской дисциплины, воинского дисциплинарного проступка и дисциплинарной ответственности военнослужащих. «Право в Вооруженных Силах», 2012, № 1 (http://center-bereg.ru/e324.html):

[3] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երգնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 123:

[4] Տես *М. Ю. Зеленков.* Морально-психологический фактор и обороноспособность страны. «Военная мысль», 2000, № 2 (http://militaryarticle.ru/voennaya-mysl/2000-vm/9782-moralno-psihologicheskij-faktor-i):

Գաղտնիք չէ, որ քրեաիրավական խնդիրներ և կարգազանցության հակում ունեցող զինծառայողներն իրենց հակաօրինական գործունեությամբ մեծապես նպաստում են զինվորական կոլեկտիվներում փողոցային բարքերի տարածմանը: Երևույթ, որի դեմ պայքարը բավական հրատապ է և պետք է լինի յուրաքանչյուրիս պարտականությունը[5]: Հատկապես, որ առաջագծում հակառակորդի սադրիչ ձեռնարկումները դարձել են ավելի ինտենսիվ և սպառնալից:

Այսպես. որպես վտանգավոր երևույթ պետք է դիտել «փողոցային բարքերի» այն դրսևորումը, որ իր կամ իր ծառայակիցների նկատմամբ ցուցաբերված անօրինության, անարդարացի վերաբերմունքի մասին վերադաս հրամանատարությանն ահազանգելը հարգի չէ կամ էլ արժանանում է անգամ անմիջական հրամանատարների հետապնդմանը: Որպես արդյունք՝ իրավախախտումներն սկսում են բացահայտվել արտակարգ դեպքից հետո, երբ այլևս ոչինչ ուղղել հնարավոր չէ: Դա կարող է էապես հեղինակազրկել հրամանատարին, առաջ բերել նրա նկատմամբ անվստահություն, քանի որ նա ոչ մի կառուցողական քայլ չի կատարում արդարության սկզբունքը պահպանելու և զինծառայողների շահերը պաշտպանելու ուղղությամբ: Դեռ ավելին. զորամասի կամ ստորաբաժանման հրամանատարի անարդարացի և կողմնակալ վերաբերմունքից դժգոհ՝ զինվորական կոլեկտիվներում ձևավորվում են ծառայողական պարտականությունների նկատմամբ հակակրանք և բացասական շարժառիթավորում:

Եթե անգամ օբյեկտիվ՝ գերհոգնածության և նյարդահոգեկան սուր լարվածության պատճառով հրամանատարական կազմը հազվադեպ է անձամբ հետաքրքրվում զինծառայողների նիստուկացով, նրանց հուզող խնդիրներով, նրանց դիտում է ոչ որպես արժեք, այլ լոկ որպես ռեսուրս, ապա արդյունքը լինում է այն, որ տարբեր արժեհամակարգեր, տարբեր նպատակներ ունեցող հրամանատարական ու շարքային կազմերի միջև ի հայտ է գալիս որոշակի անջրպետ՝ նրանց մղելով տարբեր բևեռների:

Առօրյա ծառայության ընթացքում միջանձնային փոխհարաբերությունների ոլորտում զինվորական կանոնադրություններով առաջնորդվելու պահանջների անտեսումը պարարտ հող է ստեղծում փողոցային բարքերի ներթափանցման համար: Մի խոսքով՝ եթե կանոնադրական կարգուկանոն չկա, սկսում են գործել այլ «օրենքներ»՝ անկախ դրանց դրսևորման ձևերից ու վտանգավորության աստիճանից: Հենց այդ ոչ կանոնադրականությունն էլ պետք է անվանել փողոցային բարքեր: Դրանք զինվորական միջավայր չեն ներմուծվում դրսից, այլ առաջանում և զարգանում են ստորաբաժանումներում՝ սպայակազմի ստեղծած բարենպաստ պայմաններում՝ հասարակությունում առկա հանցագործ վարքի ու բարքի ընդօրինակմամբ: Եվ որպես արդյունք՝ դրանք դառնում են արտակարգ դեպքերի ու պատահարների հիմնական պատճառներից մեկը:

[5] Տես *Զ. Ասատրյան,* Զինվորական կարգապահության ամրապնդման հիմնախնդիրները: Ե., 2013, էջ 42–82:

Բանակում փողոցային բարքեր կարելի է համարել նաև սպայակազմի թույլ վերահսկողության հետևանքով առանձին զինծառայողների կամ նրանց խմբերի այնպիսի գործունեությունը, որը հակասում է զինվորական կանոնադրությունների պահանջներին, մյուսների նկատմամբ շահադիտական գերիշխանության հաստատումն ու առաջավարական դիրքերի գրավումը: Դրա վերջնական արդյունքը կարող է լինել ստորաբաժանումներում բացասական ուղղվածությամբ ավանդույթների, սովորույթների ու վարքի նորմերի հաստատումը[6]:

Տվյալ դեպքում փողոցային բարքերի զարգացմանը կարող է հակադրվել միայն կուռ սպայական կոլեկտիվը՝ զորամասի հրամանատարի գլխավորությամբ: Թույլ զարգացած սպայական կոլեկտիվներում, որտեղ չկան փոխօգնության և ազնիվ ընկերության մթնոլորտ, մանր թերությունները վերացնելու սպաների սկզբունքային ձգտում և սպայի հեղինակության բարձրացմանը միտված գործուն քայլեր, գերիշխում է անվստահությունը: Նման իրավիճակը հուշում է, որ սպայական խորհուրդներն ու պատվի դատարաններն անգործության են մատնված կամ, լավագույն դեպքում, դրանց գործունեությունը կրում է ձևական բնույթ և չի կարող հանգեցնել «փողոցային բարքեր» երևույթի դեմ պայքարի միասնական ճակատի ստեղծմանը:

Փողոցային բարքերի զարգացմանը նպաստող պատճառներից մեկն էլ այն է, որ զորամասի հրամանատարները եկել են այն թյուր կարծիքի, թե ռազմաուսումնական հաստատության նորավարտ սպան, այսինքն՝ երեկվա կուրսանտը, որը զորամասում սպայական ուսադիրներով կատարում է իր առաջին քայլերը, ամենագետն ու ամենակարողն է: Առանց հաշվի առնելու երիտասարդ սպայի ռեալ հնարավորությունները զորամասի հրամանատարությունն սկսում է նրան ներկայացնել չափից դուրս խիստ պահանջներ: Եվ ստացվում է այնպես, որ ժամանակի ընթացքում այդ սպայի մասին ձևավորվում է անարդարացի բացասական կարծիք: Որպես արդյունք՝ առաջանում է ներքին հակասություն, մի կողմից, զորամասի և ստորաբաժանման հրամանատարության և, մյուս կողմից, այդ վիճակում հայտնված սպաների միջև:

Զինվորական կոլեկտիվում հրամանատարության դրսևորած անտարբերությունը ենթականերին ուղղված ամենածանր վիրավորանքն է, հատկապես՝ երիտասարդ սպաների համար, ինչի հետևանքով կրտսեր սպայակազմն սկսում է ընկերություն անել զինվորների հետ: Ապա դրան հետևում է սպայական կոլեկտիվից սպայի մեկուսացումը, որպես արդյունք՝ ծառայության ընթացքում նա թույլ է տալիս բազմաթիվ թերացումներ, որոնք հանգեցնում են արտակարգ պատահարների: Ինչպիսի վերաբերմունք սպայի նկատմամբ ունի վերադասը, այնպիսի վերաբերմունք էլ տվյալ սպան իր հերթին ցուցաբերում է սերժանտի նկատմամբ: Մինչդեռ հրամանատարի

[6] Տես *Վ. Հ. Մարգարյան, Հ. Ա. Մարտիրոսյան,* Զինվորական կոլեկտիվներում ոչ կանոնադրական հարաբերությունների սոցիալ-հոգեբանական պատճառները: «ՀԲ», 2010, հմ. 2 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2011/10/n2_2010-final.pdf):

պաշտոնը, բնավ, նախատեսված չէ, որ նա իր ենթակաների համար ստեղծի ծառայողական դժվարություններ, այլ հակառակը՝ կոչված է օգնելու դրանց հաղթահարմանը:

Զինվորական միջավայրում անհրաժեշտ է կատարելապես տարբերակել կոպտությունն ու խստությունը: Կոպիտ հրամանատարն ինքնըստինքյան զրկված է հրամայելու բարոյական իրավունքից, իսկ գռեհիկ վերաբերմունքով բացահայտում է իր ներքին անզորությունը:

Եթե կոլեկտիվը լինի ձևավորված, անխտիր բոլորը ձգտեն ջանադրաբար կատարելու իրենց պարտականությունները, տիրի արդարության և անաչառության սկզբունքը, ապա փողոցային բարքերը չեն կարող ներթափանցել և աղտոտել բարոյահոգեբանական մթնոլորտը:

Իսկ եթե ամբողջ հրամանատարական կազմն անգործության մատնվի, ապա զինվորական միջավայրում անարգել կերպով կհաստատվեն լկտի փողոցային օրենքները: Այդ հակաօրինական պահվածքը վարակիչ հիվանդության նման կսկսի կաթվածահար անել բանակային օրգանիզմի բնականոն կենսագործունեությունը, իսկ խոցելի կդառնան առաջին հերթին թույլ դիմադրողականություն ունեցող կոլեկտիվները: Ուրեմն ուժեղ սպայակազմի առկայությունը և ուսումնադաստիարակչական գործընթացի մշտական գրագետ վերահսկողությունը նվազագույնի կհասցնեն փողոցային բարքերի արմատավորման հնարավորությունը, կհաստատվի «լավ հրամանատարի» միանձնյա ղեկավարության սկզբունքը:

Այսպիսով՝ փողոցային բարքերի տարածումը կանխարգելող առաջին քայլը պետք է լինի ուժեղ հրամանատարի ու սպայի, ղեկավարների առկայությունը, նրանց, ովքեր զինվորական կոլեկտիվում վայելում են անառարկելի հեղինակություն և անձնակազմի վստահություն, ապահովում են կուռ սպայական կոլեկտիվի ձևավորումը:

Փողոցային բարքերի կանխարգելման երկրորդ ուղին է զորամասերում զինվորական ավանդույթների ձևավորումը, արմատավորումը և տարածումը:

Անհերքելի փաստ է, որ փողոցային բարքերի կրողներն առաջնորդվում են որոշակի գաղափարախոսությամբ, բանակային կյանքի ցանկացած դրվագ մեկնաբանում յուրովի՝ ըստ իրենց զարգացածության մակարդակի և նեղ անձնային շահերի: Փողոցային գաղափարակիրների շարքերը միտված են խտանալու, քանի որ «նպաստավոր» պայմաններում դրանք զարգանում են՝ իրենց խմբերի մեջ ներգրավելով բանակային կարգուկանոնը մերժող զինծառայողների: Զինվորի մտադրությունը ի վիճակի են փոխելու միայն նրա հետ հավասարաչափ չարչարվող և զրկանք կրող մարդիկ, այսինքն՝ ջոկի, դասակի, վաշտի հրամանատարները: Նրանք են փողոցային բարքերի դեմ պայքարի առաջամարտիկները:

Փողոցային բարքերը մի յուրօրինակ բանակային աղանդ են և բանակին սպառնում են այնպես, ինչպես «Եհովայի վկաները» կամ «էմոյականները» սպառնում են մեր ավանդական առաքելական եկեղեցուն: Հարց է ծագում, թե ով և ինչպես պետք է պայքարի դրանց դեմ: Դեղատոմսերը շատ են, սակայն՝ անարդյունավետ, քանի դեռ զորամասում չեն ստեղծվել ամուր, հզոր

և անսասան ազգային զինվորական ավանդույթներ: Հենց դրանց բախվելով՝ փողոցային լկտի գաղափարախոսությունը կփշրվի և կփոշիանա: Ո՞վ պիտի ստեղծի կամ հիմնադրի այդ ավանդույթները: Պատասխանը միանշանակ է՝ զորամասի առողջ ուժերի յուրաքանչյուր ներկայացուցիչ, առաջին հերթին՝ վաշտերի, դասակների, ջոկերի հրամանատարները՝ միավորված սպայական ու սերժանտական խորհուրդներում: Այդ խորհուրդները պետք է գործեն զորամասի հրամանատարի անմիջական ենթակայությամբ և նրա ցուցումներով, սակայն կարող են նաև ինքնուրույնաբար, առանց վերադասի մասնակցության քննարկել այս կամ այն ստորաբաժանումում տիրող վիճակը, այս կամ այն սպայի ու սերժանտի պահվածքը, որը, օրինակ, զինվորներին ստիպում է իրեն զինվորական կոչումով չդիմել, պատվի չառնել, հետը շփվել ինչպես հավասարը հավասարի հետ, «ախպերավարի», և այլն: Շարքայինի պարսավելի պահվածք է նաև սպային անունով դիմելը, հակաճառելը, արհամարհելը, դրամ շորթելը:

Փողոցային բարքերի դեմ պայքարի մեկ այլ ուղի է ստորաբաժանումներում արդարության, անաչառության ու հավասարության սկզբունքի պահպանումը, բոլորի նկատմամբ պահանջկոտ և, միևնույն ժամանակ, հոգատար վերաբերմունքը: Նման վերաբերմունքը զինվորական կոլեկտիվներում կբացառի արտոնյալ, հովանավորվող զինծառայողների առկայությունը:

Երբեմն փողոցային բարքերի կրողները գլուխ են բարձրացնում՝ հենվելով հայրենակցական, հովանավորչական և ազգակցական կապերի վրա, ստանալով հենց վերադասի հովանավորությունը: Ճիշտ է, մեր ազգային մտածողությանը բնորոշ է մեր կամ վերադաս հրամանատարի ազգակցին, բարեկամին, հայրենակցին, ընկերոջ որդուն պարտադրաբար օգնության ձեռք մեկնելու, օժանդակելու սովորույթը, սակայն դա չի նշանակում, թե կարելի է միջամտել նրանց ծառայությանը կամ հնարավորություն տալ չկատարելու իրենց պարտականությունները, չնշանակվելու վերակարգում, չընդգրկվելու տնտեսական աշխատանքներում, անօրինաբար պահելու բջջային հեռախոսներ, ճնշելու ծառայակիցներին, չլսելու իրենց հրամանատարներին: Չի կարելի նրանց հրամանատարների վրա ճնշում գործադրել, որպեսզի վերջիններս այդ զինվորների նկատմամբ ցուցաբերեն առանձնահատուկ վերաբերմունք և ներեն նրանց ցանկացած անօրեն քայլ: Սա անարդարության մթնոլորտ ստեղծող բացահայտ հովանավորչություն է, որի դեմ պայքարը պետք է կրի համակարգված և շարունակական բնույթ:

Չի կարելի մոռանալ, որ մշտապես ուրիշի փոխարեն որևէ զինծառայողի աշխատանք կատարելը ընկճում է նրան, մեկուսացնում կոլեկտիվից և հեղինակազրկում: Իսկ որտեղ կան հեղինակազրկված զինծառայողներ, այնտեղ չեն կարող չլինել արատավոր բարքերով առաջնորդվող «հեղինակություններ»:

Կոլեկտիվում արտոնյալ, հովանավորվող զինծառայողների գոյությունը խաթարում է ազնիվ, արդարացի, ընկերական փոխհարաբերությունների զարգացումը, նպաստավոր պայմաններ ստեղծում ստորաբաժանման անձնակազմի շերտավորման, ոչ պաշտոնական «աստիճանակարգության» ստեղծ-

ման համար[7]: Արտոնյալ զինծառայողը դառնում է կեղծ հեղինակություն, որին հրամկազմի ներկայացուցիչներից ոմանք անգամ ի զորու չեն հրամայելու:

Կեղծ հեղինակությունները, արատավոր բարքեր կրողներն ինքնին չեն առաջանում, նրանց համար «ջերմոցային» պայմաններ են ստեղծում այն հրամանատարները, որոնք չունեն բավարար կամքի ուժ, անկոտրում ոգի, հրամանատարական ունակություններ և յուրահատուկ պատկառանք են տածում այդ հանցագործ պահվածքի տեր անձանց նկատմամբ, իսկ շատ դեպքերում պարզապես վախենում են հովանավորողների հետապնդումներից և ստիպված դաշնակցում են այդ լկտի զինծառայողներին: Այս առումով կարևոր են և ԲՀԱ-ի գծով սպայի ջանքերը՝ ուղղված զինվորական կոլեկտիվներում հարաբերությունների կարգավորման հարցում բարձր բարոյահոգեբանական որակներով օժտված զինծառայողների առաջավարության խրախուսմանն ու նրանց՝ որպես առաջավարի հոգեբանական կարգավիճակի ամրապնդմանը ի հակակշիռ կեղծ հեղինակությունների: Համարվում է, որ առաջավարությունը առանձին անձանց կամ մարդկանց խմբերի վրա ազդեցություն գործելու ունակությունն է: Զինվորական կոլեկտիվում առաջավարը կարող է հանդես գալ որպես միջանձնային հարաբերությունների կարգավորման ռեսուրս և նպաստել կարգուկանոնի հաստատմանը[8]:

Փողոցային բարքերի դեմ պայքարի մի այլ ուղի է և՛ անհատական դաստիարակչական, և՛ կոլեկտիվ աշխատանքների համակարգված ու համակողմանի վարումը, ընդսմին դրանում պետք է ներգրավված լինեն բոլոր օղակների հրամանատարները:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ստորաբաժանումներում փողոցային բարքերի առկայությունը մեծ մասամբ նման աշխատանքներում տեղ գտած բացթողումների հետևանք է:

Ակներև է, որ զինվորական ծառայության բացարձակ արժեքը եղել է, կա և կլինի մարդկային գործոնը: Ըստ այդմ դաստիարակչական աշխատանքով պետք է զբաղվեն անխտիր բոլոր պաշտոնատար անձինք, և դրանց արդյունավետության համար պետք է պատասխանատվություն կրեն ոչ միայն ԲՀԱ-ի մարմինները, այլև բոլոր կարգի հրամանատարները՝ սկսած բաժինների, ծառայությունների և զորատեսակների պետերից: Միջազգային և մեր փորձը ցույց է տալիս, որ այն զորամասերում, որտեղ հրամանատարը կարևորում է ԲՀԱ-ի գծով իր տեղակալի գործունեությունը և անձամբ զբաղվում է դաստիարակչական աշխատանքներով, հետաքրքրվում դրանց վիճակով, կազ-

[7] Տես *Р. Ш. Альмухаметов*. «Неуставные взаимоотношения» среди военнослужащих срочной службы в современной России: факторы и контексты. «Мир экономики и управления», 2013 (https://cyberleninka.ru/article/v/neustavnye-vzaimootnosheniya-sredi-voennosluzhaschih-srochnoy-sluzhby-v-sovremennoy-rossii-faktory-i-konteksty):

[8] Տես *А. Калюжный.* Психологические факторы формирования группового лидерства среди военнослужащих, проходящих службу по призыву. «Ориентир», 2006, № 6 (http://voenn.info/docs/ogp/ogp-kl/2006/2006-06-3.shtml):

մակերպում արդյունքների ամփոփում ու վերլուծություն, արտակարգ դեպքեր և պատահարներ գրեթե չեն լինում:

Պետք է հիշել, որ ցանկացած հասարակություն, որքան էլ կազմակերպված ու զարգացած լինի, ապահովագրված չէ եսասիրական նկրտումներով առաջնորդվող, սպառողական հոգեբանություն ունեցող, ծույլ, անգործունյա անձնավորություններից: Համընդհանուր զորակոչի հետևանքով նրանք կարող են հայտնվել բանակում և այստեղ բավականաչափ լավ հարմարվել բանակային կյանքին: Թեև նրանց թվաքանակը մեծ չի լինի, բայց իրենց համար բարենպաստ պայմաններում ծավալվող գործունեությամբ կարող են «պղտորել ջուրը»: Հենց այդպիսի անձնավորություններն էլ, օգտվելով իրավիճակից, հետագայում դառնում են «կեղծ հեղինակություններ», «լավ տղերք», «գիշերային հրամանատարներ», «նայողներ» և այլն: Բանակային իրականության մեջ հայտնի ամենաբացասական երևույթներից է նաև «դեդովշչինան», որը հաճախ գործառական առումով դառնում է զինվորական կոլեկտիվի կազմակերպման ոչ պաշտոնական հիմքը: Զինվորական կոլեկտիվը, ըստ որոշակի սոցիալական ստանդարտների, բաժանվում է աստիճանակարգված խմբերի: Հատկանշական է, որ կոլեկտիվում զինծառայողի կարգավիճակը որոշող գործոններից առաջին երկուսը ծառայության ժամկետն ու ֆիզիկական ուժն են[9]:

Նշենք, որ բոլոր այս կարգազանցական երևույթների կանխարգելումը ռուսալեզու գրականության մեջ ներկայացվում է մակրոսոցիալական (պետության ռազմական կազմակերպության) և միկրոսոցիալական (կոնկրետ զինվորական կոլեկտիվի) մակարդակներում: Մակրոսոցիալական մակարդակում նմանատիպ ոչ կանոնադրային հարաբերությունների կանխարգելումը կապված է առաջին հերթին սպայական կազմի որակական-մասնագիտական հատկությունների զարգացման հետ, այսինքն՝ պետությունը պետք է ունակ լինի պատրաստելու զինվորական կադրեր, որոնք կարողանան ապահովել արդյունավետ կառավարում և զորքերում հաստատել կարգուկանոն: Այս մակարդակում կարևոր է նաև «անցումը պարտադրանքից շարժառիթավորմանը», ինչը նաև բռնությունների կանխարգելման մեխանիզմ է:

Միկրոսոցիալական մակարդակում զինվորական կոլեկտիվում կարգազանցության հաղթահարման ուղիներ են՝ զինվորական ծառայության սոցիալ-կենցաղային պայմանների բարելավումը, զինծառայողների շրջանում դաստիարակչական աշխատանքների շնորհիվ ինքնակարգավորման, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ունակությունների ձևավորումը, հարմարման գործում զինծառայողներին աջակցությունը, հրամանատարական կազմի ոչ կանոնադրային գործողությունների բացառումը և այլն[10]:

[9] Տես *Д. В. Клепиков*. Дедовщина: проблема и пути ее решения. «Военная мысль», 1999, № 1 (http://militaryarticle.ru/voennaya-mysl/1999-vm/9711-dedovshhina-problema-i-puti-ee-reshenija):

[10] Տես նույն տեղում:

Սովորաբար բարեխիղճ, դաստիարակված ու կարգապահ զինվորները չեն ցանկանում ինքնուրույնաբար պայքարել արատավոր երևույթների դեմ՝ դա համարելով հրամանատարի պարտականությունը: Բացի այդ, նրանցից շատերն իրենց դաստիարակվածության ու պարկեշտության պատճառով խուսափում են հավանական պրոբլեմներից, չեն ցանկանում ընկնել ավելորդ գլխացավանքի մեջ, քանի որ գիտակցում են, որ նման տղաների հետ գործ ունենալը կհանգեցնի անվերջ «պարզաբանումների» ու անիմաստ վիճաբանությունների:

Անշուշտ, կոլեկտիվի ղեկավարը հրամանատարն է, որը պարտավոր է համախմբման ու կարգուկանոնի հաստատման համար ձեռնարկել համապատասխան միջոցներ, սակայն հրամանատարին դժվար է միայնակ պայքարել բացասական երևույթների դեմ:

Նման իրավիճակը շտկելու հարցում անփոխարինելի դերակատարություն կարող են ունենալ ջոկերի հրամանատարները՝ համախմբված սերժանտական խորհուրդներում: Նախ. սերժանտների թիվն անհամեմատ մեծ է, երկրորդ. նրանց թիկունքում կարող են կանգնել կոլեկտիվի կարգապահ զինվորներն ու բոլոր հրամանատարները, երրորդ. անցանկալի երևույթների դեմ պայքարը արդյունավետ է լինում գլխավորապես դրանց սաղմնավորման ժամանակ: Առաջինը հենց ջոկերի հրամանատարները կարող են նկատել նման անցանկալի զարգացումները: Ընդսմին սերժանտն իր թիկունքում մշտապես պետք է զգա դասակի, վաշտի, գումարտակի հրամանատարի քաջալերող ներկայությունը:

Անհերքելի փաստ է, որ փողոցային բարքերի կանխարգելման արդյունավետությունը կախված է զինվորական իրավապահ մարմինների հետ համագործակցության աստիճանից: Այն զորամասերում, որտեղ առկա է իրավապահների հետ սերտ համագործակցություն, հանցածին իրավիճակը վերահսկելի է և կառավարելի:

Մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ, մի կողմից, առկա է մշտական արտաքին սպառնալիք՝ ի դեմս մեր հակառակորդի, որը ցանկանում է առավելագույն կորուստներ պատճառել մեզ և խարխլել մեր պաշտպանությունը, մյուս կողմից՝ ստիպված ենք պայքար մղել բանակային դրվածքը փլուզող փողոցային բարքերի դեմ: Երկու ճակատներն էլ մեզ համար հավասարաչափ կարևոր են, բայց եթե ներքին ճակատում ունեցանք անհաջողություններ, դա միայն ու միայն կուժեղացնի մեր հակառակորդին և նրա նպատակները կդարձնի ավելի իրատեսական: Եվ որպեսզի չկանգնենք կոտրած տաշտակի առջև, փողոցային բարքերի դեմ պայքարը պետք է համարենք յուրաքանչյուրիս պատվի գործը և պատվով էլ պիտի հաղթենք այդ պայքարում:

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ ВОЗНИКНОВЕНИЯ ВНУТРИЛИЧНОСТНЫХ КОНФЛИКТОВ У ВОЕННОСЛУЖАЩИХ СРОЧНОЙ СЛУЖБЫ

З. Д. АСАТРЯН, полковник запаса, кандидат психологических наук, доцент, начальник отдела военно-научного редактирования Научно-издательского центра – заместитель главного редактора НИУО МО РА

РЕЗЮМЕ

Военнослужащие-срочники в процессе службы сталкиваются с объективными и субъективными трудностями, которые часто становятся психологическими причинами возникновения внутриличностных конфликтов. Исследования показывают, что хотя значительная часть данных причин непосредственно связана с психологическими особенностями личности, обусловленными недостатками, имевшими место на предыдущих этапах социализации, однако последствия могут оказать серьезное влияние на общую морально-психологическую атмосферу в воинском коллективе.

Анализ концептуальных подходов известных представителей психоаналитической, бихевиористской, когнитивной, гуманистической, экзистенциальной школ, а также документов по зарегистрированным случаям аутодеструктивного поведения военнослужащих в ВС РА и результатов собеседований автора с нарушителями дисциплины позволяет выделить следующие основные психологические причины возникновения внутриличностных конфликтов у военнослужащих: высокие эмоциональность и тревожность; низкий уровень знаний, навыков и способностей; слабые физическая и психическая готовность к воинской службе; фрустрация, стрессы, навязчивые мысли, страхи и т.д.

Командир и соответствующие офицеры при организации индивидуальной работы с подчиненными должны оценивать их личностные качества и в аспекте наличия данных психологических причин.

ПРОБЛЕМЫ В РАБОТАХ С ВОЕННОСЛУЖАЩИМИ, ИМЕЮЩИМИ СКЛОННОСТЬ К ПРАВОНАРУШЕНИЯМ, И ПУТИ ИХ РЕШЕНИЯ

Н. Я. МКРТЧЯН, полковник, начальник отдела МПО АО

РЕЗЮМЕ

Призывники, у которых в процессе допризывной социализации система ценностей сформировалась под воздействием так называемых «уличных нравов», в армии при недостаточном уровне уставного правопорядка становятся источниками правонарушений. Этому в значительной степени способствуют недостаточное внимание командиров к нуждам и проблемам личного состава, отсутствие поддержки, оказываемой молодым офицерам–выпускникам военных вузов, низкий уровень профессионализма отдельных офицеров, подмена строгости грубостью, несоблюдение командирами принципов справедливости и равенства в отношении к подчиненным и т. д.

Путями решения проблемы оздоровления морального климата в воинских коллективах являются: создание сплоченного офицерского коллектива; строгое соблюдение положений военных уставов; постоянный контроль над учебно-воспитательным процессом; формирование в частях воинских традиций с привлечением потенциала офицерских и сержантских советов; соблюдение принципов справедливости, объективности и равенства и вместе с тем заботливого отношения к подчиненным. Важное значение имеют системность и многосторонность индивидуальной и коллективной воспитательной работы, а также эффективное сотрудничество командного состава с военными правоохранительными органами.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

PSYCHOLOGICAL CAUSES OF THE ERUPTION OF INTRAPERSONAL CONFLICTS AMONG CONSCRIPTS

Z. D. ASATRYAN, Colonel (Ret.), PhD in Psychology, Associate Professor, Head, Defense-Academic Editing Department – Deputy Editor-in-Chief, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA

SUMMARY

During service conscripts encounter objective and subjective difficulties which often bring about psychological causes of eruption of intrapersonal conflicts. The studies show that although a significant part of these causes is directly associated with the psychological peculiarities of a personality conditional on shortcomings that have occurred in the

previous stages of socialization, the consequences can have a serious impact on the overall moral and psychological atmosphere of the military staff.

The analysis of conceptual approaches of prominent representatives of the psychoanalytic, behavioral, cognitive, humanistic, existential schools, as well as the documents on recorded cases of self-destructive behavior of servicemen in the RA Armed Forces and the results of the author's interlocutions with the defaulters, makes it possible to single out the following main psychological causes of the eruption of intrapersonal conflicts among servicemen: high emotionality and anxiety; low level of knowledge, skills and abilities; weak physical and mental readiness for military service; frustration, stress, obsessive thoughts, phobias, etc.

When organizing individual work with subordinates, the commander and relevant officers should evaluate their personal qualities in terms of the availability of these psychological causes as well.

PROBLEMS IN THE WORKS WITH THE SERVICEMEN INCLINED TO DELINQUENCIES, AND THE WAYS TO OVERCOME THEM

N. Ya. MKRTCHYAN, Colonel, Head, Moral and Psychological Support Section, Defense Army

SUMMARY

Draftees, whose value system has taken shape influenced by the so-called "street morals" during the process of pre-conscription socialization, become sources of delinquencies when the Army regulations are not observed in due manner. On a large scale this is facilitated by the lack of attention from the commanders to the needs and problems of the personnel, the lack of support provided to young officers–graduates of military educational institutions, the low level of professionalism of certain officers, the commutation of strictness to rudeness, commanders' noncompliance with the principles of justice and equality towards the subordinates, etc.

The ways to solve the problem of creating a healthier moral climate within the military staff are the following: creation of a solidary staff; strict observance of the provisions of service regulations; constant control over the teaching and educational process; formation of military traditions in military units via involvement of officer and sergeant councils' potential; compliance with the principles of justice, impartiality and equality, and a considerate attitude towards subordinates. The systemacy and multi-facetedness of individual and collective educational works, as well as the efficient cooperation of command staff with military law enforcement agencies are of great significance.

ՎՆԱՍՎԱԾՔԱՅԻՆ ՑՆՑԱԿԱԹՎԱԾԻ ԴԵՊՔՈՒՄ ՌԱԶՄԱԴԱՇՏԱՅԻՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կ. Ռ. ՇԱԲՈՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, բժշկական գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի ռազմադաշտային վիրաբուժության ամբիոնի պետ,
Ա. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ, բ/ծ մայոր, բժշկական գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի ռազմադաշտային վիրաբուժության ամբիոնի ավագ դասախոս

Մարտական վնասվածքների հետևանքով առաջացող ցնցակաթվածը պայմանական մահացու ելք ու ծանր կլինիկական ընթացք ունեցող և հաճախադեպ բարդություն է, որպես համախտանիշ դրան ուղեկցում են արյան շրջանառության խանգարումն ու հյուսվածքների սակավահեղուկանցումը (հիպոպերֆուզիա): Ըստ այդմ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ, բացի վնասվածքային ցնցակաթվածից, լինում են բարդությունների այլ կլինիկական դրսևորումներ, ինչպիսիք են սուր շնչառական ու սրտային անբավարարությունները, որոնց առաջացման մեխանիզմներին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, և որոնց դեպքում պահանջվում են յուրօրինակ ախտորոշիչ ու բուժկանխարգելիչ մոտեցումներ:

ՆՅՈՒԹՆ ՈՒ ՄԵԹՈԴԸ

Արդի մարտական ախտաբանությունում, հատկապես՝ տեղային պատերազմների ժամանակ, վնասվածքային ցնցակաթվածն ու դրա հետ կապված բարդությունները հանդիպում են ընդհանուր վնասվածքների մոտ 25-30 % դեպքերում: Դա պայմանավորված է ժամանակակից սպառազինության միջոցների հարվածային լիցքի պայթյունի հզորության աճմամբ, անբարենպաստ բնակլիմայական պայմաններով (տաք կամ ցուրտ կլիմա, լեռնային, բարձր լեռնային, անապատային տեղանք և այլն): Զարգացած պետությունների զինված ուժերում անձնակազմի բուժապահովումն արդյունավետ կերպով կազմակերպելու համար լայնորեն օգտագործվում են տարահանման ավիամիջոցները, ինչի շնորհիվ վիրավորներն արագորեն հասցվում են մեծ մասնագիտական հնարավորություններով բուժկանխարգելիչ հաստատություններ, քանի որ նրանց բուժման հաջողությունը մեծապես պայմանավոր-

ված է բուժմիջոցառումների ձեռնարկման ժամկետներով: Պատճառը բարդությունների ախտածնաբանական (պաթոմորֆոլոգիական) առանձնահատկություններն են, մասնավորապես այն, որ, ինչպես վերը նշվեց, վնասվածքային ցնցակաթվածը դրսևորվում է արյան շրջանառության արտահայտված խանգարմամբ, ինչը հանգեցնում է օրգանների և հյուսվածքների անբավարար արյունամատակարարման:

Վնասվածքային ցնցակաթվածը ժամանակակից մարտական վնասվածքների համակարգում ըստ հաճախադիպության առաջին տեղում է, այն գրեթե միշտ ուղեկցվում է ցավային համախտանիշով և արյունահոսությամբ: Մեխանիկական վնասվածքի հետևանքով առաջացող վնասվածքային ցնցակաթվածի կլինիկական և ախտաբանական հիմնավորումը արյան շրջանառության սուր խանգարումն է՝ սակավաշրջանառումը (հիպոցիրկուլյացիա) և սակավահեղուկանցումը: Դրանք զարգանում են որպես արյան մեծ կորստի հետևանքով առաջացած կենսականորեն կարևոր օրգան-համակարգերի ֆունկցիայի խանգարման, ներթունավորման (էնդոտոքսիկոզ) և նյարդային համախտանիշի զարգացման արդյունք: Այսօր վնասվածքային ցնցակաթվածի ախտածագումն զգալի չափով պարզաբանված է և ընկալվում է որպես մեկ և ավելի վնասվածքների հետևանքով տեղի ունեցող հյուսվածքների կամ օրգանների օջախային ախտահարում, ուստի առաջանում է տարբեր տրամաչափի անոթների վնասվածության աստիճանով պայմանավորված արյունահոսություն, որն էլ դառնում է թթվածային անբավարարության գլխավոր պատճառը և ցնցակաթվածի ախտածագման հիմնական օղակը:

Վնասվածքային ցնցակաթվածի ուսումնասիրության համար մենք որպես տեղային պատերազմի դասական օրինակ դիտարկել ենք Ղարաբաղյան հակամարտությունը: Այդ հակամարտության զինված փուլի վերաբերյալ ռազմաբժշկական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր վնասվածքների կառուցվածքում հրազենային վիրավորումների տեսակարար կշիռը կազմել է 88,03 %, ընդսմին առաջին երեք տեղերն զբաղեցնում են ստորին վերջույթների (45,3 %), որովայնի ու կոնքի (22,2 %) և վերին վերջույթների (12,7 %) վիրավորումները: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ստորին վերջույթների հրազենային վիրավորումների ուսումնասիրությունը հայկական ռազմական բժշկության կարևոր խնդիրներից է, հետևաբար պատշաճ ախտորոշիչ-բուժական միջոցառումների ձեռնարկումը հնարավորություն կտա հստակեցնելու վիրավորներին արագ շարք վերադարձնելու, նվազեցնելու վաղաժամկետ զորացրումները, պարզաբանելու հիվանդությունների զարգացման մեխանիզմները, դրանք կանխարգելելու և բազմաթիվ այլ հիմնախնդիրներ լուծելու: Ըստ մեր ուսումնասիրության տվյալների՝ որովայնի, կրծքավանդակի և կոնքի հրազենային վիրավորումների ժամանակ վնասվածքային ցնցակաթված զարգացել է 20 % դեպքերում, վերջույթների վնասվածքի ժամանակ՝ 5–6 % դեպքերում, ընդ որում, դա ավելի հաճախ է դիտվել, երբ առկա են եղել ոսկրերի կոտրվածքներ: Ելնելով կատարված վերլուծությունից՝ կարող ենք եզրակացնել, որ բուժտարահանման փուլե-

րում անհրաժեշտ է առանցքային դեր հատկացնել վնասվածքային ցնցակաթվածի բուժական միջոցառումների ձեռնարկմանը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մեր կատարած հետազոտությունը ցույց է տալիս, որ վնասվածքային ցնցակաթվածի առաջացումն ու զարգացումը ուղղակիորեն պայմանավորված են վնասվածքի ծանրության աստիճանով, ցավային ցնցակաթվածածին գոտիներով, ցնցակաթվածի տևողությանն ու զարգացմանը նպաստող գործոններով (սառեցում, արյան կորուստ, հոգնածություն, հյուծվածություն, ստրես) և այլ հանգամանքներով: Ախտածագման մեխանիզմն առայսօր վերջնականապես պարզված չէ, սակայն որոշակի առաջընթաց կա այս ախտաբանությանը վերաբերող գիտագործնական տեսակետների ասպարեզում: Ըստ վերջին տվյալների՝ միկրոշրջանառության ճգնաժամը կառուցվածքի առումով ունի հետևյալ տեսքն ու ընթացքը:

Վնասվածքային ցնցակաթվածի համակշռման (կոմպենսացիա) փուլում սիմպատիկ նյարդային համակարգի տոնուսը կտրուկ կերպով բարձրանում է, ինչը հանգեցնում է անոթների ուժգին կծկանքի ուժեղացման, ինչի հետևանքով ի պատասխան վնասման տեղի է ունենում անոթասեղմիչ նյութերի (ադրենալին, նոր ադրենալին և այլն) արտազատում, ինչն էլ իր հերթին նպաստում է արյան շրջանառության՝պաշտպանական բնույթի կենտրոնացմանը: Այս փուլում, գլխուղեղի և սրտի արյունամատակարարումը բավարարվում է ի հաշիվ մաշկի և մի շարք ներքին օրգանների արյունալցման նվազման: Արյունարգելության հետևանքով օրգանիզմում զարգանում է անաէրոբ գլիկոլիզ և կուտակվում են նյութափոխանակության միջանկյալ արգասիքները, ինչը հանգեցնում է անոթների պատերի ընդլայնման: Տվյալ ախտաբանության ոչ ծանր կլինիկական ընթացքի պարագայում արդյունավետ բուժօգնության շնորհիվ (ցավազրկում, արյունահոսության դադարեցում, արյան փոխներարկում) անոթների կծկանքը կարող է վերանալ, և հիստամինային նյութերի քանակը չի հասնի վտանգավոր մակարդակի: Անբարենպաստ պայմաններում հյուսվածքների սակավարյունության աճմանը զուգընթաց կուտակվում և արյան մեջ են անցնում այնպիսի նյութեր, որոնք նպաստում են արտերիոլների լայնացմանը, մինչդեռ մանր երակների կծկանքը դեռ պահպանվում է՝ հանգեցնելով արյան դեպոյացման:

Առանձին դեպքերում այն կարող է գերազանցել շրջանառող արյան ծավալը՝ նպաստելով դրա նվազմանը և զգալիորեն պակասեցնելով երիկամների, լյարդի, աղիների և այլ օրգանների արյունամատակարարումը:

Աղիներում արյունարգելությունը հանգեցնում է այնտեղ եղած մանրէների և դրանց արտադրած թունանյութերի նկատմամբ աղիքի պատի դիմադրողականության նվազմանը, ինչն էլ իր հերթին որպես բարդություն նպաստում է վնասվածքային ցնցակաթվածի կլինիկական ընթացքի ծանրության աճմանը: Վնասվածքային ցնցակաթվածի առանձնահատկությունները պայմանավորված են նաև այն հարուցող գործոնների համալիր ազդեցությամբ և ախտաբանական կենսընթացների փոխազդեցությամբ: Արյան կորստի և ցնցակաթվածի կլինիկական ընթացքի ծանրության միջև նկատվում է որո-

շակի կապ: Ախտաբանական շղթայում, արյան կորստից բացի, մեծ դեր են խաղում անոթների լարման, արյան շրջանառության միկրոշրջապտտիչային խանգարումները, որոնք ցնցակաթվածի զարգացման վաղ շրջանում պայմանավորում են վնասվածքի նկատմամբ օրգանիզմի միջնորդանյութային (նյարդահումորալ) հակազդումը, հանգեցնում են հյուսվածքների նյութափոխանակության և նյութափոխանակային կենսընթացների խանգարման աճման՝ նյութափոխանակային թթվագարության (մետաբոլիկ ացիդոզ):

Երակային համակարգում կուտակված արյունը կազմում է ընդհանուր արյան 75-80 %-ը և կարող է իր ծավալից առանձնացնել մոտ 1 լիտր արյուն, որը հարուստ է ադրենէրգիկ ընկալիչներով (ադենոռեցեպտորներ) և ցնցակաթվածի ժամանակ հանդես է գալիս որպես առաջին համակշռիչ գործոն: Երկրորդ համակշռիչ գործոնը զարկերակիկների (արտերիոլներ) և երակիկների (վենուլաներ) նախափականային սեղմամկանների կծկումն է, որը նպաստում է զարկերակային ճնշման կայունությանը:

Այս երևույթի կենսաբանական իմաստը հետևյալն է. դեպոյացված արյունը և միջբջջային հեղուկն ուղղորդվում են դեպի շրջանառման հուն: Փաստորեն տեղի է ունենում արյան վերաբաշխում, որպեսզի օրգանիզմը կարողանա ի հաշիվ ծայրամասային (պերիֆերիկ) արյունամատակարարման նվազման և արյունատար անոթի տրամաչափի փոքրացման ապահովել գլխուղեղի և սրտի սնուցումը, ինչը նպաստում է շրջանառող արյան ծավալի կարգավորմանը:

Օրգանիզմն ի վիճակի է արյան կենտրոնացմամբ համակշռելու կորցրած արյան 20 %-ը: Ցնցակաթվածի բարձր կլինիկական աստիճանի ծանրության և արյունահոսության շարունակման դեպքում օրգանիզմը գործադրում է երկրորդ մակարդակի պաշտպանական մեխանիզմը, ինչը նպատակաուղղված է արյան շրջանառության համակշռմանը և արտահայտվում է հաճախասրտության ձևով: Թթվածնային անբավարարության համակշռումը պայմանավորված է թոքերում արյան շրջանառության խանգարմամբ, ինչը նախափականային կծկանքի հետևանք է: Թոքերում արյան շրջանառության դանդաղեցման պատճառով աճում է թթվածնով էրիտրոցիտների հարստացման ժամանակահատվածը: Վերը նշված պաշտպանական համակշռիչ մեխանիզմները գործում են վնասմանը հաջորդող առաջին ժամերին: Այս ախտաբանական փոխազդեցությունն ինքնին համակշռման շրջան է և արդյունավետ կերպով գործում է 1-2-րդ աստիճանների ցնցակաթվածների կլինիկական ընթացքի ժամանակ:

Համարվում է, որ գանգուղեղային վնասվածքների պարտադիր բաղադրատարրն է առաջնային կամ երկրորդային այտուցի հետևանքով տեղի ունեցող գլխուղեղի տեղախախտումը (դիսլոկացիա), որը հանգեցնում է երկարավուն ուղեղի և ցողունի ճնշման: Այդտեղ են գտնվում միջնորդանյութային (նեյրոհումորալ) կարգավորման համակարգի բոլոր կենսականորեն կարևոր օրգանների կենտրոնները: Տվյալ խախտման հետևանքը օրգանիզմի հարմարվողական պաշտպանական համակարգի գործունեության անբավարարությունն է:

Եթե ախտածին ազդակները շարունակում են գործել, և բուժօգնությունն ուշանում է կամ լինում է անարդյունավետ, պաշտպանական հակազդումը փոխակերպվում և ընթանում է հակառակ ուղղությամբ՝ դառնալով ախտաբանական: Դա էլ հանգեցնում է վնասվածքային ցնցակաթվածի ախտածնության աճման, և սկսվում է ապահամակշռման շրջանը: Մանր անոթների տարածուն և երկարատև կծկման հետևանքով միկրոշրջանառման հունում զարգանում է արյան շրջանառության խանգարում, որը հանգեցնում է տարածուն թթվածնային անբավարարության և բջիջների ախտահարման: Այս գլխավոր գործոնը դինամիկայում նպաստում է 3-րդ աստիճանի ծանրության ցնցակաթվածի կլինիկական դրսևորմանը: Թթվածնի հարաճուն պակասի հետևանքով խանգարվում է արյան փոխադրական ֆունկցիան, ինչը ուղեկցվում է բջիջներում էներգիայի հիմնական փոխադրողի՝ ադենոզին եռֆոսֆատի մակարդակի նվազմամբ: Դա հանգեցնում է էներգետիկ պակասուրդի (անաերոբ գլիկոլիզի) առաջացման: Բջիջների կառուցվածքախախտման և էներգիայի պակասուրդի հետևանքով դադարում է գործել K-Na-պոմպը՝ հանգեցնելով այտուցի առաջացման ու բջջաթաղանթի քայքայման, ինչի հետևանքով բջիջները մահանում են:

Լիզոսոմային թաղանթի քայքայման հետևանքով ազատվում և արյան մեջ են թափանցում լիզոսոմային ֆերմենտները, որոնք ակտիվացնում են վազոակտիվ պեպտիդների (հիստամին և բրադիկինին) կազմավորումը: Այդ պեպտիդները, անաերոբ նյութափոխանակության հետևանքով առաջացած նյութերի հետ, նպաստում են նախափականային սեղմամկանների կայուն կաթվածահարմանը, ինչի պատճառով ընդհանուր ծայրամասային հակադիմադրությունը կտրուկ կերպով նվազում է, և զարկերակային ճնշման անկումը դառնում է անկառավարելի, և եթե այն դառնում է սնդիկի սյան 70 մմ-ից ցածր, ապա առաջանում է սուր երիկամային անբավարարություն: Միկրոշրջանառության հունում արյան շրջանառության խանգարման ուժգնացումը հանգեցնում է ներանոթային տարածուն մակարդման (ՆՏՄ) համախտանիշի զարգացման, որը վաղ շրջանում համարվում է պաշտպանական հակազդում (արյունահոսության դադարեցմանը նպատակաուղղված), իսկ ախտաբանական կենսընթացի զարգացման հետագա փուլերում ՆՏՄ-ն դառնում է թոքերում, երիկամներում, սրտում և այլ օրգաններում՝ միկրոմակարդուկների առաջացման (միկրոթրոմբոլիզացիա) պատճառ և ուղեկցվում է այդ օրգանների գործառութախախտմամբ (դիսֆունկցիա): 1-2-րդ աստիճանների ՆՏՄ համախտանիշի հետագա զարգացումը դառնում է ֆիբրինոլիզի և արյունահոսության պատճառ՝ հանգեցնելով 3-4-րդ աստիճանի ՆՏՄ համախտանիշի զարգացման, կենսականորեն կարևոր օրգանների գործառութախախտման: 3-րդ աստիճանի վնասվածքային ցնցակաթվածի դեպքում հրատապ վերակենդանացման միջոցառումների կազմակերպումը պետք է լինի ճիշտ և ժամանակին, ինչը արդյունավետության գրավականն է: Այս փուլում շտապ բուժօգնության կազմակերպումը պայմանավորված է ժամանակային գործոնով, այսինքն՝ գործում է ժամանակի ոսկե կանոնը:

Վնասվածքի ծանր կլինիկական ընթացքի ժամանակ բուժօգնությունն արդյունավետ է միայն վնասվածքին հաջորդած առաջին ժամերին ցուցաբերվելու դեպքում, երբ պետք է ձեռնարկվեն նախահոսպիտալային վերակենդանացման, հակացնցակաթվածային միջոցառումներ, և տուժածները պետք է տարահանվեն ստացիոնար: Դրա իմաստն այն է, որ 3-րդ աստիճանի վնասվածքային ցնցակաթվածի ժամանակ առաջանում է բազմաօրգանային անբավարարություն, ինչը հանգեցնում է օրգան-համակարգերի՝ գործունեության կրիտիկական մակարդակի խանգարման, ուստի և դրանք այլևս ի վիճակի չեն լինում ապահովելու օրգանիզմի բնականոն կենսագործունեությունը:

Որոշ դեպքերում շատ բարձր կազմակերպվածություն ու հագեցվածություն ունեցող մասնագիտական կենտրոններում հնարավոր է լինում վերակենդանացման և բուժական միջոցառումների արդյունավետ կազմակերպմամբ հաղթահարել բազմաօրգանային անբավարարությունը: Կենսականորեն կարևոր օրգանների գործառությունը հնարավոր է պահպանել միայն բարդ թանկարժեք տեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ, արհեստական շնչառության 3-4-րդ սերունդների ապարատներով, որոնք օժտված են արտաքին շնչառության ապահովման բազմաթիվ հնարավորություններով, որոնք են՝ բազմակի օգտագործման ֆիբրոբրոնխադիտակները, մեծ ծավալով արյան հագեցումը թթվածնով (օքսիգենացում), արտամարմնային թունազերծում (էքստրակորպորալ դետոքսիկացիա), արյունազտում (հեմոֆիլտրացիա): Նույնիսկ վերակենդանացման միջոցառումների արդյունավետ կազմակերպման և բարեհաջող կատարման դեպքում բազմաօրգանային անբավարարությունը մի շարք դեպքերում հանգեցնում է լուրջ բարդությունների, ինչպիսիք են՝ հաճախադեպ ճարպային և մակարդուկային խցանումները (թրոմբոէմբոլիա), թոքաբորբերը, աղեստամոքսային ուղու արյունահոսությունները, տարբեր բնույթի և տեղակայման տեղային ու տարածված աերոբ ու անաերոբ վերքային վարակները:

Հարկ ենք համարում նշել, որ բազմաօրգանային անբավարարությամբ ուղեկցվող բարդությունների առաջացման պարագայում, մոտ 40 % դեպքում մոտակա ելքը լինում է նեխավարակումը (սեպսիս), ընդսմին նեխավարակման 30 %-ը, ծանր նեխավարակման 60 %-ը և նեխավարակային ցնցակաթվածի 90 %-ը ունենում են մահացու ելք: Միևնույն ժամանակ, մասնագետների (ռեանիմատոլոգ-անեսթեզիոլոգներ, վիրաբույժներ, նեղ մասնագետներ) բարձր մակարդակի պատրաստականության և քրտնաջան աշխատանքի, բուժման արդի մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ հնարավոր է լինում 30-40 % դեպքերում պահպանել բազմաօրգանային անբավարարությամբ ուղեկցվող վնասվածքներով վիրավորների կյանքը: Ընդսմին որքան շուտ վիրավորը նախահոսպիտալային բուժտարահանման փուլում ստանա փուլային բուժօգնություն կամ հակացնցակաթվածային միջոցառումները կազմակերպվեն մասնագիտացված կենտրոններում, վիրավորների կյանքի պահպանման հավանականությունն կաճի: Թեև զուտ ձևական տեսակետից այդ խմբի վիրավորները դուրս են բերվում ցնցակաթվածային

վիճակից, սակայն դա ամենևին չի նշանակում, թե նրանք ապաքինվում են: 3-րդ աստիճանի ցնցակաթվածային վիճակից դուրս բերված վիրավորների 70 %-ը բուժտարահանման հետագա փուլերում ձեռք է բերում ծանր բարդություններ, որոնց բուժումը հաճախ ավելի դժվար է և, նույնիսկ անհնար, քան նրանց ցնցակաթվածի վիճակից դուրս բերելը: Այս առումով ծանր կամ ծայրաստիճան ծանր վնասվածքներով վիրավորներին 3-րդ աստիճանի վնասվածքային ցնցակաթվածի վիճակից դուրսբերումը համարվում է միայն առաջին փուլի բուժման սկիզբ: Հետագայում այդ վիրավորների տարբեր օրգան-համակարգերում ձևավորվում են կայուն մնացորդային փոփոխություններ, որոնք շատ հաճախ հանգեցնում են հաշմանդամության:

Վերը շարադրվածի և փուլային բուժօգնության կազմակերպման մեր փորձի վերլուծության հիման վրա կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

- վնասվածքային ցնցակաթվածի ժամանակ պահանջվում է հնարավորինս արագ ցուցաբերել համապատասխան բուժօգնություն՝ նպատակաուղղված կենսականորեն կարևոր օրգաններում զարգացող բարդությունների և դրանց անվերադարձ վտանգավոր հետևանքների կանխմանը,
- վիրաբուժական օգնությունը կարող է արդյունավետ լինել վնասվածքի միայն պատեհաժամ ու ճիշտ ախտորոշման, տեղակայման բնույթի, համակողմանի ծանրության ընթացքի գնահատման պարագայում: Ուստի անհրաժեշտ է ձեռնարկել նպատակային տարբերակված ախտորոշումային միջոցառումներ, ինչը բժշկին հնարավորություն է տալիս հայտնաբերելու ցնցակաթվածի առաջացման պատճառը,
- հակացնցակաթվածային միջոցառումների վիրաբուժական ակտիվությունը ուշադրության կենտրոնում է մնում, իսկ ահա այն դասական թեզը, թե սկզբում պետք է վիրավորին դուրս բերել ցնցակաթվածային վիճակից, ապա նոր վիրահատել, մղվում է հետին պլան: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ շատ կարևոր է առաջագծում մեծացնել հակացնցակաթվածային ու վիրաբուժական օգնության հնարավորությունները (այս վիրաբուժական մոտեցումը ստացել է «վիրաբուժական վերակենդանացում» անվանումը),
- տվյալ խնդիրը տարբեր երկրներում լուծվում է տարբեր կերպ՝ ըստ նրանց հնարավորությունների, որոշ դեպքերում առաջնություն է տրվում տարահանման համար օդային փոխադրամիջոցների կիրառմանը, երբեմն էլ առաջագիծ են ուղարկվում համապատասխան ուժեղացված խմբեր:

Այսպես. զարգացող պետությունների դեպքում ռազմաբժշկական օգնությունն արդյունավետ է համարվում, եթե հնարավոր է լինում այդ խնդիրները լուծել վիրավորների վաղ բուժտարահանման առաջին օղակներում, 1-2-րդ աստիճանի վնասվածքային ցնցակաթվածի համակշռման շրջանում: Մինչդեռ 3-րդ աստիճանի դեպքում՝ սկսվող ապահամակշռման շրջանում,

դրա արդյունավետությունը բավականաչափ նվազում է, և եթե նույնիսկ խնդիրը հաջողվում է լուծել, այդուհանդերձ հետագայում առաջանում են մի շարք կայուն բարդություններ, իսկ վնասվածքային ցնցակաթվածի վերջնաժամկետ վիճակներում բուժումը դառնում է գրեթե անհնար:

Ըստ այդմ ձևակերպենք առաջարկությունները.

- գերակա խնդիր համարել վիրաբուժական օգնության անհապաղ կազմակերպումը միաժամանակ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգի և վիրաբույժի ներգրավմամբ,
- վիրաբուժական օգնությունը կազմակերպել ԱԲՁ-ների, ԱԲԳ-ների, ԲՀՈՒՁ-ների, ԿՀ-ների ուժերով՝ պատերազմի ժամանակ վիրաբուժական նեղ մասնագիտական խմբերով (անգիո-, թորակալ, նյարդավիրաբուժական, ուռոլոգիական), դրանց համալրմամբ, որոնք կունենան բուժօգնությունը տեղում կազմակերպելու լայն հնարավորություններ:

Թվարկված միջոցառումները կնպաստեն բուժման բարեհաջող ելքի ապահովմանը: Տվյալ մոտեցումների գործնական ներդրումը հնարավորություն կտա վիրավորների մի զգալի մասի կյանքը պահպանելու և, նրանց շարք վերադարձնելու:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ա. Ս. Գալստյան,* Վերջույթների հրազենային օստեոմիելիտների կանխարգելումը և բուժումը տեղային պատերազմների ժամանակ ղարաբաղյան հակամարտության օրինակով: Ատենախոսություն: Ե., 2013, էջ 34–46:
2. *Ա. Ք. Զարգյան, Ռ. Ա. Գրիգորյան,* Սահմանային վիճակներ: Վնասվածքային շոկ: «Ռազմադաշտային վիրաբուժություն»: Ե., 2000:
3. *Ա. Վ. Նազարյան,* Հարձակողական և պաշտպանական մարտական գործողությունների բուժապահովման նպատակով որակավորված ստորաբաժանման կատարելագործման առանձնահատկությունների մասին: «Տեսական և կլինիկական բժշկության հարցեր» գիտագործնական հանդես, 2014, հմ. 1 (87):
4. *С. В. Гаврилин, В. Х. Самандаров.* Методы и средства обезболивания на этапах медицинской эвакуации. Анестезиологическая и реаниматологическая помощь раненым. «Военно-полевая хирургия». Под ред. Е. К. Гуманенко. М., 2013.
5. *Е. К. Гуманенко, В. В. Бояринцев, Т. Ю. Супрун, В. В. Суворов.* Объективная оценка тяжести боевой хирургической травмы. «Военно-полевая хирургия». Под ред. Е. К. Гуманенко, М., 2013.
6. *Е. К. Гуманенко, И. А. Ерюхин.* Травматический шок и травматическая болезнь. «Военно-полевая хирургия». Под ред. Е. К. Гуманенко. М., 2013.
7. *Е. К. Гуманенко, И. М. Самохвалов, В. В. Бояринцев.* Боевая хирургическая патология. Структура санитарных потерь хирургического профиля. «Военно-полевая хирургия». Под ред. Е. К. Гуманенко. М., 2013.
8. «Указания по военно-полевой хирургии», г. 6: «Травматический шок». М., 2000.
9. «Хирургические болезни», г. I: «Синдром системного ответа на воспаление». Под ред. М. И. Кузина. М., 2006.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Գ. Կ. ԱԴԱՄՅԱՆ, բ/ծ մայոր, բժշկական գիտությունների թեկնածու,
ՀՀ Ոստիկանության բուժվարչության բաժնի պետ

Իրադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես նախկին ԽՍՀՄ-ում, այնպես էլ գործնականում բոլոր հետխորհրդային հանրապետություններում ուժային գերատեսչությունների, այդ թվում՝ Ոստիկանության, անձնակազմի առողջության և բուժապահովման վիճակը առավել քիչ ուսումնասիրվածներից է[1]:

Մեծ թվով հետազոտողների կարծիքով Ոստիկանության ոլորտում գոյություն ունեն այնպիսի գործոններ, որոնք բացասաբար են ազդում աշխատողների առողջության վրա[2]: Այդ գործոններից են ոչ նորմավորված աշխատանքային օրը, հակահասարակական տարրերի հետ մշտական շփումը, հանցագործությունների կանխման գործում հոգեկան և ֆիզիկական ուժերը լրիվ ներդրելու անհրաժեշտությունը, որոնք նվազեցնում են օրգանիզմի ֆունկցիոնալ ռեզերվը, խանգարում են աշխատողների ծառայողական պարտականությունների լիարժեք կատարմանը, հաճախակի հանգեցնում են ժամանակավոր անաշխատունակության:

Մեր սույն հետազոտության առարկան էր ՀՀ Ոստիկանության բուժվարչության պոլիկլինիկայի առանձին բաժանմունքների գործունեությունը:

Ոստիկանության աշխատողների՝ որպես ուսումնասիրության օբյեկտի ընտրությունը պայմանավորված է մի շարք պատճառներով.

- նրանք ըստ սոցիալ-բժշկական ցուցանիշների կազմում են ՀՀ բնակչության առանձին հատված և զբաղեցնում են մի առանձնահատուկ դիրք:
- Ոստիկանությունն ունի առողջապահության իր գերատեսչական մար-

---

[1] Տես *Т. Ю. Буданова.* Роль психологических факторов в регуляции служебного поведения сотрудников ОВД. «Психопедагогика в правоохранительных органах», 2012, № 2 (49):

[2] Տես, օրինակ, *Л. И. Исаева.* Клинико - социальное исследование функционального состояния сотрудников органов внутренних дел и разработка комплекса лечебно - оздоровительных мероприятий. Диссертация кандидата медицинских наук. М., 2009; *А. М. Ксенофонтов, И. И. Беликов, И. А. Новикова.* Психологическая адаптация сотрудников милиции в стрессогенных условиях служебной деятельности. «Психопедагогика в правоохранительных органах», 2010, № 1 (40); *Д. Г. Бочаров.* Отдельные вопросы медицинского обеспечения сотрудников органов внутренних дел. «Экономический вестник правоохранительных органов», 2010, № 6; *А. В. Ганишев, А. В. Коньков.* Методологические аспекты военно-врачебной экспертизы в органах внутренних дел Российской Федерации. «Медицинский вестник МВД», 2015, № 3:

մինները՝ սկսած պոլիկլինիկայից մինչև հոսպիտալ և բժշկական հանձնաժողով, ինչը միանգամայն համապատասխանում է ՀՀ Ոստիկանության աշխատողների բուժապահովման «համակարգ և դրա գործունեություն» հասկացություններին:

- Ոստիկանության յուրաքանչյուր աշխատող, ինչպես նաև առանձին կառուցվածքային միավորներ կազմող նրանց համախումբը կարող են, մի կողմից, դառնալ հետազոտության համար տեղեկութավիճակագրական աղբյուր, մյուս կողմից՝ հանդես գալ որպես տարատեսակ տարաշարժերի համար ռեսուրս:

Ստացված տվյալների առադրման, ինչպես նաև դրանց արժանահավատության գնահատման համար կիրառվել են վիճակագրական վերլուծության ընդունված մեթոդիկաներ:

ՀՀ Ոստիկանության բուժվարչության պոլիկլինիկան ունի թերապևտիկ, նյարդաբանական, վիրաբուժական, ատամնաբուժական, ֆիզիոթերապևտիկ բաժանմունքներ, վարակաբանի, գինեկոլոգի, մանկաբույժի, ակնաբույժի կաբինետներ, ֆունկցիոնալ ախտորոշման բաժանմունք:

2011–2015 թթ. ՀՀ Ոստիկանության գործունեությունը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

2011–2015 ԹԹ. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ԴԻՄԵԼՈՒԹՅՈՒՆԸ (1000 աշխատողի հաշվով)

Հիվանդությունների դասի անվանում	Հետազոտության տարիներ (P±m)				
	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.
թերապևտիկ	255,4±3,7	253,1±3,72	247,5±3,67	250,3±3,78	273,6±4,0*
վիրաբուժական	233,3±3,59	244,4±3,67*	252,9±3,69*	260,2±3,83*	262,1±3,95*
ատամնաբուժական	53,8±1,91	54,2±1,93	50,7±1,86	59,6±2,07*	60,0±2,13*
ընդամենը	542,4±4,23	551,6±4,25*	551.0±4.23*	570,1±4,32*	595,8±4,41*

Սույն աղյուսակում բերված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2011 թ. համեմատությամբ՝

- թերապևտիկ հիվանդություններով դիմելությունը** 2012–2014 թթ. ուներ անկման միտում, սակայն 2015 թ. հավաստիորեն աճել է՝ հասնելով 273,6±4,0-ի (2011 թ.՝ 255,4±3,7),
- սկսած 2012 թվականից վիրաբուժական հիվանդություններով դիմելությունը հավաստիորեն աճում է,
- սկսած 2012 թվականից ատամնաբուժական պրոֆիլի հիվանդություններով դիմելությունը նույնպես հավաստիորեն աճում է:

* *Ծանոթագրություն.* 2011 թ. համեմատությամբ հավաստիությունը յուրաքանչյուր տողում կազմում է $p<0,05$:

** Հայերենի բառակազմական կանոններին հակասող սկզբունքով կազմված «դիմելիություն» բառի փոխարեն մենք օգտագործում ենք «դիմելություն» բառը (տես *Ս. Մալխասեանց,* Հայերէն բացատրական բառարան: Ե., 1944, էջ 520):–*Խմբ.:*

Ներկայացված տվյալների ընդհանրացմամբ կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

- կատարված հետազոտության ժամանակահատվածում պոլիկլինիկա դիմելությունը կա՛մ կայուն է (թերապևտիկ հիվանդությունների դեպքում 2015 թ. աճմամբ), կա՛մ հավաստիորեն աճում է (վիրաբուժական և ատամնաբուժական հիվանդությունների դեպքում),
- դիմելության կառուցվածքն ընդհանուր առմամբ հաստատուն է, առանց որևէ առանձնահատկության, ինչը կարող է լինել այն բանի վկայություն, որ, մի կողմից, դիմելության ձևավորումը գտնվել է որոշակի իմաստով այսպես կոչված լճացման վիճակում, իսկ մյուս կողմից՝ անհրաժեշտ է անցնել պոլիկլինիկայի աշխատանքի նոր մոդելի կամ վերակառուցել նրա գործունեությունը՝ ինքնուրույնության ամրապնդմամբ և հետագա զարգացման ուղղությունների ընտրության գործում պատասխանատվության մեծացմամբ:

Աղյուսակ 2-ում բերված է 2011–2015 թթ. վիրաբուժական պրոֆիլի հիվանդություններով ՀՀ Ոստիկանության պոլիկլինիկա դիմելությունը.

Աղյուսակ 2

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԴԻՄԵԼՈՒԹՅՈՒՆԸ
(1000 աշխատակցի հաշվով)

Հիվանդությունների խումբ	Հետազոտության տարիները (P±m)				
	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.
բուն վիրաբուժական	58,0±1,98	74,3±2,24*	72,4±2,2*	84,9±2,43*	71,3±2,31*
վնասվածքաբանական	6,8±0,70	7,5±0,74	5,5±0,63	5,8±0,66	7,7±0,78
ուրոլոգիական	4,7±0,58	2,0±0,38*	2,2±0,40*	2,4±0,42*	2,8±0,48*
ակնաբանական	59,0±2,0	74,3±2,24*	76,9±2,26*	91,1±2,51*	81,8±2,46*
քիթ-կոկորդ-ականջ հիվանդություններ	56,9±1,97	81,9±2,34*	81,3±2,32*	63,0±2,12*	68,9±2,27*
գինեկոլոգիական	6,5±0,68	9,1±0,81*	11,2±0,89*	8,9±0,82*	14,0±1,06*
ուռուցքաբանական	4,2±0,55	2,6±0,44*	3,5±0,50	4,3±0,57	7,6±0,78*

Ներկայացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2011 թ. համեմատությամբ պոլիկլինիկա դիմելության ինտենսիվության ցուցանիշը՝

